



# Զիաց Մեր Հանապազորդ

ՀՈՒԼԻՍ • ՕԳՈՍՏՈՍ • ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019



Հիսուսն ասաց. «Դու Պետրոս (վե՛մ) ես, – այդ վե-  
մի վրա իմ եկեղեցին կկառուցեմ»:

ՄԱՏԹԵՆՍ 16.18

Հարգելի՛ բարեկամ,  
Սույն գրքույկում Աստվածաշունչ գրքի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած ար-ելահայերեն թարգմանությունից (2007), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միության – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած Նոր Կտակարանից (2003):

## **Շապիկի առաջին էջին՝ Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի, Գյումրի, Հայաստան**

Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում է: Այն կառուցվել է 1860-1873 թվականներին: Շինության ճարտարապետն է Թադևոս Անդիկյանը: Եկեղեցին կառուցված է Անիի Մայր Տաճարի նմանությամբ:

1882-ին Չիթողյանների միջոցներով եկեղեցու հյուսիսային ճակատին կից կառուցվել է փոքրիկ գավիթ: Եկեղեցուն կից գործել է հայկական ծխական դպրոց, որի շենքը քանդվել է խորհրդային իշխանության տարիներին:

1932-ին փորձել են զանգակատունը քանդել տանկերով, իսկ հետո պայթեցնել: 1960-ական թվականներին զանգակատունը վերակառուցվել է: Խորհրդային իշխանության տարիներին եկեղեցին ծառայել է որպես ֆիլիհարմոնիայի դահլիճ: Եկեղեցին, որ դիմացել էր 1926-ի կործանարար երկրաշարժին, անգորեղավ 1988-ի աղետալի երկրաշարժի դիմաց, որի հետեւանքով եկեղեցու շենքից մնաց միայն մեկ պատ: Երկար ժամանակ եկեղեցին վերականգնելու արտոնություն չէր տրվում, որովհետև ուզում էին այն վերածել երկրաշարժի հուշարձան-կոթողի: 1995-ին վերջապես վերականգնելու թույլտվություն եղավ եւ վերանորոգման աշխատանքներն սկսվեցին՝ հնարավորինս օգտագործելով եկեղեցու հին քարերը՝ կառույցին տալով նախնական տեսքը: Այժմ Գյումրիի Սբ.Ամենափրկիչ եկեղեցին վերականգնման փուլում է: ([www.wikipedia.org](http://www.wikipedia.org))

**Լուսանկարիչ՝ Լուիզա Ճանպազյան  
(Սեպտեմբեր 2018)  
Միացյալ Նահանգներ**



## Ձեռք մեր հանապազորդ

ՀՈՒԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան  
ընթերցումներ և հոգևոր խորհրդածուլթյուններ

**Լ ՏԱՐԻ**

**Գ ԵՌԱՄՍՅԱԿ**

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում  
Radio Bible Class ընկերությունը, որի թույլտվությամբ  
Our Daily Bread գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի  
խորհրդածուլթյունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: [amaa@amaa.org](mailto:amaa@amaa.org), Website: [www.amaa.org](http://www.amaa.org)

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլեկտրոնային՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)

## Հիմա քաղցած ես

**Թ**ովմասը գիտեր՝ ինչ էր անելու: Հնդիկ աղքատ ընտանիքում ծնված և ամերիկացիների կողմից որդեգրված լինելով՝ նա վերադարձավ Հնդկաստան և տեսավ իր հայրենի քաղաքի մանուկների ահռելի կարիքները: Եվ որոշեց օգնել նրանց: Նա ծրագրեց Միացյալ Նահանգներում ուսումն ավարտելուց հետո շատ փող տնտեսել և հետագայում վերադառնալ Հնդկաստան:

Ապա տեսնելով մի փոքրիկ աղջկա, որն իր մորն ասում էր. «Մայրիկ, ես հիմա քաղցած եմ», նա հիշեց Հակ. 2.14-18 համարները, որտեղ առաքյալը հարցնում է. «Ի՞նչ է օգուտը, եղբայրներս, եթե մեկն ասի, թե հավատ ունի, բայց գործ չունենա»: Նա հիշեց նաև իր մանկութունը, երբ ինքն էլ էր սոված և աղքատություն էր ուտելիք փնտրում: Հասկացավ, որ չի կարող տարիներ սպասել չքավորներին օգնելու համար և որոշեց. «Հիմա՛ եմ սկսելու»: Այժմ նրա հիմնած որբանոցում կան 50 մանուկներ, որոնք լավ հոգատարություն, առատ սնունդ են ստանում, սովորում են Տեր Հիսուսի մասին և ուսում են ստանում: Որովհետև մի մարդ չհետաձգեց այն, ինչ Աստված իրենից պահանջում էր անել: Հակոբոսի պատգամը մեզ նույնպես հարմար է: Հիսուսի հանդեպ մեր ունեցած հավատքը մեզ առավելություն է տալիս. Իր հետ հարաբերություն, առատ կյանք և ապագայի հույս: Սակայն ի՞նչ օգուտ կլինի ուրիշներին, եթե մեր օգնության ձեռքը չենք մեկնում և օգնում նրանց, որոնք մեր օգնության կարիքն ունեն:

### Կարդա՛

#### Հակոբոս 2.14-18

Ի՞նչ է օգուտը, եղբայրներս, եթե մեկն ասի, թե հավատ ունի, բայց գործ չունենա: Հակ. 2.14

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, քայլերս ուղղի՛ր դեպի այն արարքները, որ Դու ուզում ես, որ անեն ուրիշներին օգնելու համար: Ծնորհակալ եմ, որ առիթ ես շնորհում մաս կազմելու աշխարհի վրա Քո կատարած գործի: Ամեն:

**Նայի՛ր շուրջդ ու տե՛ս, թե որ կարիքներն են քո սրտի հետ խոսում: Արա՛, ինչ կարող ես անել:**

## Ինչպե՞ս գտնել խաղաղություն

**Ե**րբ ընկերոջս հետ ճաշում էի, ինձ հարցրեց. «Ի՞նչ ես մտածում խաղաղության մասին»: «Խաղաղություն,- զարմացա ես: -Վստահ չեմ, ինչու՞ ես հարցնում»: Պատասխանեց. «Պաշտամունքի ընթացքում նկատեցի, որ ոտքդ էիր շարժում, մտածեցի, թե ինչ-որ բանից նյարդայնացած ես: Գիտե՞ս, որ Աստված խաղաղություն է տալիս Իրեն սիրողներին»:

Այդ օրը ընկերոջս հարցից մի քիչ նեղացա: Բայց դա առիթ դարձավ, որ սկսեմ Աստվածաշունչը սերտելու մի ուղևորություն, որպեսզի տեսնեմ, թե Աստծո ժողովուրդն իր նեղությունների մեջ ինչպե՞ս ընդունեց խաղաղության այդ պարզևր: Կարդացի Պողոսի նամակը կողոսացիներին և խորհեցի առաքյալի տված «Աստծո խաղաղությունը իշխի ձեր սրտերում» պատգամի մասին (Կող. 3.15):

Պողոսը գրում էր մի եկեղեցու, որտեղ բնավ չէր եղել, բայց նրա մասին լսել էր իր բարեկամ Եպափրասից և մտահոգ էր, որովհետև նրանք սուտ վարդապետությունների պատճառով կորցնում էին Քրիստոսի տված խաղաղությունը: Սակայն հանդիմանելու փոխարեն նա հորդորում է վստահել Հիսուսին, որ իրենց վստահություն և հույս տա (Հմ.15): Բոլորս էլ կունենանք պահեր, երբ պիտի ընտրություն կատարենք՝ մեր սրտերում ընդունել կամ մերժել Քրիստոսի խաղաղությունը: Բայց երբ Իրենից խնդրենք, որ մեր մեջ բնակվի, Նա քնքշությամբ կվերացնի մեզ ճնշող նեղություններն ու մտահոգությունները՝ վստահ լինելով, որ նաև Իր սերն է տալիս մեզ:

**Աղոթք** - Տե՛ր Հիսուս, մեզ տալիս ես ամեն մտքից վեր եղող խաղաղություն: Օգնի՛ր, որ Քո խաղաղությունն ընդունեմ իմ կյանքի բոլոր ասպարեզներում: Ամեն:

**Նեղություններ ու ճնշումներ՞ ու ունես:**  
**Ամեն ինչում Հիսուսից խաղաղություն խնդրի՛ր:**

**Կարդա՛ր**  
**Կող. 3.12-17**

Եվ Աստծու խաղաղությունը իշխի ձեր սրտերում, որի մեջ և կանչվեցիք: Կող.3.15

## Անկեղծ եղի՛ր Աստծո հետ

**Ե**րեք տարեկան թոռնիկիս օրը լավ չսկսվեց: Նա չէր գտնում իր նախընտրած շապիկը, իսկ իր ուզած կոշիկները շատ տաք էին: Հուզված ու բարկացած՝ նա գանգատվեց տատիկին ու լաց եղավ: Հարցրի. «Ինչու՞ ես տխուր»: Մի քիչ խոսեցինք: Երբ արդեն հանդարտվել էր, հարցրի. «Տատիկի հանդեպ բարի՞ եղար»: Մտածկոտ նայեց կոշիկներին ու պատասխանեց. «Ո՛չ, չար էի: Ներողություն»:

Մի րոտս ճմլվեց: Զուրացավ իր սխալը, այլ անկեղծ եղավ: Եվ միասին աղոթեցինք Հիսուսին և խնդրեցինք, որ ների մեզ, երբ սխալ ենք գործում և օգնի՝ ավելի լավը լինել:

Ես այուև մարդարեություն 1-ին գլխում Աստված հանդիմանում է իր ժողովրդին՝ կատարած սխալների համար: Դատարաններում կաշառք ու անարդարություն կար, որբերն ու այրիներն էին անիրավված: Ու Աստված դարձյալ ողորմությամբ է պատասխանում՝ խնդրելով, որ իր ժողովուրդը խոստովանի և դեպի Ինքը դառնա. «Եկե՛ք խոսենք իրար հետ, - ասում է Տերը. - եթե ձեր մեղքերը արյան պես կարմիր են, ապա ես ձյան պես ճերմակ կզարձնեմ» (Ես. 1.18): Աստված ուզում է, որ մենք անկեղծորեն խոստովանենք մեր մեղքերը: Նա սիրո ներումով է ընդունում մեր անկեղծությունն ու ապաշխարությունը. «Եթե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է ու արդար, որ մեր մեղքերը ների մեզ և մաքրի մեզ ամեն անիրավությունից» (Ա.Հովհ. 1.9): Որովհետև մեր Աստվածը ողորմած է, ուստի նորից սկսելու կարելիությունը միշտ կա:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր, որ մեղքից հեռանամ ու քեզ հետ մի նոր սկիզբ ունենամ: Ամեն:

Կարդա՛ր  
Եսայի 1.12-18

Մեղքերս քեզ ցույց կտամ, և անօրենություննս չեմ ծածկի քեզմից: Սաղմ. 31.5

**Անկեղծ եղի՛ր Աստծո հետ քո մեղքերի համար ու Նրան անկեղծորեն խոստովանի՛ր հանցանքներից:**

## Յուրաքանչյուր պատմությունն իր անունն է շնչում

Հրճվանքով բացեցի մանուկների պատկերազարդ Աստվածաշունչը և սկսեցի կարդալ թոռնիկիս համար: Խորասուզվեցինք դրա մեջ, երբ արձակ գրություններ պարզվեց Աստծո սիրո ու նախատեսության պատմությունը: Մեր կարդացած տեղում էջանիչ դնելով՝ շրջեցի գիրքն ու նորից կարդացի վերնագիրը: Հիսուսի պատմության Սուրբ գիրքը - յուրաքանչյուր պատմությունն իր անունն է շնչում:

Երբեմն դժվար է հասկանալ Աստվածաշունչը, մասնավորապես Հին Կտակարանը: Ինչու՞ Աստծուն չճանաչողները թվում է, թե հաղթում են հենց Աստծո ժողովրդին: Ինչպե՞ս է Աստված թույլ տալիս նման դժգոհություն, երբ հայտնի են իր մաքուր նկարագիրն ու բարի ծրագրերը:

**Կարդա՛ր**  
**Ղուկաս 24.17-27**  
 Եվ սկսելով Մովսեսից ու բոլոր մարգարեներից՝ նրանց բացատրում էր, ինչ որ գրքերի մեջ իր մասին գրված էր: Ղուկ. 24.27

Հարություն առնելուց հետո Էմմաուսի ճանապարհին Հիսուսը հանդիպեց աշակերտներից երկուսին, որոնք, չճանաչելով իրեն, հուսախաբված տանջվում էին իրենց Մեսիայի մահվան համար (Ղուկ. 24.19-24): Նրանք «հույս ունեին, թե Նա էր, որ Իսրայելը փրկելու էր» (Հմ.21): Ապա Ղուկասն արձանագրում է, թե ինչպես Հիսուսը նրանց վստահեցրեց, որ «սկսելով Մովսեսից ու բոլոր մարգարեներից՝ նրանց բացատրում էր, ինչ որ գրքերի մեջ իր մասին գրված էր» (Հմ.27):

Յուրաքանչյուր պատմությունն իր անունն է շնչում: Նույնիսկ դժվար համարված պատմությունները, որովհետև դրանք հայտնում են մեր աշխարհի կոտրվածությունն ու Փրկչի կարիքը:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, օգնի՛ր՝ կարողանամ տեսնել, որ Դու Աստվածաշնչի յուրաքանչյուր պատմությունից հետո շնչում ես Քո անունը: Ամեն:

**Աստծո փրկությունը գործնականում կերևա քո կյանքում, երբ պատրաստ լինես լսել իր ձայնը:**

## Գործադրել մեր քարոզածը

Հոգևոր հովիվ և գրող Յուլիան Պետերսոնը առիթ ունեցավ լսելու շվեյցարացի բժիշկ և հարգարժան հովվական խորհրդատու Պոլ Թուրնիեի դասախոսությունը: Պետերսոնը նախապես կարդացել էր նրա գործերը և հիացած էր բուժման նրա մոտեցմամբ, իսկ այս դասախոսությունը մեծապես տպավորեց նրան: Թվաց, թե Թուրնիեն ապրել է իր խոսածը և խոսել իր ապրածը: Նկարագրելու համար իր ունեցած փորձառությունը՝ Պետերսոնն ընտրեց «Համադրություն» բառը: «Դա լավագույն բառն է, որ կարող եմ գտնել»: Համադրություն - ոմանք այս բառով են բնութագրում «գործադրել քարոզածդ» կամ «քայլել քո ասածի համաձայն» իմաստները: Հովհաննես առաքյալը շեշտում է. եթե մեզանից մեկն «ասում է, թե լույսի մեջ է և իր եղբորն ատում է, մինչև հիմա խավարի մեջ է» (Ա Հովհ. 2.9): Իրականում մեր կյանքն ու խոսքերը ուղղակի միմյանց չեն համապատասխանում: Հովհաննեսը մի քիչ ավելի հեռուն է գնում՝ ասելով, թե այդպիսի մարդիկ «չգիտեն, թե ուր են գնում» (Հմ.11): Մեր գործերի ու խոսքերի անհամադրելիությունը նկարագրելու համար նա մեզ համարում է խավարում ման եկողներ, կույրեր:

### Կարդա՛ր Ա Հովհ. 2.7-11

Ով որ ասում է, թե լույսի մեջ է և իր եղբորն ատում է, մինչև հիմա խավարի մեջ է: Ա Հովհ. 2.9

Աստծուն մոտ ապրելով՝ մենք թույլ ենք տալիս, որ Նրա խոսքի լույսը լուսավորի մեր ճամփան, որպեսզի կույր ու խավարի մեջ չլինենք, և արդյունքը Աստվածային տեսիլքը կլինի, որը հստակություն և կենտրոնացում կտա մեր օրերին, և մեր խոսքերն ու գործերը կհամադրվեն:

**Աղոթք** - Տե՛ր, ուզում եմ ապրել մի կյանք, որտեղ խոսքերս ու գործերս կհամապատասխանեն իրար: Տկար եմ, բայց ուզում եմ օր օրի ավելի աճել: Օգնի՛ր, որ իմ մերձավորներն ու կյանքս տեսնողները Քեզ մոտենան: Ամեն:

**Թող մեր խոսքերն ու գործերը ամբողջացնեն իրար:**



## Սկսել հիմա՛

**2**017-ի վերջին ավագ քրոջս մոտ քաղցկեղ ախտորոշվեց, և **Լես** բարեկամներիս ասացի, որ **Քերոլայնի հետ հնարավորինս շատ ժամանակ եմ անցկացնելու՝ սկսելով հենց հիմա՛**: Ոմանք ասացին, թե իմ զգացումները ստացածս լուրի ազդեցությու՞ն են: Քույրս տասը ամիս անց մահացավ: Ու թեև ժամեր էի անցկացրել նրա հետ, բայց հասկացա, որ երբ սիրում ես մեկին, ժամանակը չի բավարարում այդ սիրո համար:

Պետրոս առաքյալը նորակազմ եկեղեցում Հիսուսի հետևողներին կոչ արեց. «Իրար նկատմամբ ջերմ սեր ունեցե՛ք» (Ա. Պետ. 4.8):

Նրանք հալածանքի պատճառով տառապում էին և իրենց բույրերի ու եղբայրների սիրո կարիքն ունեին: Որովհետև Աստված Իր սերն էր լցրել նրանց սրտերը, փոխադարձաբար պետք է փափագեին ուրիշներին սիրել: Նրանց սերն արտահայտվելու էր իրենց աղոթքով, հյուրասիրություններով և Աստծո ճշմարիտ պատգամի մասին Նրա զորություններով խոսելով (Հմ. 9-11): Նրանք միմյանց սիրելու էին Աստծո շնորհքի միջոցով հայթայթած ուժի համեմատ, «որպեսզի ամեն բանում Աստված փառավորվի Հիսուս Արիստոսի միջոցով» (Հմ. 11): Սա է Աստծո հզոր ծրագիրը, որը մեր միջոցով իրագործում է Իր կամքը:

Մենք ուրիշների կարիքն ունենք, նրանք էլ մեր: Ուրիշներին սիրելու համար օգտագործենք Աստծուց մեր ստացած ժամանակն ու միջոցը՝ սկսելով հենց հիմա՛:

**Աղոթք** - Երկնավոր Զայր, շնորհակալ եմ Քո տված սիրո ու բոլոր բարիքների համար: Օգնիր, որ կարողանամ սիրել ու տալ այն, ինչ կարող եմ սկսելով հիմա՛: Ամեն:

**Աստծուն ծառայելու մեջ չկա փոքր բան:**

Ֆրենսիս դը Սեյլզ

**Կարդա՛**  
**Ա Պետրոս 4.7-11**

...իրար նկատմամբ ջերմ սեր ունեցեք:  
Ա Պետ. 4.8

## Աստծո կրկնակի զորությանը

Հարավային Աֆրիկայից անտառապահ Կելմանսոնը մի հիանալի տեսարան է նկարագրում, որտեղ երկու մեղրակեր արջուկներ կռվում են վեց առյուծների հետ: Թեև քիչ էին, բայց նրանք չեն փախչում իրենցից ավելի մեծ, սարսափելի ու հզոր գիշատիչներից: Առյուծների համար դժվար չէր նրանց սպանելը, բայց տեսանելի դեպքում է, որ մեղրակերներն են հաղթանակած ու հոխորտալով հեռանում: Դավիթի ու Գողիաթի պարագան ավելի անհավանական պատմություն է ներկայացնում: Երիտասարդ, ոչ փորձառու Դավիթը դիմազրավում է փղշտացի Գողիաթին, որի «գլխին սաղավարտ կար, հագել էր պղնձից ու երկաթից լանջապանակ: Նրա գեղարդի բունը նման էր ոստայնանկների գլանի, իսկ նրա երկաթե տեզը վեց հարյուր սիկղ էր կշռում» (Ա. Թագ. 17.5-7):

Իսկ պատանի հովիվ Դավիթը որ եկավ պատերազմի դաշտ, միայն մի պարսատիկ ուներ և հաց ու պանիր՝ իր եղբայրների համար (Հմ. 17-18): Գողիաթը իսրայելցիներին իր հետ մենամարտելու մարտահրավեր նետեց, սակայն ոչ մեկը չհամարձակվեց կռվել: Պատկերացրեք զարմանքը, երբ Դավիթն առաջ եկավ ու կանգնեց Գողիաթի դիմաց: Արդյոք ո՞րն էր նրա քաջության աղբյուրը: Բոլորի համար պարզ էր, որ Գողիաթը զորեղ էր: Սակայն Դավիթը Աստծուն հավատաց ու վստահեց: Հսկայի ճակատին մեկ քար նետելը բավական էր, որ փաստվեր Դավիթի հավատի ճիշտ լինելը: Մենք էլ փորձում ենք հավատալ, թե Գողիաթը և նրա նմաններն են կռում պատմության ընթացքը: Սակայն Աստված ավելի մեծ է և իշխում է մեր կյանքերի վրա:

**Աղոթք** - Տե՛ր, երբեմն աշխարհի մեջ եղած չարն ու մեր հարցումները շատ մեծ կարող են թվալ: Ցույց տու՛ր, որ Դու ավելի մեծ ես: Օգնի՛ր, որ տեսնենք դա: Ամեն:

**Հակառակ մեր մտահոգություններին ու հարցերին՝ Աստված մեր տեսակետները փոխելու կրկնակի զորություն ունի:**

### Կարդա՛ր Ա Թագ. 17.41-50

Դու ինձ վրա ես հարձակվում սրով, գեղարդով և վահանով, իսկ ես քեզ վրա եմ հարձակվում Իսրայելի զորքի զորությունների Տիրոջ անունով: Ա. Թագ. 17.45

## Գեորիշխան միջամտություն

**Բ**արբարան 1960-ական թվականներին մեծացավ Անգլիայի կառավարության հոգատարություններ, բայց երբ դարձավ 16 տարեկան, ինքն ու իր նորածին որդի Սիմոնը անտուն մնացին: Կառավարությունն այլևս պարտավոր չէր նրա հանդեպ հոգածություն ցուցաբերել: Բարբարան օգնության համար Անգլիայի թագուհուն դիմեց, և իր նամակի պատասխանն ստացավ: Թագուհին կարեկցություններ կարգադրել էր նրան մի տուն տալ:

Անգլիայի թագուհին միջոցներ ուներ Բարբարային օգնելու: Նրա ցուցաբերած կարեկցությունը կարելի է նկատել որպես Աստծո օգնության մի փոքրիկ պատկեր: Երկնքի թագավորը մեր բոլոր կարիքները գիտե և իր գեորիշխանությամբ է գործում մեր կյանքի ծրագրերը մշակելիս: Նա ուզում է, որ իրեն մոտենանք և մեր բոլոր կարիքներն ու մտահոգություններն իրեն հայտնենք: Իսրայելցիները որպես գերի տառապում էին Եգիպտոսում: Իրենց փրկության կարիքը ներկայացրին Աստծուն: Նա լսեց և հիշեց իր խոստումը. «Աստված իր հայացքն ուղղեց իսրայելացիներին և Աստված իմացավ նրանց վիճակը» (Ել.2.25): Նա Մոսեսին ցուցմունք տվեց գերությունից հանել իր ժողովրդին և հայտարարեց, թե ևս մեկ անգամ նրանց պիտի ազատի ու տանի «մի երկիր, ուր կաթ ու մեղր է հոսում» (3.17): Մեր թագավորն ուրախ կլինի, երբ իրեն մոտենանք: Իր իմաստնությամբ կհայթայթի մեզ պետք եղածը, ո՛չ անպայման մեր փափագածը: Իր գեորիշխանության մեջ մեզ հանգիստ ու սիրո կարեկցություն կպարգևի:

**Աղոթք** - Սիրո՞ղ Աստված, շնորհակալ եմ, որ իմ կարիքների մասին կարող եմ քեզ ասել: Օգնի՛ր, որ ընդունեմ Քո ընտրած ուղին ու նախատեսություններդ: Ամեն:

**Քո կարիքները տա՛ր Աստծուն և հանգստացի՛ր  
Նրա նախատեսությամբ:**

### Կարդա՛ Ելք 3.1-9

Աստված իր հայացքն ուղղեց իսրայելացիներին և Աստված իմացավ նրանց վիճակը:  
Ելք 2.25

## ԷԼ փախչել չկա՛

**1** 983թ. հուլիսի 18-ին Միացյալ Նահանգների Օդային ուժի հարյուրապետներից մեկը անհետացավ Նյու Մեքսիկա նահանգի Ալբերքերք քաղաքից: Երեսունհինգ տարի անց իշխանությունները նրան գտան Կալիֆոռնիայում: Նյու Յորք թայմս թերթը գրում է. «Ճնշվելով իր աշխատանքից՝ նա պարզապես փախել էր»: Երեսունհինգ տարի՝ կյանքի գրեթե կեսը մտատանջությունն ու խելացորոտությունն են եղել նրա մշտական ուղեկիցները: Պետք է ընդունենք, որ ինձ էլ է ծանոթ «փախստական» լինելու վիճակը: Թեև բնավ այդպիսի փախուստներ չեմ տվել, սակայն շատ է պատահել, որ իմացել եմ՝ Աստված ուզում է, որ մի բան անեմ, հաղթահարեմ կամ խոստովանեմ, և ես չեմ կամեցել անել: Ուստի ինչ-որ իմաստով ես էլ եմ փախչում: Հովնան մարգարեն հայտնի է Նինվե քաղաքում քարոզելու՝ Աստծո տված պատվերից տառացիորեն փախուստ տալով (Հովն.1.1-3): Սակայն նրան չհաջողվեց Աստծուց փախչել: «Տերը հողմ բարձրացրեց ծովում: Մեծ փոթորիկ եղավ ծովում, և նավը խորտակվելու վտանգի մեջ էր» (Հմ.4): «Տերը խոշոր կետ ձկանը հրամայեց կուլ տալ Հովնանին: Հովնանը կետի փորի միջից աղոթեց Տեր Աստծուն, որ իր տագնապի մեջ օգնության հասնի» (2.2): Հովնանը կատարյալ մարգարե չէր: Սակայն մխիթարվում եմ նրա այս ուշադրավ պատմությանը, որովհետև հակառակ նրա կամակորոտության՝ Աստված նրան մենակ չթողեց: Տերը պատասխանեց նրա հուսահատ աղոթքին և շնորհով վերափոխեց իր դժկամ ծառային (Հմ.2), ինչպես որ մեզ է անում:

**Աղոթք** - Տեր, երբ կյանքի պայմանները դժվար են թվում, ուզում եմ փախչել: Օգնի՛ր, որ Քեզ կանչեմ ու վստահ լինեմ, որ ցանկացած պարագայում կլսես ինձ: Ամեն:

**Ուզում ես փախչե՞լ դժվարություններից: Օգնության համար դիմի՛ր Աստծուն, և ես քեզ կազատի:**

### Կարդա՛ Հովնան 2.1-10

Հովնանը կետի փորի միջից աղոթեց Տեր Աստծուն, որ իր տագնապի մեջ օգնության հասնի: Հովն.2.2

## Անտեսանելի ճշմարտություններ

«**Դիսքովեր**» թերթի խմբագիրներինց Ստեֆըն Կասսը որոշել էր ուսումնասիրել իր առօրյա կյանքի մաս կազմող մի շարք անտեսանելի բաներ: Քայլելով դեպի իր գրասենյակ՝ նա մտածեց. «Եթե հնարավոր լինել տեսնել Նյու Յորքի էմփայր Սթայթ երկնաքերի գազաթին գտնվող ռադիոյի և հեռուստատեսութայան ալեհավաքից դուրս եկող ալիքները, դա կլինե՞ր դիտարժան մի բռնկում, որը կուսավորեր ամբողջ քաղաքը»: Նա անդրադարձավ այն փաստին, որ ինքը չըջապատված էր ռադիոյի, հեռուստատեսութայան, անթել հավատարմություն կոչվող վայ-ֆայի և էլեկտրամագնիսական ցանցի շատ այլ ազդանշաններով:

Կարդա՛ր  
**Դ Թագ. 6. 8-17**

Եղիսեն աղոթք անելով՝ ասաց. «Տե՛ր, բա՛ց սպասավորիս աչքերը, որ տեսնի»: Դ Թագ. 6.17

Եղիսեի սպասավորը մի առավոտ իմացավ մեկ այլ տեսակի անտեսանելի ճշմարտության՝ իրեն չըջապատող հոգևոր աշխարհի մասին: Արթնանալով՝ նա իրեն ու իր տիրոջը գտավ ասորական բանակներով չըջապատված: Որքան որ հնարավոր էր աչքով տեսնել, քաղաքը պաշարված էր զորագնդերով, ձիերով ու մարտակառքերով (Դ. Թագ. 6.15): Սպասավորը վախեցավ, բայց Եղիսեն, վստահելով Աստծուն, տեսավ իրենց չըջապատող հրեշտակների բանակն ու ասաց իր սպասավորին. «Մի՛ վախեցիր, քանզի մեզ հետ եղողները նրանց հետ եղողներից շատ են» (Հմ.16): Ապա Տիրոջն աղոթեց՝ խնդրելով, որ նրա աչքերը բանա, որպեսզի տեսնի, որ Տերը պաշարել է իրենց թշնամիներին, և ամեն ինչ Իր ձեռքերում է (Հմ.7):

Դու անօգնական ու տկա՞ր ես զգում: Հիշի՛ր, որ ամեն բան Աստծո հսկողության ներքո է, և ինքը պայքարում է քեզ համար:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, օգնի՛ր, որ կարողանամ ամեն բանում Քեզ վստահել և քաջությամբ դիմագրավեմ յուրաքանչ-յուր դժվարություն: Ամեն:

**Մի՛ վախեցիր, քանզի Աստված մեզ հետ և մեզ համար է:**

## Ֆուտբոլը և հովիվները

**Ա**նգլիական ֆուտբոլի հետաքրքրական երևույթներից մեկը թիմի քայլերգն է, որ յուրաքանչյուր խաղի սկզբում երգում են երկրպագուները: Զարմանալի են այդ քայլերգերի տեսակներն ու բազմազանությունները: Օրինակի համար Արևմտյան Բրոմֆի Ալբիոն թիմի քայլերգը 22-րդ սաղմոսն է: Թիմի խաղադաշտի ներքին պատին երևում են այդ սաղմոսի բառերը, որոնք բոլորին հայտարարում են բարի, մեծ ու գլխավոր հովիվ հոգատարության մասին:

22-րդ սաղմոսում Դավիթն արեց իր անժամկետ հայտարարությունը, թե «Տերը իմ հովիվն է» (Հմ.1): Հետո Մատթեոս ավետարանիչն է մեզ ասում Տեր Հիսուսի մասին. «Բազմությունները տեսնելով՝ գթաց նրանց, որ հոգնել և ցիրուցան էին եղել, ինչպես ոչխարները, որ հովիվ չունեն» (Մատթ. 9.36): Հովհաննու 10-րդ գլխում Հիսուսը հայտարարեց մարդկանց՝ «իր ոչխարների» հանդեպ իր սերն ու մտահոգությունը և ասաց. «Ես եմ Բարի հովիվը. բարի հովիվն իր կյանքը տալիս է ոչխարների համար» (Հմ.11): Հիսուսի կարեկից լինելը Նրան մղեց մարդկանց հետ շփվելու, նրանց կարիքներին ու խնդրանքներին պատասխանելու և վերջապես նրանց ու մեր փոխարեն զոհվելու:

«Տերն իմ հովիվն է»-ն ավելին է, քան հին երգ ու խելացի կարգախոս լինելը: Այն վստահ հայտարարություն է այն մասին, թե ինչ է նշանակում ճանաչված ու սիրված լինել Աստծու կողմից և ազատվել իր Որդու միջոցով:

**Աղոթք** - Հայր, ի՞նչ մեծ պարգև է մեր հովիվը մեզ համար: Օգնիր, որ պատասխանենք իր կոչին և մոտենանք Քեզ: Ամեն:

**Աստված հոգում է քեզ համար:  
Ուրիշներին պատմիր այդ մասին:**

**Կարդա՛ր  
Հովհ. 10.11-15**

Ես եմ Բարի հովիվը. բարի հովիվն իր կյանքը տալիս է ոչխարների համար:  
Հովհ.10.11

## Արևածաղիկներ

**Ա**րևածաղիկները ծաղկում են առանց որևէ հատուկ խնամքի: Նրանք աճում են ճանապարհների, արոտավայրերում, դաշտերում ու մարգագետիններում, սնվում են մեղունների միջոցով: Բայց լավ արդյունք ստանալու համար նրանց անհրաժեշտ է բերրի, թթվային ու օրգանական նյութերով հարուստ պարարտացված հող: Հողագործների «Ալմանախ» հանդեսը արևածաղիկի համեղ սերմեր և բարձրորակ յուղ ստանալու համար այս գործոններից բացի կարևորում է նաև աշխատասեր հողագործների ջանքն ու եռանդը:

Մենք էլ հոգեպես աճելու համար կարիք ունենք բարեբեր հողի (Ղուկ.8.15): Սերմնացանի առակում Հիսուսը սովորեցրեց, թե Աստծո խոսքը կարող է ծլարձակել ժայռերի ու փշերի մեջ (Հմ. 6-7): Սակայն այն կարող է աճել ու մեծանալ միայն անկեղծ ու բարեսիրտ մարդկանց մեջ, որոնք լսում են Աստծո խոսքը, կառչում են նրան և համբերությամբ շատ բերք են տալիս:

Մատղաչ արևածաղիկի թփերն էլ համբերատար են և ամբողջ օրվա ընթացքում շրջվում են դեպի արևը՝ հետևելով նրան: Իսկ հասուն արևածաղիկները կայունորեն դառնում են արևելք՝ ջերմացնելու ծաղիկ երեսը և ձգելու մեղուններին: Այս գործողությունները մեծ բերք են ապահովում: Մենք էլ կարող ենք Աստծո խոսքի ծլարձակման հարուստ միջոց դառնալ՝ կառչելով Նրա խոսքին ու հետևելով Իր Որդուն՝ Աստծո խոսքի հանդեպ զարգացնելով անկեղծ ու բարի սիրտ, որ աճեցնի մեզ:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, ամեն օր շողա՛ ինձ վրա, որպեսզի Քո խոսքը կարողանա իմ մեջ բարի բերք առաջացնել: Ամեն:

Ինչպիսի՞նք է մեր հոգու հողը. ժայռոտ ու փշո՞տ, թե՞ հոգևոր սնունդով հարուստ:

### Կարդա՛ Ղուկաս 8.11-15

Իսկ այն պարարտ հողի միջիցները նրանք են, որ բարի ու հոժար սրտով լսում և ընդունում են խոսքը, ու համբերությամբ պտուղ են տալիս: Ղուկ. 8.15

## Աստծո համար գեղեցիկ

**Ե**րբ Թենին սկսեց ժամադրվել ու ընկերոջ հետ հանդիպել, ավելի նիհար երևալու և նրա համար ավելի զբաղվիչ լինելու համար փորձեց նորաձև հագուստ կրել: Կանանց նորաձևության թերթերը միշտ էլ դա են թելադրում: Նա շատ ուշ հասկացավ ընկերոջ միտքը, թե «Քեզ հավանել եմ այնպես, ինչպես որ կաս, և բնավ մի՛ մտահոգվիր հագուստովդ»: Այդ ժամանակ Թենին հասկացավ, որ «գեղեցկությունը» սուբյեկտիվ է: Գեղեցկություն մասին մեր պատկերացումը շատ հեշտ կարող է փոխվել ուրիշների կարծիքից: Այն հաճախ կենտրոնացած է լինում արտաքին երևույթների վրա՝ մոռանալով ներքին գեղեցկության մասին: Սակայն Աստված մեզ տեսնում է միայն մեկ ձևով՝

**Կարդա՛**  
**Սաղմոս 8. 4-9**

Սարդն ի՞նչ է, որ հիշում ես նրան, կամ մարդու որդին որ այցի գաս նրան: Սաղմ. 8.5

որպես իր գեղեցիկ ու սիրելի զավակները: Ես մտածում եմ, որ Աստված աշխարհն ստեղծելիս լավագույն գործը՝ մեզ, թողեց վերջում: Ամեն ինչ, որ ստեղծեց, բարի էր, սակայն մենք հատուկ ենք, որովհետև ստեղծված ենք իր պատկերով (Ծնն. 1.27):

Աստված մեզ գեղեցիկ է համարում: Դրա համար սաղմոսերգուն սարսափեց, երբ բնության մեծությունը համեմատեց մարդկության հետ: Նա հարցրեց. «Սարդն ի՞նչ է, որ հիշում ես նրան, կամ մարդու որդին, որ այցի գաս նրան» (Սաղմ.8.5): Եվ նույնիսկ Աստված ուզեց մահկանացուներին փառքով ու պատվով պսակել (Հմ.6): Այս ճշմարտությունը մեզ վստահություն ու իրեն փառավորելու առիթ է տալիս (Հմ.10): Հոգ չէ, թե ուրիշները կամ մենք ինչ ենք մտածում մեր մասին: Պետք է իմանանք, որ Աստծո՛ համար մենք գեղեցիկ ենք:

**Աղոթք** - Հայր, Դու գիտես, թե որքան անապահով եմք զգում մեզ: Շնորհակալ եմք այն վստահության համար, որ Դու մե՛զ ես սիրում: Ամեն:

**Ինչպե՞ս ես տեսնում քեզ դու և ինչպե՞ս է տեսնում քեզ Աստված:**



## Ապրող գույնով

**Ե**րբ Խավիեր Մըքքուրին իր տասներորդ տարեդարձի առիթով Սելենա հորաքրոջ ուղարկած ակնոցը դրեց, հուզմունքից լաց եղավ:

Ի ծնե լինելով դալտոնիկ՝ Խավիերը ամեն ինչ տեսնում էր մոխրագույն ստվերով՝ սև ու սպիտակ: Իր ստացած նվերով նա առաջին անգամ տարբեր գույներ տեսավ: Նրա ու իր ընտանիքի համար սա հրաշք էր: Աստծո գունավոր ու պայծառ փայլը ավելի հզոր հակադարձուձյուն առաջացրեց Հովհաննես առաքյալի մեջ (Հայտն.1.17): Տեսնելով հարուցյալ Քրիստոսի ամբողջական փառքը՝ Հովհաննեսն ասաց. «Եվ ահա երկնքում մի գահ կար, և գահի վրա՝ մեկը նստած: Նստողը հասպիս ու սարդիոն քարի երևույթն ուներ: Գահի չորս կողմը ծիածան կար՝ զմրուխտի նման... գահից փայլատակումներ, որոտ ու ձայներ էին դուրս գալիս» (Հայտն. 4. 2-5):

Մեկ այլ դեպքում Եզեկիելը նույնպես նման տեսիլք է նկարագրում՝ ասելով. «Նրանց գլխավերևի երկնակամարից էլ ավելի վեր կար գահի պես մի բան, որ շափյուղա ակի էր նմանվում, իսկ գահի վրա մարդու կերպարանքով մի բան: Եվ լույսը, որ նրա շուրջը բոլորակ էր կազմել, ուներ ծիածանի տեսք (Եզ. 1. 26-27):

Մի օր կհազիպենք հարուցյալ Քրիստոսին և կտեսնենք Նրան երես առ երես: Այս տեսիլքները մեզ սպասող սքանչելիքի ու հիանալի փոքր նշույլներն են:

**Աղոթք** - Սիրելի՛ Յայր, անհնար է բառերով նկարագրել ու պատկերացնել այն, ինչ մեզ սպասվում է Քեզ երես առ երես տեսնելիս: Շնորհակալ ենք Քո գեղեցկության փոքր նշույլի համար, որ դրել ես մեր աշխարհի մեջ: Ամեն:

**Աստծո սքանչելի գեղեցկությունը տե՛ս ու երախտապարտ եղի՛ր:**

### Կարդա՛ Յայտն. 4.1-6

Նստողը հասպիս ու սարդիոն քարի երևույթն ուներ: Գահի չորս կողմը ծիածան կար՝ զմրուխտի նման: Յայտն. 4.3-4

## Թակարդից դուրս

Արուսյակ ճանճորս բույսը առաջին անգամ հայտնաբերվել է Հյուսիսային Կարոլինայում՝ մեր տան մոտակայքում գտնվող ավազոտ հովտում: Այդ մսակեր բույսերին դիտելը շատ հետաքրքիր է: Իր բաց ծաղիկների նմանվող գունավոր թակարդների մեջ այն անուշաբույր մեղրահյութ է արտազատում: Երբ միջատը մոտենում է, բույսի ծայրերին տեղակայված զգայարանները նշան են արձակում, և թակարդի ճանկերը կամ հանգուցյուններն ակնթարթորեն փակվում են՝ բռնելով գոհին: Հետո թակարդն ավելի է սեղմվում՝ արձակելով մի օրգանական նյութ, որն օգնում է կարճ ժամանակում մարսել և սննդարար նյութեր տալ բույսին:

Կարդա՛ր  
Ա ՏԻՄ. 6.6-10

...ես սովորել եմ ինչի մեջ որ կամ, ցրանով բավարարվել: Փիլիպ. 4.11

Աստծո խոսքը մեկ այլ տեսակի թակարդի մասին է վկայում, որը կարող է անսպասելիորեն մեզ կլանել: Պողոս առաքյալն զգուշացրեց իր հովանավորյալ Տիմոթեոսին՝ ասելով.«Նրանք, ովքեր ուզում են հարստանալ, փորձուծյան, որոգայթի և շատ անմիտ, վնասակար ցանկությունների մեջ են ընկնում, որ ընկղմում են մարդկանց կործանումի և կորստյան մեջ..., որին մի քանիսն անձնատուր լինելով՝ հավատից մոլորվեցին ու իրենց անձերը շատ ցավերով խոցեցին» (Ա. Տիմ. 6.9-10): Դրամն ու նյութական արժեքները կարող են մեզ ուրախություն խոստանալ, բայց երբ դրանք մեր կյանքում առաջնահերթ տեղ են զբաղում, մենք անցնում ենք վտանգավոր ուղիով: Այս աշխարհի ժամանակավոր բաները չեն կարող մեզ գոհացնել այնպես, ինչպես Աստված է գոհացնում: Ծշմարիտ ու մնայուն գոհացումը Աստծո հետ ունեցած մեր հարաբերությունն է:

**Աղոթք** - Սիրո՞ղ Տե՛ր, Դու իմ կյանքի մեծագույն օրհնությունն ես: Օգնի՛ր ինձ, որ կարողանամ ինքնաբավ զգալ Քո ով լինելով: Ամեն:

**Մեծագույն նախապատվությունը տու՛ր Աստծո հետ քո հարաբերությանը և ոչ թե դրամին կամ նյութականին:**

## Թանկագին

**Թ**ուրքինի «Մատանիների տիրակալը» եռամաս պատմության մեջ նկարագրված Գոլում կոչված զազրելի արարածի կերպարը մոլագարության հասնող իր «զորության թանկագին մատանիով» և «Թանկագինս...» բացականչությամբ, դարձել է ազահության, մոլուցքի և նույնիսկ խելագարության պատկեր: Այն նաև անհանգստացնող պատկեր է: Մատանու և նրա տիրակալի միջև սիրո և ատելության պայքարում Գոլումի ձայնը մեր սրտերի քաղցի արձագանքն է: Հոգ չէ, եթե հստակորեն մի բանի, կամ պարզապես ավելին ունենալու անորոշ ցանկություն կա: Վստահ ենք, եթե ձեռք բերենք այդ «Թանկագինը», պիտի գոհանանք: Բայց հաճախ այդ ձեռքբերումը մեզ գոհացնելու փոխարեն անգործության է մատնում:

Ապրելու ավելի լավ մի ձև կա: Ինչպես Դավիթն է ասում 15-րդ սաղմոսում, երբ մեր սրտի ցանկությունները մեզ կմատնեն գոհացումի հուսահատ և ապարդյուն որոնումի (Հմ.4), հիշենք, որ կարող ենք Աստծո պաշտպանությունը հայցել (Հմ.1), մենք մեզ հիշեցնելով, որ առանց Իրեն որևէ բարիք չունենք (Հմ.2):

Երբ մեր աչքերը հոգնեն գոհացում փնտրելուց ու տեսնեն Աստծո գեղեցկությունը (Հմ.8), այդ ժամանակ կճաշակենք գոհացումի և ինքնաբավության զգացումը, կհրճվենք Աստծո ներկայությամբ և ընդմիջտ Իր հետ կանցնենք մեր կյանքի յուրաքանչյուր վայրկյանը (Հմ.11):

**Աղոթք** - Տե՛ր, ների՛ր ինձ, երբ մտածեմ, թե կարիքներս կհոգամ Քեզմից անկախ: Շնորհակալ եմ, որ միշտ ինձ հետ ես, նույնիսկ երբ մոռանում եմ Քեզ: Ինձ Քեզ մոտեցրու՛, որպեսզի ուրախությամբ քայլեմ Քեզ հետ: Ամեն:

**Դարձի՛ր դեպի Աստված, որովհետև միայն Ինքը կարող է քեզ տալ թանկագինը:**

**Կարդա՛ր**  
**Սաղմոս 15.1-11**

Իմ Տերն ես դու,  
ինձ արված բարիքները քեզմից  
են: Սաղմ. 15.2

## Հաղթանակի շքերթը

**2**016-ին, երբ երկար ընդմիջումից հետո Չիկագոյի բեյսբոլի թիմը նվաճեց աշխարհի չեմպիոնի կոչումը, որոշ աղբյուրներ հայտնեցին, թե հինգ միլիոն մարդ է հավաքվել քաղաքի կենտրոնական հրապարակում՝ շքերթի:

Հաղթանակի շքերթները ժամանակակից հավաքներ չեն: Հռոմեական հաղթանակը հռչակավոր զորահանդես էր, որի ժամանակ խոնված փողոցներում հաղթանակած հարյուրապետներն առաջնորդեցին իրենց բանակներն ու գերիներին:

Նման մի շքերթ կար Պողոսի մտապատկերում, երբ նա գրեց Կորնթոսի եկեղեցուն՝ շնորհակալություն հայտնելով Աստծուն, որ նա հաղթական շքերթում առաջնորդում է հաղթող ու մեղքի գերությունից ձերբազատված հավատացյալներին: Պողոսի այս մտապատկերը հիանալի է, որովհետև Քրիստոսին հետևողներին հաղթական է նկատում: Որպես հավատացյալներ՝ պարտադրված չենք մասնակցել այս շքերթին, սակայն կարող ենք միանալ հաղթական ու հարուցյալ Քրիստոսին: Որպես քրիստոնյաներ՝ մենք հռչակում ենք, որ Քրիստոսն իր տարած հաղթանակով իր թագավորությունն է կառուցում և «գժոխքի դռները նրան չեն հաղթի» (Մատթ. 16.18):

Սոսելով խաչի վրա Հիսուսի տարած հաղթանակի և հավատացյալներին իր տված ազատության մասին՝ մենք օգտակար ենք լինում, որ «Իրեն ճանաչելու բույրը ամեն տեղ հայտնվում է մեզանով» (Բ.Կորնթ. 2.14):

**Աղոթք** - Տեր, խաչի վրա մեռնելով՝ պարտության մատնեցիր չարը ու հարությանբդ հաղթեցիր մահին և մեզ դարձրիր հաղթողներ: Ամեն:

**Հիսուսը մեր հաղթական թագավորն է:**

**Կարդա՛ր  
Բ Կորնթ. 2.14-17**

Բայց շնորհակալություն Աստծուն, որ ամեն ժամանակ մեզ Քրիստոսով հաղթող է անում: Բ Կորնթ. 2.14

## Իմաստուն օժանդակություն

**Ե**րբ մեքենան կանգնեցրի կարմիր լույսի տակ, տեսա նույն մարդուն, որը ճանապարհի եզրին էր կանգնած՝ ձեռքին մի գրութիւն՝ «Ուտելիքի փող չունեմ»։ Հայացքս թեքեցի ու հառաչեցի։ Մի՞թե ես կարիքավորին անտեսողներից մեկն եմ։

Ոմանք ձևացնում են, թե կարիքավոր են, իրականում կեղծ դերասաններ են։ Մինչդեռ իսկապես կարիք ունեցողները ամեն դժվարութիւն հաղթահարում են չդիմելու համար այդ ավերիչ սովորությալները։ Հասարակական գործիչները մեզ ասում են, որ ավելի լավ է մեր օգնութիւնը տանք քաղաքում գործող այն կազմակերպութիւններին, որոնք դրանով են զբաղվում։ Թուքս կուլ տալով շարունակեցի ընթացքս։ Վատ էի զգում, բայց հավանաբար ճիշտ էր որոշումս։

Աստված մեզ հրամայում է «անկարգներին խրատեցե՛ք, երկչոտներին քաջալերեցե՛ք, տկարներին օգնակա՛ն եղեք, բոլորի հանդեպ համբերատար եղե՛ք» (Ա.Թես. 5.14)։ Այս բանը լավ անելու համար պետք է հստակ տարբերակենք խմբերը։ Եթե խրատենք տկար կամ հուսահատ մեկին, կարող ենք նրա հոգին ավերել, իսկ եթե օգնենք անկարգին, կարող ենք քաջալերել՝ մղելով նրան ծուլության։

Արդյոք Աստված սիրտդ լցրե՞լ է մեկին օգնելու ցանկութեամբ։ Շատ լա՛վ։ Հիմա գործն սկսվում է։ Մի՛ ենթադրիր, թե այդ անձի կարիքները գիտես։ Խնդրիր իրեն, որ քեզ պատմի իր մասին, իսկ դու լսի՛ր իրեն։ Աղոթքով տու՛ր նրան այն, ինչը իմաստուն կլի՛վա և ոչ թե պարզապես լավ զգալու համար։

**Աղոթք** - Հայ՛ր, օգնի՛ր, որ կարողանամ իմաստութեամբ և հաճախակի օժանդակեմ։ Ամեն։

**Կարդա՛ր Ա թես. 5.12-15**  
Երկչոտներին քաջալերեցե՛ք, տկարներին օգնակա՛ն եղեք, բոլորի հանդեպ համբերատար եղե՛ք։ Ա. Թես. 5.14

**Կարիքավորներ միշտ էլ կլինեն, բայց դու իմաստությա՛մբ արա քո օժանդակությունը։**

## Ո՞վ է նա

**Մ**եր մեղրամսից վերադառնալիս, երբ օգանավակայանում սպասում էինք պայուսակները հանձնելու, մեզանից մի քանի քայլ այն կողմ նկատեցի մի մարդու և ամուսնուս ուշադրությունը հրավիրեցի: Նա նայեց ու ասաց. «Ո՞վ է նա»:

Բարկացած սկսեցի թվել հանրաճանաչ դերասանի դերերը և նրան մոտենալով խնդրեցի, որ լուսանկարվենք միասին: Քսանչորս տարի անց էլ հաճույքով եմ հիշում այդ պատմությունը:

Հանրաճանաչ դերասանին ճանաչելը լավ է, բայց կա ավելի կարևոր Մեկը, որին անձամբ ճանաչելուս համար շնորհակալ եմ: «Ո՞վ է այս Փառքի արքան» (Սաղմ. 23.8): Սաղմոսերգու Դավիթը, որպես Արարիչ, Կարող, Պահող ու բոլորին իշխող, ցույց է տալիս Ամենակարող Աստծուն: Նա երգում է՝ ասելով. «Տիրոջն է երկիրն իր ամբողջությունը, աշխարհն իր բոլոր բնակիչներով: Նրա հիմքերն անձամբ գցեց ծովի վրա և գետերի վրա հաստատեց նրան» (Հմ.1-2): Դավիթը մեծ հիացումով հայտարարում է, թե Աստված ամեն բանից վե՛ր եղող Տերն է, սակայն Նրան կարելի է մտերմորեն մոտենալ, ճանաչել, իրենով զորանալ և վստահ լինել, որ Նա մեզ համար կպայքարի, եթե ապրենք իր համար» (Հմ.8):

Աստված մեզ առիթներ ընծայում է, որպեսզի իրեն մեր Թագավորն ու Տերը հռչակենք և ուրիշներին էլ ներկայացնենք: Դավիթի նման մենք էլ կարող ենք մեծ հիացմունքով ներկայացնել Տիրոջը և պատմել Նրա պատմությունը:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմք, որ օրհնում ես մեզ Քեզ որոնելու առանձնաշնորհումով ու հաճույքով և առիթ ես տալիս, որ Քեզ ներկայացնենք ուրիշներին: Ամեն:

**Եթե ճանաչում ես Փառքի արքային, իրեն ներկայացրու՝ ուրիշներին:**

### Կարդա՛ր Սաղմոս 23

Ո՞վ է այս փառքի արքան, - գործությունների Տերը՝ նա ինքն է փառքի արքան: Սաղմ. 23.10

## Գործնական ուսուցում

**Վ**եց տարեկան որդիս՝ Օուենը, ոգևորված էր, որ ստվա-  
րաթղթե մի նոր խաղ էր ստացել: Բայց կես ժամ խաղի  
կանոնները կարդալուց հետո չկարողացավ գլուխ հանել և  
գայրացավ: Երբ ընկերներից մեկը բացատրեց, Օուենն իր ստա-  
ցած նվերով ուրախացավ:

Դիտելով նրանց խաղը, մտածեցի, թե  
որքան դյուրին կլինի նոր բան սովորելը,  
եթե ունենաս փորձառու ուսուցիչ: Երբ  
ուզում ենք մի խաղ սովորել, հրահանգ-  
ները կարդալն, անշուշտ, օգնում է: Սա-  
կայն երբ բարեկամդ է գործնականորեն  
ցույց տալիս խաղի նրբությունները,

տարբերությունը զգալի է: Պողոս առաքյալն այս բանը լավ էր  
հասկացել: Նա Տիտոսին գրեց, թե ինչպես կարելի է օգնել իր եկե-  
ղեցու անդամներին՝ հավատքում աճելու համար: Նաև շեշտեց  
փորձառու հավատացյալների կարևորությունը, որոնք կարող են  
Քրիստոնեական հավատքի գործնական օրինակներ լինել: Ան-  
շուշտ, «առողջ վարդապետություն» ուսուցանելը կարևոր է, սա-  
կայն միայն խոսելը բավարար չէ, պետք է ապրել այն: Պողոսը  
գրեց, որ տարեց կանայք ու տղամարդիկ թող լինեն զգաստ, ծան-  
րաբարո, խոհեմ, ողջամիտ՝ հավատով և սիրով (Տիտ. 2.2-5): Նա  
ասաց. «Ամեն բանի մեջ դու քե՛զ ցույց տուր՝ քո անձն ամեն կող-  
մից բարի գործերի օրինակ դարձնելով» (Հմ.7): Ես շնորհակալ եմ  
հիմնավոր ուսուցման համար, նույնքան էլ երախտապարտ եմ շա-  
տերին, որոնք գործնական ուսուցիչներ են եղել և իրենց կյանքով  
են ցույց տվել, թե ինչ է նշանակում լինել Քրիստոսի աշակերտ:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմք, որ մեզ տալիս ես  
ուսուցիչներ, որոնք կարող են իրենց օրինակով ցույց տալ, թե  
ինչպես կարելի է Քեզ համար ապրել: Շնորհակալ եմք նաև  
Քո որդու՝ կատարյալ հավատի միակ օրինակի համար: Ամեն:

**Հավատում ես Աստծուն: Ցույց տու՛ր գործնականորեն:**

### Կարդա՛ Տիտոս 2.1-8

Ինձ նմանվող  
եղեք, ինչպես ես՝  
Քրիստոսին:  
Ա Կորնթ. 11.1

## Երբեք ուշ չէ

**Մ**տի նոպայի ժամանակ զոքանչս բարեբախտաբար ստացավ իրեն անհրաժեշտ շտապ բուժօգնությունը: Հետո նրա բժիշկը բացատրեց, որ նոպային հաջորդող 15 րոպեներին ցուցաբերած օգնության շնորհիվ հարյուր հիվանդից երեսուներեքը փրկվում են, իսկ եթե օգնությունը ավելի ուշ է ցուցաբերվում, փրկվողների թիվը 100-ից հինգ է:

Հայրոսի մահամերձ դուստրը ևս շտապ բուժօգնության կարիք ուներ: Նրան բժշկելու ճանապարհին Հիսուսն աներևակայելի մի բան արեց. սպասեց, որ իմանա, թե ով դիպավ Իր հագուստին և ապա քնքշորեն խոսեց այդ կնոջ հետ (Մարկ. 5.30-34): Կարելի է պատկերացնել, թե ինչ էր մտածում այդ պահին Հայրոսը. «դրա ժամանակը չէ, աղջիկս մեռնում է»: Հոր վախն իզուր չէր, նրան լուր բերին, որ աղջիկը մահացավ (Հմ.35):

Բայց Հիսուսը, դառնալով Հայրոսին քաջալերանքով ասում է. «Մի՛ վախենա, այլ միայն հավատա՛» (Հմ. 36): Ապա անտեսելով դիտողների զարմանքը՝ խոսեց աղջկա հետ, և նա ոտքի ելավ: Հիսուսը հայտնեց, որ Ինքը երբեք ուշ չէ, որ ժամանակը չի կարող սահմանափակել Իր կարողությունը:

Մենք էլ հաճախ Հայրոսի պես ենք մտածում, թե Աստված պարզապես ուշ է անելու մեր ուզածը: Բայց Աստծո համար այդպիսի բան չկա: Մեր կյանքում Նրա արած բարի գործը երբեք ուշ ու ժամանակավրեպ չէ:

**Աղոթք** - Տե՛ր Զիսուս, օգնի՛ր հիշել, որ Դու իշխում ես ժամանակի վրա և երբեք չես ուշացնում Քո կատարյալ ծրագրի իրագործումը: Ամեն:

**Վստահի՛ր Աստծուն, որը ժամանակին ամեն ինչ անում է մեր օգտի համար:**

### Կարդա՛ր Մարկոս 5. 35-43

Զիսուսը, ասվածը լսելով, ժողովրդապետին իսկույն ասաց. «Մի՛ վախենա, այլ միայն հավատա՛»: Մարկ. 5.36



## Յավատարիմ գերութեան մեջ

Հարալան Պոպովը գաղափար չունենք, թե ինչպես է փոխվելու իր կյանքը, երբ 1948-ին մի վաղ առավոտ իր տան զանգը հնչեց: Առանց որևէ ծանուցման՝ բուլղարական ոստիկանությունը բանտարկեց նրան՝ իր հավատի համար: Նա իր կյանքի հաջորդ տասներեք տարին բանտում անցկացրեց՝ Աստուծոն աղոթելով, որ իրեն տոկունություն ու զորություն տա: Հակառակ իր դաժան տառապանքին՝ նա գիտեր, որ Աստված իր հետ է: Իր հավատի փորձառություն մասին խոսեց մյուս բանտարկյալների հետ, և շատերը հավատացին: Հովսեփն էլ բոլորովին գաղափար չունենք, թե ինչ է լինելու իր հետ, երբ եղբայրները անխղճորեն իրեն ծախեցին իսմայելացի վաճառականներին, վերջիններն էլ տարան Եգիպտոս ու վաճառեցին փարավոնի պալատական, դահճապետ Պետափրեսին: Այնտեղ Հովսեփը հայտնվեց մի միջավայրում, որտեղ մարդիկ հազարավոր աստվածների էին պաշտում: Նրա վիճակն ավելի վատթարացավ, երբ Պետափրեսի կինը փորձեց գայթակղել իրեն: Հովսեփը մերժեց, և չարացած կինը զրպարտեց նրան՝ պատճառ դառնալով, որ բանտարկվի (Ծննդ. 39.16-20): Սակայն «Աստված Հովսեփի հետ էր, Նա ողորմություն պարգևեց նրան և այնպես արեց, որ նա բանտապետի բարեհաճությունն արժանանա» (Հմ.21): Պատկերացրեք Հովսեփի զգացած վախը: Բայց նույնիսկ այդ պարագայում նա հավատարիմ մնաց ու արդարամիտ եղավ: Աստված նաև քեզ համար ունի հատուկ ծրագիր: Քաջալերվի՛ր ու հավատով քայլի՛ր՝ վստահ լինելով, որ Նա տեսնում է և գիտե:

Կարդա՛  
Ծննդ. 39. 6-12, 20-23

Յովսեփի տերը բռնեց ու բանտ նետեց նրան: Բայց Աստուած Յովսեփի հետ էր:  
Ծննդ. 39.20-21

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ, որ միշտ ինձ հետ ես, նույնիսկ երբ կյանքի հանգամանքները անհանգստացնում ու ցավ են պատառում ինձ: Օգնի՛ր, որ հավատարիմ մնամ Քեզ: Ամեն:

**Փորձություններ ու նեղություններ կունենաս: Բայց վստահի՛ր, որ Աստված միշտ քեզ հետ է:**

## Գլխիս ետևի աչքերը

**Ի**նչպես ցանկացած երեխա՝ ես նույնպես չարածճի էի և փորձում էի արածս չարությունները թաքցնել: Բայց հիշում եմ, որ մայրս միշտ շատ արագ ու ճշգրիտ կռահում էր իմ արածները: Երբ զարմացած հարցնում էի, թե ինչպես է իմանում, նա միշտ ասում էր. «Գլխիս ետևում աչքեր ունեմ»: Բնականաբար, լսելով այդ՝ ամեն անգամ, երբ մայրս թիկունքով էր լինում, ուշադիր զննում էի գլուխը: Եվ չտեսնելով ետևի աչքերը՝ մտածում էի, որ դրանք կամ անտեսանելի են, կամ կարմիր մազերի տակ են պահված: Մեծանալուց հետո այլևս չէի փնտրում մորս «ավելորդ» աչքերը և հասկացա, որ ես այդքան էլ չարածճի ու ամեն ինչ իմացող մեկը չէի: Մորս ուշադիր հայացքը զավակներին իր սիրո ու մտահոգությունների ասպարեզն էր:

### Կարդա՛ր Սաղմոս 32. 6-19

Իր պատրաստած բնակատեղից դիտեց աշխարհի բոլոր բնակիչներին: Սաղմ. 32.14

Շնորհակալ եմ մորս ուշադիր հոգատարություն համար, թեև մի քանի անգամ հուսախաբ եմ եղել՝ չկարողանալով թաքցնել մանկական չարածճիություններս: Ավելի երախտապարտ եմ Աստծուն, «որը երկնքից է նայում բոլոր մարդկանց որդիներին» (Սաղմ. 32.13): Նա մեր արածներից շատ ավելին է տեսնում. նա տեսնում է մեր տխրությունները, ուրախությունները, միմյանց հանդեպ մեր ունեցած սերը:

Աստված տեսնում է մեր իսկական նկարագիրը և միշտ գիտե, թե մենք ինչի կարիք ունենք: Կատարյալ տեսողությամբ նա նույնիսկ տեսնում և քննում է սրտի խորհուրդները, հսկում է բոլոր Իրեն սիրողներին ու վստահողներին (Հմ. 18): Նա մեր ուշադիր ու սիրող Աստվածն է:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ հսկում ես բոլոր մարդկանց և տեսնում , թե ինչ է կատարվում մեր աշխարհի ու իմ մեջ: Ամեն:

**Հոգ չէ, թե ինչ ենք անում:  
Տերը մեզ հսկում է իր հոգատար աչքերով:**

## Պարծենալու բան

**Ի**՞նչ է նշանակում լինել իրական. սա է այն մեծ հարցը, որի պատասխանը տրվում է «Թավշյա նապաստակը» մանկական գրքում: Դա պատմություն է մանկապարտեզի խաղալիքների և թավշյա մի նապաստակի մասին, որն իրական է դառնում, որպեսզի վայելի մի երեխայի սերը:

Խաղալիքներից մեկն էլ ծեր ու իմաստուն կաշվե ձին էր, որը «տեսել էր խաղալիք-մեքենաների մի երկար շարք, որոնք եկել էին պարծենալով և հպարտանալով, սակայն կոտրվելով՝ անցել, գնացել էին»: Նրանք տպավորիչ էին թվում, սակայն նրանց պարծանքը ի չիք դարձավ, երբ ի հայտ եկավ սիրո գործոնը:

Պարծենալը ընդհանրապես զորավոր ազդեցություն է ունենում, բայց շուտով էլ անհետանում է: Երեմիան երեք հանգամանք է նշում, որտեղ սա ակնհայտ է. իմաստություն, զորություն և հարստություն (Հմ. 9.23): Իմաստուն ավագ մարգարեն բավարար փորձառություն ունեւր տեսնելու սա և Տիրոջ ճշմարտությանը գրելու. «Պարծեցողը թող այս բանով պարծենա՛ իմանալ և ճանաչել ինձ, թե ես եմ Տեր Աստվածը» (Հմ. 24):

Աստծո կամքով՝ մեր բարի Հայրը թող լինի մեր պարծանքը, որի մեծ սիրով ենք մենք ապրում ու գոյատևում:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր, որ հիշեմ Երեմիայի խոսքերը: Թող միայն Քեզնով ու Քո հավերժական սիրով պարծենամ: Ամեն:

### Կարդա՛ Երեմիա 9. 23-26

Թող իմաստունն իր իմաստությունը չպարծենա, թող հզորն իր զորությունը չպարծենա: Երեմ. 9.23

Ուզու՞մ ես պարծենալ: Տիրոջով պարծեցի՛ր:

## Ունայնություն

**Բ**որբի հանկարծակի վախճանն ինձ հիշեցրեց մահվան դառն իրականությունն ու կյանքի կարճատևությունը: Մանկու-թյանս ընկերը ընդամենը 24 տարեկան էր, երբ ողբերգական պատահարը իլեց նրա կյանքը: Մեծացել էր անկայուն ընտանիքում, և վերջերս էր նրա կյանքը սկսել լավանալ: Նորահավատ էր, ինչպես՝ ս կտրվեց նրա կյանքի թելը:

Երբեմն կյանքը շատ կարճ ու ցավալի է թվում: 38-րդ սաղմոսում Դավիթը հեծեծում է իր կրած տառապանքների համար և հառաչում. «Տե՛ր, ցու՛յց տուր ինձ, թե ե՞րբ է իմ վախճանը, և որքա՞ն է կյանքիս օրերի թիվը, որպեսզի իմանամ, թե ինչքան կորուստ եմ ունեցել: Ահա սահման դրիր իմ օրերին, և կարողությունս ոչինչ է իմ աչքում, բոլորովին ոչնչություն է ամեն մարդ, որ մարմին ունի» (Հմ.5-6):

Կյանքը կարճ է, եթե նույնիսկ մեկ ամբողջ դար ապրենք, մեր երկրային կյանքը մի կաթիլ է ժամանակի մեջ:

Դավթի հետ մենք էլ կարող ենք ասել. «Իմ օգնականն ու պաշտպանը դու ես, Աստված իմ ... » (Սաղմ. 39.18)

Ընդունենք, որ մեր կյանքը իմաստ ունի՝ Թեև մեր մարմինները մաշվում են, որպես հավատացյալներ՝ վստահ ենք, որ «մեր ներքին մարդն օրեցօր նորոգվում է» և մի օր Իր հետ հավիտենական կյանք ենք վայելելու (Բ.Կորնթ. 4.16-5.1): Մենք սա գիտենք, որովհետև Աստված մեզ «դրա համար պատրաստեց .... ու Հոգու գրավն էլ մեզ տվեց» (Հմ. 5.5):

**Աղոթք** - Շնորհակալ եմ, Տե՛ր, որ կյանքը միայն սա չէ: Դու հավիտենություն ես պատրաստել բոլոր նրանց համար, ովքեր հավատում են Թեզ: Օգնի՛ր, որ մեր հաշված օրերն ապրենք Թե՛զ ծառայելով: Ամեն:

**Թեև մեր կյանքի օրերը կարճ են, բայց հավիտենական կյանք ունենք Տե՛ր Հիսուսի հետ:**

Կարդա՛ր  
Սաղմոս 38. 1-13

Արդ, ո՞վ է իմ  
համբերությունը:  
Սաղմ. 38.8

## Ամբողջացնել

«Նայիր և տե՛ս. Վենդել Բերրիի մի դիմանկարը» խորագրով վա-  
վերագրական ֆիլմում Բերրին աշխարհի վիճակը համեմատում  
է ամուսնալուծության հետ: Մենք իրարից, մեր պատմությունից  
ու երկրից բաժանված ենք: Այն բաները, որ ամբողջական պիտի  
լինեն, բաժանված են: Երբ նրան հարցնում են, թե ի՞նչ կարելի է  
անել այս տխուր իրավիճակը փոխելու  
համար, Բերրին ասում է. « Չենք կարող  
ամեն բան մեկտեղել: Մենք կարող ենք  
միայն երկու բան վերցնել ու միացնել,  
երկու կտրված մասեր իրար միացնել»:   
Հիսուսը մեզ ասում է. «Երանի՛ խաղա-  
ղություն անողներին» (Մատթ. 5.9): Խաղա-  
ղություն անելը երբայերեն շարժ բառով է արտահայտվում, որը  
նշանակում է աշխարհը ճիշտ ընթացքի մեջ դնել: Աստվածաբան-  
ներից մեկը շարժը նկարագրում է իբրև «համընդհանուր ծաղ-  
կում, ամբողջություն և ուրախություն, այնպես, ինչպես լինելու  
է ամեն ինչ»: Շարժ նաև նշանակում է կտրված, անջատված  
որևէ բան միացնել իրար, ամբողջական դարձնել: Ինչպես որ Հի-  
սուսն է մեզ ուղղում, թե ձգտենք ամեն ինչ ճիշտ անելու: Նա, որ  
մեզ կոչում է խաղաղարար և ասում. «Դուք երկրի աղն եք» և  
«Դուք աշխարհի լույսն եք» (Հմ. 13-14): Աշխարհում խաղաղու-  
թյուն անելու շատ ձևեր կան, բայց մենք ամեն դեպքում աշխա-  
տում ենք կտրածն ամբողջացնել և ոչ թե այդ վիճակին տրվել:  
Աստծո զորությունք չթողնենք, որ սերտ բարեկամությունը մեռ-  
նի, պայքարող շրջանակը լարվածության, անտարբերության ու  
մենակության մեջ մնա: Որոնենք կտրված վիճակները և վստա-  
հենք Աստծուն, որ մեզ կտա դրանք ամբողջացնելու կարողու-  
թյուն ու իմաստնություն:

**Աղոթք** - Հայ՛ր, շուրջս շատ կտրված բաներ կան, և չգի-  
տեմ՝ որտեղից սկսել: Ցույ՛ց տուր ինձ՝ որտեղից սկսել: Ամեն:

**Կտրված բաներ շատ կան:**

**Աշխատենք դրանք միմյանց միացնել ու ամբողջացնել:**

Կարդա՛

Մատթոս 5.9, 13-16

Երանի՛ խաղաղու-  
թյուն անողներին:

Մատթ. 5.9

## Ներքին ուսուցում

**Բ**րազդիլական մի ընկերություն տնօրենը իր աշխատողներից գրավոր տեղեկագիր խնդրեց՝ իմանալու համար, թե նրանցից ով որքան ժամանակ է մաքրում սենյակը և քանի սենյակ է մաքրում: Մեկ շաբաթ անց տեղեկագիրն ստացավ, բայց մասնակիորեն լրացրած:

Պարզվեց, որ աշխատողների մեծ մասը գրել-կարդալ չգիտեր: Տնօրենը փոխանակ այդ մարդկանց աշխատանքից ազատելու՝ կարգադրեց, որ գրագիտության դասերի հետևեն: Հինգ ամիս անց բոլորն արդեն գրաճանաչ էին:

Աստված հաճախ է մեր թերությունները գործածում մեզ զինելու համար, որպեսզի կարողանանք շարունակել իր համար գործել: Պետրոսի կյանքն էլ լի էր սխալներով ու փորձառությունների պակասով: Նրա հավատը պակասեց, երբ փորձեց ջրի վրա քայլել: Նա վստահ չէր, որ Հիսուսը պարտավոր էր տաճարին տուրք վճարել (Մատթ. 14. 24-27): Նույնիսկ մերժեց խաչելություն ու հարություն մասին Հիսուսի մարգարեությունը (16. 21-23): Սակայն յուրաքանչյուր հարցի դեպքում Հիսուսը Պետրոսին ավելի ու ավելի սովորեցրեց, թե ինքն է խոստացյալ Մեսիան (Հմ. 16): Պետրոսը նայեց ու սովորեց այն, ինչի կարիքն ունեւր. «Դու վե՞ս ես, և այդ վե՞մի վրա իմ եկեղեցին կկառուցեն» (Հմ. 18):

Եթե որեւէ ձախողման համար հուսահատված ես, հիշի՛ր, որ Հիսուսը կարող է դա օգտագործել քեզ սովորեցնելու համար և առաջնորդել քեզ իրեն ծառայելու գործում:

**Աղոթք** - Տե՛ր, հավատում եմ, որ կարող ես ցանկացած փորձառություն գործածել՝ սովորեցնելու համար, թե Դու ով ես: Վերցրու՛ իմ ձախողումներն ու գործածի՛ր դրանք Քո փառքի համար: Ամեն:

**Անկասկած, մեր կյանքում կունենանք անհաջողություններ, սակայն Տե՛րը կարող է այնպես անել, որ իրեն ծառայենք:**

**Կարդա՛ր**  
**Մատթոս 16. 21-28**

Այդ վե՛մի վրա իմ եկեղեցին կկառուցեն: Մատթ. 16.18

## Փութաջան՝ Աստծո համար

Նրանք, ովքեր մեծացել են անգլիական մի գյուղում Ուելլյամ Քերրիի հետ (1761-1834), հավանաբար մտածում էին, որ նա շատ բանի չի կարողանա հասնել: Բայց նա այսօր հայտնի է որպես ժամանակակից միսիոներություն հայր: Ուելլյամը ջուլ-հակ ծնողների զավակ էր: Թեև ինքնուրույն սովորեց հունարեն, եբրայերեն և լատիներեն, սակայն լավ ուսուցիչ չկարողացավ լինել: Տարիներ անց Հնդկաստանում միսիոներ դառնալու տեսիլք ունեցավ, բայց բազմաթիվ դժվարություններ հաղթահարեց: Կորցրեց զավակին, կինը հոգեկան խանգարում ունեցավ: Երկար տարիներ որևէ դրական արձագանք չէր տեսնում նրանցից, ում ծառայում էր: Այդ դեպքում ի՞նչն էր, որ նրան մղեց թեկուզ այդ դժվարությունների մեջ, շարունակել իր ծառայությունը, Աստվածաշունչն ամբողջությամբ թարգմանել վեց և մասնակիորեն՝ քսանինը լեզուներով: Նա ասաց. «Նա կարող եմ տքնաջան աշխատել ու առաջ ընթանալ՝ հանուն որոշակի նպատակի»: Եվ հակառակ դժվարությունների՝ նվիրվեց Աստծուն ծառայելու գործին:

Քրիստոսի համար այսպիսի շարունակական նվիրումի մասին է հորդորում նաև եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակը: Նա կոչ է անում «չթուլանալ» (Եբր. 6.12), այլ ցույց տալ նույն ջանքը, որպեսզի հույսը մինչև վերջ հաստատ մնա» (Հմ.11): Վստահեցնում է, որ «Աստված անիրավ չէ, որ մոռանա ձեր գործերը և այն սիրո աշխատանքը, որ նրա անվան համար ցույց տվեցիք» (Հմ.10):

**Աղոթք** - Տե՛ր Աստված, օգնի՛ր, որ Քեզ հետևեմ իմ կյանքի բոլոր օրերին: Դժվարություններ հաղթահարելիս վստահ լինեմ, որ Դու ինձ հետ ես: Ամեն:

**Երբ Աստծուն ծառայելը դժվար կթվա, վստահ լինե՛ք, որ Նա պատրաստ է մեզ պետք եղածը տալու:**

### Կարդա՛ Եբր. 6. 9-12

Եվ փափագում եմք, որ ձեզանից ամեն մեկը նույն ջանքը ցույց տա, որպեսզի հույսը մինչև վերջ հաստատ մնա:

Եբր. 6.11

## Ամեն ինչ՝ ոչնչի համար

Հերոին թմրանյութի հանդեպ բուռն հակումը կարող է ողբերգական լինել: Այն գործածողները վարժվում են և աստիճանաբար ավելին են ուզում: Շատ չանցած՝ դրա քանակն այնքան են ավելացնում, որ մահվան դուռն են հասնում: Երբ թմրամոլները լսում են, որ մեկը մահացել է մեծ քանակությամբ թմրանյութ ընդունելուց, ոչ թե վախենում են, այլ հարցնում. «որտեղի՞ց կարող եմ ես էլ ճարել»:

Ք.Ս. Լուբան այս աղետալի վիճակի մասին է ազդարարել իր «Նամակներ դժոխքից» գրքում՝ նկարագրելով փորձուլթյան արվեստի մասին սատանայի տված բացատրությունը: «Սկսիր՝ հաճույքով, Աստծուն դուր եկած որևէ բան ներկայացրո՛ւ Նրա արգելած ձևով: Մի անգամ, որ ստանա, ավելի քիչ տուր՝ մինչև հրապուրես իրեն, որ ավելի շատ ուզի: Միշտ աճող հաճույքի մասին ցանկություն առաջացրո՛ւ, մինչև որ մարդու հոգին առնես՝ փոխարենը ոչինչ չտալով»:

Առակների 7-ում այդ կործանարար մոլուցքը ներկայացվում է որպես սեռական մեղք: Սեռական մղումը աստվածատուր է, բայց երբ դրա հաճույքը փնտրում ենք ամուսնությունից դուրս, նմանվում ենք «սպանդանոց զնացող արջառի» (Հմ.22):

Մեղքը կարող է գրավիչ ու խելահեղ լինել, բայց միշտ էլ մահվան է տանում (Հմ.27): Երբ Աստծո տված զորությամբ կարողանանք խուսափել մեղքի փորձությունից, ճշմարիտ երջանկություն կգտնենք Իրենով:

**Աղոթք** - Սուրբ Հոգի՛, գիտեմ, որ անգոր եմ փորձությանը դիմագրավելու: Քո կարիքն եմ զգում, օգնի՛ր ինձ: Ամեն:

**Մեզ փորձություններ են սպասում: Սակայն Աստծո զորությամբ կկարողանանք հաղթահարել դրանք:**

### Կարդա՛ր Առակներ 7. 10-27

Դժոխքի ուղիներն են նրա տունը, որոնք իջեցնում են դեպի մահվան շտեմարանները: Առ.7.27



## Վերականգնման պատրաստ

**Ե**րբ Գերմանիայի բանակում էի, 1960-ին նոր «Վոլքսվա-գեն» մեքենա գնեցի: Այն շատ գեղեցիկ էր, դրսից մուգ կանաչ, իսկ ներսից սրճագույն կաշվե աթոռներով: Բնակա-նաբար, տարիների ընթացքում մեքենան մաշվեց, մի պատա-հարից էլ դռներից մեկը փչացավ: Նորոգելու ժամանակն էր, բայց գումար չլինելու պատճառով չկարողացա ծրագրիս իրա-կանացնել:

Բարեբախտաբար, կատարյալ տեսիլ-քի ու բոլոր բարիքների աղբյուր Աստ-վածը շուտ չի լքում կոտրված ու կա-րիքավոր մարդկանց:

84-րդ սաղմոսում նկարագրվում են այն ժողովուրդը, որը վերականգնման լավագույն թեկնածուն էր և այն Աստ-վածը, որ կարող էր վերականգնել: Առիթը Աստծո դեմ ապա-տամբած ու պատժված Իսրայելի ժողովրդի՝ յոթանասնամյա աքսորից վերադարձն էր: Ետ նայելով՝ նրանք կարող էին ար-ժանանալ Նրա բարերարութանն ու ներմանը (Հմ. 1.3): Նրանք ցանկութուն ունեցան Աստծո օգնութունը խնդրելու (Հմ. 4-7) և Նրանից լավ բաներ ակնկալելու (Հմ. 8-13):

Ո՞վ կա մեր մեջ, որ տարբեր առիթներով ցավ, վիրավորանք ու կոտրվածութուն զգացած չլինի: Երբեմն այդ զգացումն ու-նենում ենք մե՛ր արածների պատճառով: Սակայն Տերը վերա-կանգնող ու ներող Աստվածն է: Եվ բոլոր նրանք, ովքեր խո-նարհաբար մոտենում են Իրեն, երբեք անհույս չեն մնում: Նա բաց ձեռքերով ընդունում է Իրեն դիմողներին: Իսկ դեպի Ին-քը զնացողները ապահովութուն են գտնում Նրա թևերի մեջ:

**Աղոթք** - Տե՛ր, օգնի՛ր ինձ, որ չանտեսեմ այն նշանները, որոնք ցույց են տալիս, որ ես վերանորոգման կարիք ունեմ: Ամեն:

Կարդա՛ր  
Սաղմոս 84

Աստված. դու դարձյալ մեզ պի-տի փրկես, և ժողո-վուրդդ պիտի ու-րախանա քեզնով:  
Սաղմ. 84.7

**Ցավի ու կոտրվածության զգացումե՞ր ունես:  
Դիմի՛ր Աստծուն, որ քեզ վերականգնի:**

## Ո՞վ ենք մենք

**Ե**րբեք չեմ մոռանա այն օրը, երբ ապագա տիկնոջս ներկա-  
յացրի իմ ընտանիքի անդամներին: Նրանց աչքերը փայլում  
էին: Ավագ եղբայրներս ընկերուհուս հարցրին. «Ի՞նչ լավ բան  
ես տեսել այս տղայի մեջ»: Նա ժպտալով վստահեցրեց, որ ես  
Աստուծո շնորհիվ եմ դարձել այն մարդը, որին ինքը սիրել է:

Ինձ դուր եկավ այդ խելացի պատաս-  
խանը, որովհետև այն ցույց էր տալիս  
նաև, թե Տերը ինչպես է տեսնում մեր  
անցյալից ավելին: Գործք առաքելոցի  
Գ-ում Աստված Անանիային պատվի-  
րեց բժշկել եկեղեցին հալածող Սողո-  
սին, որին ինքը կուրացրել էր: Անանի-  
ան չէր հավատում լսածին, որովհետև Սողոսը բազում չարիք-  
ներ էր գործել սրբերին, նրանց կապել, բանտարկել և նույնիսկ  
մահապատժի էր ենթարկել: Աստված Անանիային հորդորեց, որ  
չկենտրոնանա, թե ով է եղել Սողոսը, այլ թե ով է հիմա. ավե-  
տարանիչ, որը աշխարհին, հեթանոսներին ու թագավորներին  
պիտի տարածի փրկության բարի լուրը (Հմ.15): Անանիան տե-  
սավ Սողոսին՝ որպես փարիսեցի ու հալածող, իսկ Աստված տե-  
սավ Պողոսին՝ որպես առաքյալ ու ավետարանիչ:

Երբեմն մենք մեզ կարող ենք տեսնել այնպես, ինչպես կանք՝  
մեր բոլոր թերություններով ու անհաջողություններով: Սա-  
կայն Աստված մեզ տեսնում է որպես նոր ստեղծված անձինք:  
Ոչ թե ո՞վ ենք եղել, այլ ո՞վ ենք Տեր Հիսուսով և ո՞վ ենք լի-  
նելու Սուրբ Հոգու գորությամբ: Ո՞վ Տեր, սովորեցրու՛, որ  
մենք մեզ և ուրիշներին նայենք այլ կերպով:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, օգնիր, որ կարողանամ իմ ամ-  
բողջ ինքնությունը գտնել Քո մեջ: Արտոնիր, որ խոնարհա-  
բար ուրիշներին տեսնեմ Քո շնորհքի աչքերով: Ամեն:

**Դու կարող ես Տեր Հիսուսով նոր ստեղծվել:  
Այդ նոր ինքնությունդ տես:**

Կարդա՛  
Գործք 9. 13-16

Որովհետև նա ինձ  
համար ընտրված  
անոթ է: Գործք 9.15

## Գամփոռը և ցնցուղը

**Ա**մռանը գրեթե ամեն օր մեր տան ետևի զբոսայգում գամփոռի ու ցնցուղի մասնակցությունը մի հաճելի ներկայացման ենք ականատես լինում: Առավոտյան 6-անց 30-ի մոտ, երբ ցնցուղները նոր-նոր սկսում են գործել, հայտնվում է Ֆիֆի անունով գամփոռը: Ֆիֆիի տերը ազատ է արձակում նրան, և շունն արագ վազում է դեպի ցնցուղն ու հարձակվում վրան: Այս տեսարանը Ֆիֆիի՝ թրջվելու անհագ ցանկությունն արագաճող պատկեր է:

Աստվածաշնչում գամփոռեր ու ցնցուղներ չկան: Սակայն Պողոսի՝ եփեսոսացիներին ուղղված նամակի 3-րդ գլուխը ինչ-որ ձևով ինձ Ֆիֆիին է հիշեցնում: Պողոսն ասում է, որ եփեսոսի եկեղեցու հավատացյալները «սիրո մեջ արմատ գցած ու հաստատված լինեն: Որպեսզի բոլոր սրբերի հետ իմանան, թե ինչ են լայնությունը և երկարությունը, բարձրությունը և խորությունը: Որպեսզի ճանաչեն Քրիստոսի սերը, որ ամեն գիտությունից գերազանց է, որպեսզի Աստծո ամեն լիությունը լցվեն» (Հմ.18-19):

Այսօր մենք հրավիրված ենք ունենալու Աստծո փորձառությունը, որի հանդեպ անսահման սերը ամենի ինչից վեր է ու մեծ, որպեսզի մենք էլ կարողանանք իր բարությունը թրջվել, հագնել ու կատարելապես գոհանալ: Մենք նաև ազատ ենք սուզվելու, ընկղմվելու Նրա մեջ, ուրախությունը ու հրճվանքով հարաբերվելու Նրա հետ, ով միակն է, որ կարող է մեր սրտերն ու կյանքերը իմաստությունը, նպատակով ու սիրով լցնել:

**Աղոթք** – Հայր, շնորհակալ եմ Քո անսահման ու գոհացնող սիրո համար: Խնդրում եմ օգնիր, որ մեր հանդեպ Քո սիրո փորձառությունն ունենանք: Ամեն:

**Ի՞նչ խոչընդոտներ ունես, որոնք արգելում են Աստծո անսահման ու գոհացուցիչ սիրուն հանձնվել:**

**Կարդա՛**  
**Եփես. 3. 14-21**

Իմ ծնկները ծալում եմ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հոր առաջ... որպեսզի Աստծու ամեն լիությամբ լցվեք:  
Եփես. 3.14, 19

## Աղբից` գանձ

«Աղբի մարդու» տունը Բողոտայի շրջանի մի գառիվեր ճանապարհի վրա է: Այս տանը որևէ առանձնահատուկ բան չկա: Բացի նրանից, որ Կոլումբիայի մայրաքաղաքի աղքատ շրջանում բնակության համար նախատեսված այդ տանը 25 հազար անտեսված գրքեր կան, որոնք ժողի Ալբերտո Կուտիերեզը հավաքել է համայնքի աղքատ փոքրիկների համար: Այդ շրջանի փոքրիկները ամեն շաբաթվա վերջին հավաքվում են այդ «Գրադարան-տուն» կոչված վայրում: Նրանք պարոն ժողի այս համեստ տունը անգին գանձ են համարում:

Նույն բանը կարելի է ասել Հիսուսի յուրաքանչյուր հետևորդի համար: Մենք շինված ենք սովորական կավով, ճեղքերով լի և դյուրաբեկ: Բայց և որպես Աստվածատուր տուն՝ զորություն

սովող Իր Հոգուն, որը կարողություն է տալիս մեզ Քրիստոսի բարի լուրը տարածելու ցավող ու կոտրված աշխարհում: Սա մեծ գործ է սովորական ու դյուրաբեկ մարդկանց համար:

Պողոսը Կորնթոս հին քաղաքի հավատացյալներին ասաց. «Այս գանձն ունենք Հոգե անոթներում, որպեսզի զորության գերազանցությունն Աստծունը լինի և ոչ թե մեզանից» (Բ. Կորնթ. 4.7), որովհետև այս շրջանից զանազան տեսակի մարդիկ կային, որոնցից շատերը «իրենց անձերը քարոզելու» փորձառություն են ունեցել (Հմ.5): Պողոսն ասաց, որ ուրիշներին պատմեն մեր մեջ ապրող այս անգին Մեկի մասին: Ի՛նչքն ու միայն Ի՛նչքն ունի այն զորության գերազանցությունը, որ մեր կյանքը փոխում է անգին գանձի:

**Աղոթք** – Տե՛ր Դիսուս, իմ այս սովորական կյանքը լցրու՛ Քո Դոգու զորությամբ: Ամեն:

**Մեր մեջ բնակվող Սուրբ հոգու զորությամբ մենք կարող ենք տարածել Քրիստոսի բարի լուրը:**

### Կարդա՛ր Բ Կորնթ. 4. 5-7

Բայց այս գանձն ունենք հողե անոթներում, որպեսզի զորության գերազանցությունն Աստծունը լինի և ոչ թե մեզանից:  
Բ Կորնթ. 4.7

## Սիրո համար, թե՞ փողի

**Ի**ռլանդացի բանաստեղծ Օսկար Ուայլդն ասել է. «Երբ ես երիտասարդ էի, մտածում էի, որ փողը ամենակարևոր բանն է կյանքում: Հիմա, որ ծեր եմ, դարձյալ գիտեմ, որ այդպես է»: Նրա այս մեկնաբանությունը զվարճախոսություն էր, որովհետև գրողն ընդամենը 46 տարի է ապրել, հետևաբար նա ծեր չէր էլ եղել: Ուայլդը լավ հասկացել էր, որ կյանքը միայն փող չէ:

Փողը ժամանակավոր է, գալիս է ու գնում: Ուստի կյանքը շատ ավելին է, քան փողով ինչ-որ բան գնելը: Հիստուն իր ժամանակակից բոլոր մարդկանց՝ աղքատ թե հարուստ, մարտահրավեր նետեց, որ վերանայեն արժեքների համակարգը: Ղուկասի 12.15-ում Հիստուն ասաց. «Տեսե՛ք և զգուշացե՛ք ագահությունից, որովհետև մարդուս կյանքը նրա ունեցվածքի շատությունից չէ»: Մեր մշակույթում, որտեղ մարդիկ մշտապես կենտրոնացած են ավելիին, նորին, ավելի լավին հասնելու, շատ ասելիք կա բավարարված լինելու, փողի և ունեցվածքի մասին մեր հեռանկարի շուրջ:

Հարուստ մարդը, Հիստունին հանդիպելով, տրտմեց ու գնաց, որովհետև շատ ունեցվածք ուներ, որից չէր ուզում հրաժարվել (Ղուկ. 18.18-25): Բայց մաքսավոր Զաքեոսը իր շատ ձեռքբերումներից հրաժարվեց (Ղուկ. 19.18): Տարբերությունը Քրիստոսի սիրտը գրկելու մեջ է: Իր շնորհքով մենք կարող ենք մեր ունեցվածքի հանդեպ առողջ վերաբերմունք ունենալ, որպեսզի այն մեզ իր ճանկերի մեջ չառնի:

**Աղոթք** – Հայր, տու՛ր ինձ Քո իմաստնությունը, որպեսզի կարողանամ իմ ունեցվածքի հանդեպ ճիշտ կեցվածք և արժեքների ճիշտ ծրագիր ունենալ, որը ցույց կտա հավիտենականությունը: Ամեն:

**Քո ունեցածները ժամանակավոր են, թե՞ մնայուն:**

### Կարդա՛ր Ղուկաս 19. 1-10

Տեսե՛ք և զգուշեցե՛ք ագահությունից. որովհետև մարդուս կյանքը նրա ունեցվածքի շատությունից չէ: Ղուկ. 12.15

## Յարցրու՛ նրան, ով մի հատ ունի

**1**900-ական թվականների սկզբին Պեքարտ ավտորնկերությունը գնորդներին հրապուրելու համար այսպիսի կարգախոս էր պատրաստել. «Հարցրու՛ նրան, ով մի հատ ունի»: Լոզունգը մեծապես նպաստեց, որ այդ ընկերության վարկանիշը բարձրանա՝ որպես այդ ժամանակվա շքեղ ավտոմեքենա արտադրող գերիշխող ընկերություն: Պեքարտը հասկացել էր, որ իրենց արտադրած մեքենաների համար ավելի զորավոր գովազդ, քան մարդկանց անձնական վկայությունը, չի կարող լինել:

Աստծո՛ մեզ համար արած բարությունն անձնական փորձառություն մասին ուրիշներին հայտնելը ևս մեծ ներգործություն կունենա: Նա հրավիրում է, որ մեր երախտագիտությունը ու ուրախություն մասին հայտարարենք ոչ միայն իրեն. այլև մեր շուրջը եղողներին (Սաղմ. 65.1): Սաղմոսերգուն իր երգով հայտարարում է Աստծո պարգևած ներման մասին, երբ ինքը իր մեղքերից հրաժարվեց (Հմ.18-20): Աստված հիանալի գործեր է արել պատմության ընթացքում, ինչպես Կարմիր ծովի ջրերը ցամաքեցնելը (Հմ.6): Նա նաև հիանալի բաներ է անում յուրաքանչյուրիս կյանքում՝ տառապանքի մեջ մեզ հույս ներշնչելով, Սուրբ Հոգին տալով, որպեսզի իր խոսքը հասկանանք և մեր ամենօրյա կարիքները հոգալով: Երբ մեր կյանքում Աստծո արած գործերի մասին անձնական փորձառություն մասին հայտնենք այլոց, մենք ավելի արժեքավոր բան արած կլինենք, քան եթե ասենք, թե մի բան ենք գնել: Մենք ընդունում ենք Աստծո բարությունը և քաջալերում ենք իրար մեր կյանքի ճանապարհին:

**Աղոթք** – Սիրելի՛ Աստված, օգնի՛ր ինձ, որ հայտարարեմ այն բոլոր հիանալի բաների մասին, որ Դու ես արել իմ կյանքում: Ամեն:

**Տեսնու՞մ ես Աստծո արած բարությունները քեզ:  
Պատմի՛ր դրանց մասին ուրիշներին:**

**Կարդա՛ր**  
**Սաղմոս 65. 1, 8-20**

Ձեզ պատմեմ, թե ինչ արեց նա (Աստված) իմ անձի համար: Սաղմ. 65.16

## Նկանակներ և ձկներ

**Պատանին**, վերադառնալով եկեղեցուց, ուրախ հայտարարեց, թե այդ օրվա դասը մի փոքրիկ տղայի մասին է եղել, «որն ամբողջ օրը նկանակ ու ձուկ էր որսում»: Բնականաբար, նա խոսում էր այն պատանու մասին, որն իր ունեցած նկանակներն ու հացերն էր նվիրում: Հիսուսն ամբողջ օրը սովորեցնում էր մեծ բազմությունը, և աշակերտները առաջարկեցին, որ նրանց ազատ արձակի, որ գնան գյուղ և ուտելիք գնեն: Հիսուսը պատասխանեց. «Հարկ չկա, որ գնան, դուք նրանց ուտելիք տվեք» (Մատթ. 14.16): Աշակերտները շփոթվեցին, որովհետև 5000-ից ավելի մարդ կար կերակրելու: Պատմության շարունակությունը հայտնի է մեզ՝ պատանին տվեց իր ճաշը՝ հինգ նկանակ և երկու ձուկ: Հիսուսն էլ դրանով կերակրեց հինգ հազարանոց բազմությունը (Հմ. 13-21): Մեկնաբանություններից մեկի համաձայն՝ պատանու առատաձեռնությունը մղեց ներկաներին, որ կիսվեն իրենց ունեցածով, բայց Մատթեոսը հստակորեն բացատրում է, որ տեղի ունեցածը հրաշք է: Եվ այս դեպքը երևում է բոլոր ավետարաններում: Ի՞նչ կարող ենք սովորել այս հանգամանքից: Մեր ընտանիքը, հարևանները, բարեկամները, գործընկերներն ու շրջապատում եղած այլ մարդիկ տարբեր աստիճանի կարիքներ ունեն: Նրանց ուղարկենք մեզանից ավելի կարողություն ունեցողների մոտ, թե՞ մեր պատրաստակամությունը հայտնենք օգնելու: Անշուշտ, որոշ մարդկանց կարիքները հոգալը մեր ուժերից վեր է: Բայց ոչ միշտ: Ինչ որ ունես՝ ողջագուրում, ազնիվ խոսք, լսող ականջ, մի կարճ աղոթք, մի իմաստություն, տուր՝ Հիսուսին և տե՛ս, թե՛ նա ինչեր կարող է անել:

**Աղոթք** - Տե՛ր Դիսուս, մեզ աչքե՛ր տուր տեսնելու համար այն միջոցները, որոնցով կարող ենք ուրիշների կարիքները հոգալ: Առաջնորդի՛ր ու օգտագործի՛ր մեզ: Ամեն:

**Ի՞նչ կարող ես անել մեկ ուրիշի կարիքը հոգալու համար:**  
Եվ ի՞նչ կարող ես տալ Դիսուսին:

### Կարդա՛ Մատթեոս 14.13-21

Դիսուսն էլ ասաց նրանց. «Հարկ չկա, որ գնան. դուք նրանց ուտելիք տվեք»: Մատթ. 14.16

## Ետ պիտի գա՞ս

**Ռ**անի և Նենաիի ամուսնությունը վտանգված էր: Նենաին Ռդավաճանել էր ամուսնուն, ապա Աստծուն խոստովանել էր իր մեղքը և ճշմարտությունը հայտնել ամուսնուն: Ռանը, փոխանակ ամուսնալուծվելու, հնարավորություն տվեց կնոջը ետ բերել իր վստահությունը, ցույց տալ, որ իրոք փոխվել է: Եվ Աստված հրաշալիորեն վերանորոգեց նրանց ընտանիքը: Ռանիի արարքը Աստվածային ներման և մեզ նման մեղավորների հանդեպ սիրո արտահայտություն է: Օսեեն այս բանը լավ էր հասկացել: Աստված նրան հրամայեց մի պոռնիկ կին առնել, ցույց տալու համար Իսրայելի անհավատարմությունը Իրեն (Օսեե 1): Դա բավարար չէր, ու երբ Օսեեի կինը նրան թողեց, Աստված նրան ասաց, որ ետ կանչի կնոջը. «Դարձյալ դու գնա՛ և սիրի՛ր մի կին, որ սիրի չարությունը և շնացող լինի, ինչպես որ Աստված սիրեց իսրայելացիներին, իսկ նրանք օտար աստվածներին էին նայում» (Հմ.3.1): Իրենց արած բոլոր անհնազանդություններից հետո Աստված ցանկացավ մտերիմ հարաբերություն ունենալ Իր ժողովրդի հետ: Ինչպես Օսեեն սիրեց իր անհավատարիմ կնոջը, գնաց նրա հետևից ու զոհվեց նրա համար, նույնպես էլ Աստված սիրեց Իր ժողովրդին: Նրա արդար բարկությունն ու նախանձը Իր մեծ սիրուց էին գալիս: Նույն Աստվածը փափագում է, որ մենք էլ Իր մոտ լինենք: Երբ հավատքով մոտենում ենք Իրեն, կարող ենք վստահ լինել, որ Իր մեջ գտնելու ենք ամբողջական գոհացում:

**Աղոթք** - Երկնքում բնակվող Աստված, որքա՞ն հիանալի ու մեծ է Քո սերը նույնիսկ ինձ նման մեղավորիս համար: Իմ գործած բոլոր սխալների համար արժանի չեմ Քո սիրուն: Շնորհակալ եմ, որ ներում ես, ետ ես վերցնում ինձ ու վերաշինում ես մեր հարաբերությունը: Ամեն:

**Հակառակ մեր բոլոր մեղքերին ու հանցանքներին՝  
Աստված սիրում է մեզ:**

### Կարդա՛ Օսեե 3.1-5

Սիրի՛ր մի կին, ինչպես որ Աստուած սիրեց իսրայելացիներին, իսկ նրանք օտար աստվածներին էին նայում: Օսեե 3.1



## Կրկին պատերազմի մեջ

**Տ**ա մանկան նման վատ խոսքեր էր ասել իր ծնողներին: Չէր մտածում, որ դրանք վերջինը կարող էին լինել իրենց փոխհարաբերություններում: Եվ այժմ, անգամ տարիների հեռվից չի կարողանում ներել իրեն, հանցանքն ու ավստասանքը տանջում են: Բոլորս էլ ավստասանքներ ունենում ենք, որոնց մեջ ցավալիններն էլ են լինում: Սակայն Սուրբ Գիրքը մեզ հանցանքներից ձեռքազատվելու ճանապարհ է ցույց տալիս: Վերցնենք մի օրինակ: Չկա Դավիթ թագավորի գործած հանցանքը արդարացնող որևէ բան: «Հետևյալ տարին, երբ թագավորները արշավի էին ելնելու», Դավիթը մնաց Երուսաղեմում (Բ.Թագ. 11.1): Պատերազմից հեռու՝ նա գողացավ ուրիշի կնոջը և փորձեց իր արարքը քողարկել մարդասպանություններ (Հմ.2-5, 14-15): Աստված կանգնեցրեց Դավիթի գահավեժ անկումը և Նաթան մարգարեի միջոցով դատապարտեց նրան (12. 1-13), սակայն Դավիթն իր կյանքի մնացած օրերն ապրեց իր գործած մեղքի գիտակցումով: Երբ Դավիթը բարձրանում էր մոխիրներից, նրա հրամանատար Հովաբը շահում է այն պատերազմը, որ Դավիթն էր շահելու (12.26): Այնուհետև Հովաբը մարտահրավեր է նետում Դավիթին՝ ասելով. «Արդ, հավաքի՛ր մնացած ժողովրդին, քաղաքի դիմաց բանակ դի՛ր ու գրավի՛ր այն» (Հմ.28): Վերջապես Դավիթը կարողացավ վերադառնալ Աստծո նշած վայրը. «Հավաքեց ամբողջ ժողովրդին, գնաց Ռաբաթ ու պատերազմելով գրավեց այն» (Հմ.29): Անկախ մեր կատարած գործերից՝ մեր Հայրը Իր ամբողջական նվիրումն է պարգևում: Մենք կարող ենք բավարար շնորհք գտնել, ինչպես Դավիթը գտավ կրկին պատերազմի մեջ մտնելու համար:

### Կարդա՛ր Բ Թագ. 12. 26-31

Ապա եթե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է ու արդար, որ մեր մեղքերը ների մեզ և մաքրի մեզ ամեն անիրավություններից: Ա Հով. 1.9

**Աղոթք** - Հայր, մեղքի մեջ եմք, օգնի՛ր մեզ, որ հավատով ու համոզումով դեպի Քեզ գանք, որ Դու ներես մեզ: Ամեն:

**Աստծո սերն է որոշիչ, ոչ թե մեր մեղքերը:**

## Հավատքի ժառանգություն

**Բ**իլ Գրահամի՝ տասնվեց տարեկանում հավատքի գալու վճռոտորոշ պահից դեռ շատ առաջ նրա ծնողների նվիրումը Հիսուսին հստակ էր: Բիլի հայրն ու մայրը հավատքի էին եկել մանկուց, որովհետև մեծացել են հավատացյալ ընտանիքներում: Ամուսնությունից հետո էլ նրանք շարունակեցին այդ ժառանգությունը և սիրով դաստիարակեցին իրենց զավակներին՝ հավատաբերի ազդեցությամբ, Աստվածաշունչ կարգալուծով և նրանց հետ եկեղեցի հաճախելով: Բիլի ծնողների դրած հաստատուն հիմքը մասն է այն հողի, որ Աստված գործածեց իրեն հավատի բերելու և որպես համարձակ ավետարանիչ իր կոչման համար: Պողոսի երիտասարդ հովանավորյալ Տիմոթեոսը նույնպես օգտվել է հոգևոր գորեղ հիմքից: Պողոսը գրեց. «Անկեղծ հավատքը, որ քո մեջ է, որ նախ քո Լոիդա տատի ու քո Եփեսիկ մոր մեջ բնակվեց, համոզված եմ, որ քեզանում էլ է» (Բ.Տիմ. 1.5): Այս ժառանգությունն օգնեց, որ Տիմոթեոսի սիրտը պատրաստվի և ուղղվի դեպի Քրիստոսի հավատքը: Հիմա Պողոսը խրախուսում է Տիմոթեոսին, որ շարունակի այս հավատքի ժառանգությունը (հմ.5), որ Սուրբ Հոգու միջոցով «վերարձարժի Աստծո շնորհը», որ «գորություն, սիրո և զգաստության հոգի» է պարգևում մեզ (հմ.6-7): Հոգու տված գորությունը Տիմոթեոսը կարող է անվախ ապրել ավետարանի համար (հմ.8): Զորավոր հոգևոր ժառանգությունը չի կարող երաշխավորել, որ մենք հավատքի ենք գալու, սակայն օրինակը և ուրիշների ասածը կարող են օգնել, որ ճանապարհը պատրաստվի:

**Կարդա՛ր**  
**Բ Տիմ. 1. 5-14**  
Միտքս բերելով այն անկեղծ հավատը, որ քո մեջ է, որ նախ քո Լոիդա տատի ու քո Եփեսիկ մոր մեջ բնակվեց: Բ Տիմ. 1.5

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ իմ հավատքը կերտելուն օգնող հավատացյալների և Սբ. Հոգու շարունակական աշխատանքի համար: Օգնի՛ր, որ վստահեմ Քրիստոսի Հոգուն, որպեսզի կարողանամ արիաբար վկայել Քեզ: Ամեն:

**Աստված քո հավատքը հաստատելու համար ուրիշներին օգտագործեց:** Կարո՞ղ ես դու էլ նույնն անել ուրիշների համար:

## Անկործանելի սեր

**Ե**րբ առաջին անգամ մեր հետնաբազկում սկսեցին ջրեր հոսել, դրանք նման էին ամռանը ժայռի միջից կաթկթող ջրի բարակ երակի: Ծանր փայտե տախտակները որպես կամուրջ էին ծառայում, որոնց վրայով հանգիստ կարելի էր անցնել: Ամիսներ անց, սակայն, հորդ անձրևներ եկան մեր շրջանում, և այդ փոքրիկ առուն դարձավ չորս ոտք խորուխյամբ ու տասը ոտք լայնուխյամբ արագահոս մի գետ: Հորդահոս ջուրը քանդեց ու տարավ տախտակները:

Վարար ջուրը ավերում է իր ճամփին հանդիպած ամեն ինչ: Բայց կա մի բան, որ հաստատուն է մնում թե՛ ջրհեղեղի, և թե՛ մեզ սպառնացող այլ ավերիչ ուժերի դեմ: «Առատ ջրերը չեն կարող սերը մարել, և ոչ էլ գետերը կարող են արգելել այն» (Երգ Երգոց 8:7): Սիրո հարատևող ուժը հաճախ ներկա է ոռոմանտիկ հարաբերություններում, սակայն այն ամբողջովին արտահայտվում է Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով մեր հանդեպ Աստծո ունեցած սիրո մեջ:

Երբ մեզ համար հաստատուն ու վստահելի բաները խորտակվում են, մեր հուսախաբուծյունները նոր հասկացությունների դուռ են բացում Աստծո՝ մեր հանդեպ ունեցած սիրո համար: Նրա սերը բարձր, խորը, զորավոր ու մնայուն է, քան որևէ այլ բան այս աշխարհում: Ինչ որ դիմազրավում ենք, Իր հետ ենք դիմազրավում: Նա մեր կողքին է, մեզ բարձրացնում է և հիշեցնում, որ մենք սիրված ենք:

**Աղոթք** - Երկնավոր Դայր, շնորհակալ եմ, որ կորստյան ու մերժումի պահերին մխիթարում ես ինձ Քո սիրով: Օգնի՛ր հավատալու ու վստահ լինելու, որ Դու կհոգաս իմ հոգու բոլոր կարիքները: Ամեն:

**Ֆիշի՛ր, որ Աստծո սերն անխախտ է ու վստահի՛ր Նրա հոգատարությանը:**

**Կարդա՛ երգ Երգոց 8. 6-7**

Առատ ջրերը չեն կարող սերը մարել, և ոչ էլ գետերը կարող են արգելել այն: Երգ Երգոց 8.7

## Քաջալերանքի զորութունը

**Ե**րբ Բենջամին Ուեսթը փոքր էր, փորձեց նկարել իր քրոջը, տեսնելով այդ ստեղծագործությունը, համբուրեց որդու ճակատը: Միայն տարիներ անց նա պիտի խոստովաներ, որ այդ համբուրյն է իրեն դարձրել արվեստագետ ու Ամերիկայի հայտնի նկարիչը: Զորեղ է քաջալերանքի ուժը: Գծագրել սովորող մանկան նման Պողոսն էլ իր առաքելությունն առաջին տարիներին շատ մեծ վարկ չուներ: Սակայն Բառնաբասը հաստատեց նրա կոչումը: Այդ խրախուսանքի շնորհիվ էր, որ եկեղեցին Սողոսին ընդունեց որպես հավատակից (Գործք. 9.27): Բառնաբասը քաջալերեց նաև նոր աճող Անտիոքի եկեղեցին՝ օգնելով, որ այն դառնա ամենաազդեցիկ եկեղեցին (11.22-23): Եվ Բառնաբասի, ինչպես նաև Պողոսի խրախուսանքի շնորհիվ էր, որ Երուսաղեմի եկեղեցին հեթանոս հավատացյալներին ընդունեց որպես Քրիստոնյա (15.19): Հետևաբար, առաջին եկեղեցու պատմությունը շատ բանով իրապես քաջալերանքի օրինակ է:

Նույնն էլ մեր կյանքում է: Կարող ենք մտածել, թե խրախուսանքը սոսկ մեկը մյուսին դրվատել է նշանակում: Այդպես խորհելը կնշանակի չտեսնել դրա իրական զորությունը: Իրականում այն միջոց է, որով Աստված ձևավորում է մեր և եկեղեցու կյանքը:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, օգնի՛ր, որ կարողանամ տեսնել քաջալերանքի կարևորությունը և շնորհակալ լինեմ, երբ այն ստանամ Քեզանից: Օգնի՛ր, որ ես էլ ուրիշներին քաջալերեմ: Ամեն:

**Աստված մեզ քաջալերում է:**

**Մենք էլ պատրաստ լինենք ուրիշներին քաջալերել:**

**Կարդա՛ր**  
**Գործք 15. 12-21**

Եվ ողջ բազմությունը լռեց. լսում էին Բառնաբասին ու Պողոսին, որոնք պատմում էին, թե Աստված հեթանոսների մեջ իրենց ձեռքով որքան նշաններ ու հրաշքներ կատարեց: Գործք 15.12

## «Դժվար պահեր»

**2**017-ին Հարվի փոթորկից տուժածներին օգնելու համար Հյուսիսային մեկնեցինք: Այդ ճամփորդությունը մեր հավատքին յուրատեսակ մարտահրավեր եղավ, ու մենք, աղետյալների հետ մնալով փոթորկից կործանված եկեղեցու և տների մեջ, զորացանք:

Տարերքից հետո մարդկանց ցուցաբերած այդ պայծառ հավատքը այն նույն հավատքն է, որը արտահայտված է Ն.Ք.յոթերորդ դարի վերջին Ամբակում մարգարեի խոսքում: Նա կանխատեսել էր, որ «դժվար» ժամանակներ են գալու (1.5-2.1), որ լավ լինելուց առաջ շատ բաներ ավելի վատ են լինելու: Մարգարեությունների վերջում երկրային կորուստների մասին խորհուրդներն են, և այնտեղ նշված դժվար բառը եռյակ հայտնություն է. «եթե անգամ թզենին իր պտուղը չտա, որթատունկը ծնունդ չունենա, ճիթենին բերք չտա, դաշտերը կերակուր չտան, հոտերը դադարեն արածելուց, և մսուրների մեջ եզներ չլինեն» (3.17):

Դժվարին կորուստների ժամանակ, ինչպիսիք են աշխատանքի կամ առողջության կորուստը, սիրելիի մահը կամ էլ որևէ բնական աղետ, ինչպե՞ս ենք պահում ինքներս մեզ: Ամբակում՝ «դժվար ժամանակների» տաղերգը մեզ կոչում է հաստատ հավատքի, վստահելու Աստծուն, որ մեր փրկության աղբյուրն է (Հմ.18), մեր ուժի, երեկվա, այսօրվա և բոլոր ժամանակների կայունությունը (Հմ.19): Վերջում, բոլոր նրանք, ովքեր վստահում են Նրան, հուսախաբ չպիտի լինեն:

**Աղոթք** - Դժվար, երբ կյանքի հանգամանքները դժվար են ու անկայուն, խնդրում եմ հավատս խարսխիր Քեզ վրա, որ փրկությանս ու գործությանս աղբյուրն եմ: Ամեն:

**Դժվարության ու նեղության ժամանակ Աստված է մեր օգնականը: Վստահիր Նրան:**

**Կարդա՛ր**  
**Ամբակում 3. 17-19**

Ես պիտի ուրախանամ Տիրոջով,  
ուրախանամ իմ փրկիչ Աստծով:  
Ամբ. 3.18

## Նշել Աստծո ստեղծագործությունը

**Մ**ինչ երաժշտությունը կհնչեր եկեղեցու սրահում, բեմ բարձրացավ դալտոնիկ գծանկարիչ՝ Լենս Բրաունը: Կանգնեց մեծ սպիտակ կտավի դիմաց՝ թիկունքով դեպի ժողովուրդը և վրձինը թաթախեց սև ներկի մեջ: Վրձնի նուրբ հարվածներով մի խաչ գծագրեց, ապա յուրաքանչյուր վրձնահարվածով նա պատկերում էր Քրիստոսի խաչելությունն ու հարություն պատկերները: Նա պաստառի մեծ մասը պատեց սև ներկով, ապա վրան ավելացրեց կապույտ ու ճերմակ գույներ՝ ամբողջացնելով այս վերացական գծագրությունը ընդամենը վեց րոպեում: Ապա վերցրեց կտավը, գլխիվայր շրջեց, և երևաց Հիսուսի՝ կարեկցությունը լի թաքցված հայացքը:

Կարդա՛ր  
Յոռմ. 12. 3-8

Միայն թե զանազան պարզևներ ունենք ըստ այն շնորհի, որ մեզ տրված է: Յոռմ. 12.6

Բրաունն ասաց, որ դժկամությունը է ընդունել եկեղեցու պաշտամունքի ընթացքում ճեպանկարներ անելու ընկերոջ առաջարկը, բայց հիմա ճամփորդում է երկրեերկիր, որպեսզի պաշտամունքի պահերն ուղեկցի Քրիստոսին պատկերող իր նկարներով:

Պողոս առաքյալը հաստատում է Աստծո տված պարզևների տարբերության արժեքն ու նպատակը: Հավատքի ընտանիքի յուրաքանչյուր անդամի տրված է Տիրոջը փառաբանելու և միմյանց սիրո մեջ մղելու շնորհ (Հռոմ. 12.3-5):

**Աղոթք** - Յայր, շնորհակալ ենք, որ մեզանից յուրաքանչյուրին պարզևում ես առանձնահատուկ ու գեղեցիկ շնորհներ: Օգնիր, որ մեր պարզևները գործածելով Քեզ ծառայելու համար՝ պատվենք Քեզ: Ամեն:

**Աստված Քեզ էլ է տվել հատուկ պարզև:**  
**Օգտագործիր այն իր փառքի համար:**

## Ծայտված Զիտուսը

**Որդիս՝ Զեֆը, վերջերս մասնակցեց «անտուն ձևանալու» մի ծրագրի:** Նա երեք օր ու զիշեր անցկացրեց փողոցում, երբ դրսում շերմաստիճանը զրոյից ցածր էր: Առանց ուտելիքի, փողի ու կացարանի՝ նա ապավինել էր օտար մարդկանց բարությանը: Այդ օրերին նրա կերած միակ ուտելիքը մի մարդու զնած սենդվիչն էր, երբ ինքը արագ սննդի ճաշարանում հին հացի կտոր էր խնդրել:

Հետո Զեֆն ասում էր, որ դա իր արած ամենադժվար գործերից մեկն էր, որը մեծապես ազդել է ուրիշների հանդեպ ունեցած իր վերաբերմունքի վրա: «Անտուն ձևանալու» հաջորդ օրն իսկ նա սկսեց որոնել այդ երեք օրերին իրեն բարի վերաբերմունք ցուցաբերած թափառաչը ջիկներին, որպեսզի ինչ-որ ձևով օգներ նրանց: Նրանք շատ զարմացան, երբ իմացան, որ իրականում նա անտուն չէր և շատ շնորհակալ եղան, որ տղան փորձել էր կյանքը տեսնել իրենց աչքերով:

Որդուս այս փորձառությունն ինձ հիշեցնում է Հիսուսի այս խոսքը. «Մերկ էի, և ինձ հագցրիք, հիվանդ էի, և ինձ այցելեցիք, բանտում էի, և ինձ մոտ եկաք: Քանի որ այս իմ եղբայրներից մեկին արեցիք, ի՛նձ արեցիք» (Մատթ. 25.36.40): Աստված մեզ կոչ է անում, որ սիրով օգնենք կարիքավորին՝ քաջալերական մի խոսք ասելով կամ մի տալրակ ուտելիք տալով կարոտյալին: Ուրիշին արած մեր բարությունը բարություն է իրեն:

**Աղոթք** - Տե՛ր, օգնի՛ր, որ կարողանամ ուրիշների կարիքների մեջ Քե՛զ տեսնել, նրանց սիրելով՝ Քե՛զ սիրել: Ամեն:

**Բարություն ստանալը լավ է:  
Բայց բարություն անելն ավելի լավ է:**

**Կարդա՛**  
**Մատթեոս 25. 31-40**

Աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն, և ըստ նրա տվածի էլ Աստված պիտի հատուցի նրան:  
Առ. 19.17

## Հսկողության պատրանքը

**Է**լեն Լենգերի 1975-ին կատարած «Հսկողության պատրանքը» խորագրով ուսումնասիրությունը քննում է կյանքի իրադարձությունների վրա մեր ազդեցության մակարդակը: Հեղինակը կարծում է, որ առհասարակ ցանկացած պարագայում մենք հաճախ գերազնահատում ենք մեր հսկողության աստիճանը: Ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, թե ինչպես է իրականությունը միշտ փչրում եղած խաբկանքը:

Լենգերի եզրակացությունները հաստատվում են նաև այն փորձերով, որոնք հետագա տարիներին ուրիշներն են կատարել: Իսկ Հակոբոս առաքյալն այդ երևույթը հայտնաբերել էր այդ ուսումնասիրությունից դեռ շատ առաջ: Չորրորդ գլխում նա գրել է. «Ահա, ո՛վ դուք, որ ասում եք. «Այսօր և վաղն այսինչ քաղաքը գնանք ու այնտեղ մի տարի լինենք, վաճառենք ու շահենք: Դուք, որ վաղվա օրը չգիտեք: Ի՞նչ բան է ձեր կյանքը, մի գուրջի է, որ մի քիչ ժամանակ երևում է ու հետո աներևութանում» (Հմ.13-14):

Հետո Հակոբոսն այդ սխալն ուղղելու ճանապարհ է առաջարկում, մատնանշելով, որ Նա է ամեն ինչի տնօրինողը. «Փոխարենը պետք է ասեիք. «Եթե Տերը կամենա, ու պարենք, այս բանը կամ այն բանը կանենք» (Հմ.15): Իր նամակի այս մի քանի գլխում Հակոբոսն ամփոփում է թե՛ մարդկային բնույթի ձախողված վիճակը և թե՛ դրա բուժման ուղին:

Պետք է հասկանանք, որ մեր վախճանը մեր ձեռքում չէ: Որովհետև Աստված ամեն բան պահում է իր ամենակարող ձեռքերում: Ուստի կարող ենք Նրան վստահել մեզ համար ունեցած իր ծրագրերում:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, կյանքս Քո ձեռքերում է: Օգնի՛ր, որ կարողանամ վստահել Քեզ ու Քո սուրբ ձեռքերին: Ամեն:

**Սարդու սրտում շատ ծրագրեր կան, բայց Տիրոջ խորհուրդն է հաստատվում: Առակաց 19.21**

**Կարդա՛**  
**Հակոբոս 4.13-17**

Դուք, որ վաղվա օրը չգիտեք: Հակ. 4.14



## Լինքոլնի գրպանների պարունակությունը

**1**<sup>865</sup>թ. այն գիշերը, երբ Միացյալ Նահանգների նախագահ Աբրահամ Լինքոլնը գնդակահարվեց Փորդ սրահում, նրա գրպանում հայտնաբերվեցին հետևյալ առարկաները. երկու ակնոց, ակնոցի ապակին մաքրելու թաշկինակ, գրպանի դանակ, գրպանի ժամացույց, կաշվե դրամապանակ՝ մեջը Դաշնակցային լիգայի հինգ դոլարանոց մի գրամանիչ, օրաթերթերի ութ հոդված, որոնց մեծ մասը գովազդներ էին իր ու իր քաղաքականությունների մասին:

Օրաթերթերից առանձնացված իր մասին հոդվածների առկայությունը հասկանալի էր: Անհասկանալին Դաշնակցային Լիգայի հինգ դոլարանոցն էր: Փաստորեն յուրաքանչյուր մարդ քաջալերություն կարիք ունի, նույնիսկ Լինքոլնի նման մեծ առաջնորդը:

Նայի՛ր շուրջդ ու տե՛ս, թե ով ունի քաջալերանքի կարիք: Քո տեսադաշտում չկա մեկը, որ վստահ լինի ամեն ինչում, ինչպես արտաքուստ երևում է: Ի՞նչ կլինի, եթե ամեն մարդ հնազանդվի Աստծո պատվիրաններին և «ընկերոջը հաճելի լինի դեպի բարին՝ շինության համար» (Հռոմ. 15.2): Ի՞նչ կպատահի, եթե բոլորս էլ որոշենք միայն «հաճելի խոսքեր» ասել, որովհետև «Բարի խոսքը մեղրի խորիխ է, և հոգու բժշկություն է նրա քաղցրությունը» (Առ. 16.24): Ի՞նչ կպատահի, եթե գրենք այդպիսի խոսքեր, որպեսզի մեր բարեկամները կարգան և ուրախանան: Այդ դեպքում մենք բոլորս մեր գրպաններում գրառումներ կունենանք ու ավելի շատ բանով նման կլինենք Հիսուսին:

**Աղոթք** - Տե՛ր, քաջալերական խոսքերի կարիք ունեն: Մարդկանց, բայց ավելի շատ Քո՛ խրախուսանքի կարիքն ունեն: Ամեն

**Ուրիշներին քաջալերենք մեր խոսքերով,  
գործերով ու ներկայությամբ:**

**Կարդա՛ր  
Հռոմ. 15.1-6**

Ապա մեզանից ամեն մեկը թող ընկերոջը հաճելի լինի դեպի բարին՝ շինության համար: Հռոմ. 15.2

## Մի տխուր պատմություն

**Մ**իտոս ցավեց, երբ օրավթերթերի գլխավոր լուրերում տեղեկություններ կարդացի երկու մարդկանց մասին, որոնց մեծ հիացմունքով էի հետևում: Բացահայտվել էր նրանց կատարած բռնաբարությունը: Իսկ եկեղեցին այս լուրը հարցում էր վերաբերմունքը չէր արտահայտել:

Դավիթ թագավորը դիմավորեց իր հաշվեհարդարը: Այսօրվա հատվածում կարդում ենք, որ մի օր երեկոյան կողմ Դավիթը «տեսավ, որ մի կին լողանում էր» (Բ.Թագ. 11.2): Թեև Բերսաբեն Դավիթի գորավարներից մեկի՝ Ուրիայի կինն էր, Դավիթը ցանկացավ նրան ու իր մոտ բերել տվեց նրան: Երբ Բերսաբեն Դավիթին ասաց, որ հղի է, վերջինը խուճապի մատնվեց ու խորամանկ դավաճանությունամբ, Հովաբի միջոցով ծրագրեց, որ Ուրիան պատերազմի դաշտում սպանվի:

Չկա որևէ բան, որ արդարացի Դավիթի այս չարաշահությունը Բերսաբեի հանդեպ: Այստեղ երևում է նրա արարքը՝ իր բոլոր գույներով, որպեսզի մենք էլ կարողանանք մեր գործած չարությունները նկատել:

Այս ու սրա նման պատմություններ դեռ կլսենք, որովհետև մեզ զգուշացնում են, որ մեր ունեցած ուժերը չչարաշահենք: Դավիթը Աստծո «սրտին համաձայն մարդ էր», միաժամանակ մարդ էր, որ հաշիվ էր տալու իր արածների համար: Թող որ մենք էլ մեր աղոթքով մեր առաջնորդներին հաշվետու նկատենք, տեսնելու համար, թե ինչ ձևով են գործածում կամ չարաշահում իրենց ունեցած իշխանությունը:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, չգիտեմ, թե ինչ եմ անելու՝ տեսնելով աշխարհում ու իմ մեջ եղած կոտորված վիճակը: Թող Քրիստոսը ցույց տա մեր մեջ ու բուժի մեզ: Ամեն:

**Մեր շուրջը չարաշահումներ ենք տեսնում: Նման դեպքերում տեսնենք, որ Աստված կարող է մեզ բուժորիս բուժել:**

Կարդա՛  
Բ Թագ. 11.2-15

Դավթի այս արածը  
չար բան երևաց  
Տիրոջ աչքին:  
Բ Թագ. 11.27

## Ստեղծված է հարաբերության համար

**Բ**ազմաթիվ երկրներում է գործում «Ընտանիք վարձիր» հայտնի ծրագիրը, որը առանձին ապրող մարդկանց կարիքները հոգալու համար է նախատեսված: Այս ծրագիր տարբեր եղանակներով օգնում է միայնակներին, որպեսզի նրանք ընտանեկան ջերմություն զգան, ինչի կարոտը մշտապես զգում են:

«Ընտանիք վարձիր»-ի որդեգրած միտումը մի հիմնական ճշմարտություն է հայտնում, այն, որ մարդիկ ստեղծված են հարաբերության համար: Ծննդոց գրքում կարդում ենք արարչագործության պատմությունը, որտեղ «Աստված տեսավ, որ այն ամենը, ինչ ստեղծել էր, շատ լավ է» (1.31): Սակայն, նայելով Ադամին, Աստված ասում է. «Լավ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանությանը մի օգնական ստեղծենք նրա համար» (2. 18): Մարդը այլ մարդու կարիք ունի: Աստվածաշունչը պարզապես միմյանց հետ կապ ունենալու անհրաժեշտության մասին չէ, որ խոսում է: Այլ ասում է, թե որտեղ կարելի է հարաբերություն գտնել. Հիսուսի հետևորդների մեջ: Հիսուսը մահանալիս իր բարեկամ Հովհաննեսին ասաց, որ Ի՛ր մորը նկատի առնի որպես մայր: Պողոսը հավատացյալներին հանձնարարեց, որ ուրիշների հետ վարվեն որպես ծնողներ, քույրեր ու եղբայրներ (Ա.ՏԻմ. 5.1-2): Ծնորհակալություն Աստծուն, որ մեզ ստեղծել է հարաբերության համար և մեզ է տվել իր ժողովրդին, որ լինի մեր ընտանիքը:

**Աղոթք** - Տե՛ր, օգնի՛ր, որ կարողանամ ուրիշներին վստահել և վստահելի բարեկամ լինել: Ամեն:

### Կարդա՛ր Ծննդոց 2. 15-25

Տե՛ր Աստված ասաց. «Լավ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանությանը մի օգնական ստեղծենք նրա համար»: ԾՆՆ. 2.18

**Շուրջդ կլինեն միայնակ մարդիկ: Գիշի՛ր, որ Աստված քեզ ստեղծել է նրանց հետ հարաբերություն մշակելու համար:**

## Յոգեպես հոգնա՞ծ ես

**Ձ**եք էսպիհնն իր «Ոչ կատարյալ հովիվը» խորագրով գրքում գրում է. «Երբեմն աշխատելով մեկ ժամ՝ հոգեպես այնպես ենք զգում, ասես ամբողջ օրն ենք աշխատել»: Նա ակնարկում է ընդհանրապես հոգևոր հովիվների ծանրաբեռնվածությունը մասին, բայց դա ճիշտ է բոլոր մարդկանց համար էլ: Ծանր զգացումներն ու պատասխանատվությունը կարող են ֆիզիկական, մտավոր ու հոգևոր այնպիսի հոգնածություն պատճառել, որ քնել ուզենք:

Գ. Թագավորաց 19-ում ասում է, որ Եղիա մարգարեն իրեն շատ սպառված էր զգում: Կարդում ենք, որ Հեզաբել թագուհին սպառնաց սպանել նրան (Հմ.1-2), երբ իմացավ, որ նա սպանել է Բահաղի մարգարեններին (տե՛ս 18.16-40): Եղիան շատ վախեցավ, հեռացավ այդտեղից ու իր մահը ցանկացավ (19.3-4):

Այդպես նա պառկեց ու քնեց: Հրեշտակը երկու անգամ մոտենալով նրան՝ ասաց. «Ելի՛ր ու կե՛ր» (Հմ.5-7): Հրեշտակի երկրորդ մոտենալուց հետո Եղիան զորացավ Աստծո տված կերակուրից ու «այդ կերակրի զորությունը քառասուն օր ու քառասուն գիշեր քայլեց», մինչև հասավ մի քարայրի (Հմ.8-9): Այնտեղ Աստված երևաց ու դարձյալ առաքելության կոչ արեց նրան (Հմ.9-18): Նա վերափոխվեց և կարողություն ձեռք բերեց Աստծո տված գործը շարունակելու:

Հոգնած ու սպառվա՞ծ ես զգում: Հանձնի՛ր քո բեռները Աստծուն ու նորոգվի՛ր:

Նա քո բոլոր բեռները կկրի:

**Աղոթք** - Սիրո՛ւ Աստված, օգնի՛ր ինձ, որ հոգնած ու հյուժված ժամանակ դառնամ դեպի Քեզ: Շնորհակալ եմ, որ հանգիստս գտնում եմ Քո մեջ: Ամեն:

**Դու հոգնած ու ծանրաբեռնվա՞ծ ես, սիրելիներդ հեռացե՞լ եմ: Քո Փրկիչն է քեզ կանչել, Ինքը կլինի քեզ ապաստան:**

Կարդա՛ր  
Գ Թագ. 19. 1-9

Եվ ահա մեկը նրան  
մոտենալով ասաց.  
«Ելի՛ր ու կե՛ր»:  
Գ Թագ. 19.5

## Մեր նոր բնակարանը

**1** 1982-ին որպես էլիս կղզուց Միացյալ Նահանգներ առաջին **1** գաղթող՝ էնի Մուրը զգում էր նոր տուն ու նոր սկիզբ ունենալու հուզմունքը: Այնուհետև միլիոնավոր մարդիկ պիտի անցնեին այդտեղով: Բայց էնին, շատ երիտասարդ էր և իր ետևում էր թողել ղժվարին մի կյանք՝ նորը սկսելու համար: Ձեռքին միայն մի փոքր պայուսակ՝ նա եկավ այս երկիր՝ բազում երազներով, հույսերով ու ակնկալիքներով:

Ինչքան ավելի հուզմունք ու խանդավառություն փորձառություն կունենանք որպես Աստծո զավակներ, երբ տեսնենք «նոր երկիրք ու նոր երկիր» (Հայտն. 21.1), երբ մտնենք այն, ինչպես Սբ. Գիրքն է նշում «սուրբ քաղաքը՝ Նոր Երուսաղեմը» (Հմ.2): Հովհաննես առաքյալը այդ սքանչելի վայրը նկարագրում է հզոր պատկերավորմամբ: Այնտեղ պիտի լինի «մի մաքուր գետ՝ կենդանի ջրի բյուրեղի նման փայլուն, որ Աստծո ու Գառան աթոռից է դուրս գալիս» (Հմ.22.1): Ձուրը ներկայացնում է կյանք ու առատություն, որի աղբյուրը Ինքն՝ Հավիտենական Աստվածն է լինելու: Հովհաննեսն ասում է, թե «այլևս նզովք բնավ չի լինի» (Հմ.3): Գեղեցիկ ու մաքուր հարաբերությունը, որ Աստված ուզում է ունենալ մարդկանց ու Իր միջև, ամբողջովին պիտի վերանորոգվի:

Որքան հիանալի է իմանալ, թե Աստված, որ սիրում է Իր զավակներին և մեզ գնում է Իր Որդու արյունով, պատրաստում է նման հիանալի մի տուն, որտեղ անձամբ Ինքն է ապրելու մեզ հետ ու մեր Աստվածն է լինելու (21.3):

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ Քո սիրո համար: Սպասում ենք այն օրվան, երբ խաղաղության մեջ ապրելու ենք Քեզ հետ և իրար հետ: Ամեն:

**Երկնքի այս գեղեցիկ նկարագրությունը  
քաջալերելու է մեզ:**

Կարդա՛

Հայտնություն 22.1-5

Այլևս նզովք բնավ չի լինի, և Աստծու ու Գառան աթոռը նրա մեջ կլինի:  
Հայտն. 22.3

## Շնորհքով պարուրված

**Լ**իֆ Էնգլերի «Գետի նման խաղաղություն» վեպի հերոսներին երեք երեխաների միայնակ հայր Ջերեմայա Լենգլը տեղի դպրոցներից մեկում դռնապան էր աշխատում: Նա նաև խոր հավատք ուներ, և վեպում նրա հավատքը միշտ փորձու-թյունների է ենթարկվում:

Դպրոցի վերակացու Չեսթերը Հոլդերնը մաշկային հիվանդություն ունեցող չար հոգով մի հովիվ էր: Հակառակ Ջերեմայայի՝ բարի կենցաղին ու աշխատանքի հանդեպ մեծ պատասխանատվությանը, նրան ուզում էր ազատել գործից: Եվ մի օր նա բոլոր աշակերտների ներկայու-թյամբ նրան մեղադրում է հարբեցողու-թյան մեջ ու ազատում աշխատանքից: Պատահածը սպանիչ պատկեր էր: Ջերեմայան կարող էր հակադարձել՝ հանիրավի ազատվելու համար դիմելով իրավական քայլերի: Բայց Հիսուսն ասել է. «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, բարիք արեք ձեզ ատողներին: Օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, աղոթեցե՛ք ձեզ նեղողների համար» (Ղուկ. 6.27-28): Մարտահրավեր տվող այս խոսքերը չեն նշանակում չարը արդարացնել կամ արդարադատությունը կասեցնել: Հակառակը՝ դրանք մեզ կոչ են անում, որ Աստծուն նմանվենք (Հմ. 36):

Ջերեմայան մի պահ Հոլդերնին է նայում, ապա ձեռքը երկարելով՝ դիպչում է նրա դեմքին: Հոլդերնը ետ է քաշվում վախեցած, ապա զարմացած՝ ձեռքով շփում է երեսը: Դեմքի սպիները բուժվել էին: Թշնամու դիպչելու շնորհիվ:

**Աղոթք** - Տե՛ր, երբ անարդարություն ու չարաշահում եմ հաղթահարում, զսպիր լեզուս անեծք և ձեռքս հարված տալուց: Փոխարենը ցույց տուր, թե ինչպես կարող եմ օգնել թշնամիներին, որ Քեզ մոտենան: Ամեն:

**Միշտ մեր շուրջը կլինեն դժվարություն առաջացնողներ:**  
**Ի՞նչ անենք, որ նրանք մեր մեջ Տիրոջը տեսնեն:**

**Կարդա՛**  
**Ղուկաս 6.27-36**

Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, բարիք արեք ձեզ ատողներին:  
Ղուկ. 6.27

## Կյանքը փոխվում է

**Ստեփանը** մեծացավ Արևմտյան Լոնդոնի մի վատ թաղամասում և տասը տարեկանում հանցագործ դարձավ: «Եթե ամեն մարդ թմրանյութ է վաճառում, գողություն ու խաբեբայություն է անում, դու էլ նույնը պիտի անես: Դա ուղղակի կենսաձև է», - մտածում էր նա: Բայց քսան տարեկանում նա մի երազ տեսավ, որը հիմնովին փոխեց իր կյանքը: Երազում լսեց Աստծո ձայնը. «Ստեփան՝, դու կբանտարկվես մարդասպանության համար»: Այս պայծառ երազը յուրատեսակ նշան եղավ, և Ստեփանը դարձի եկավ: Նա Հիսուսին ընդունեց որպես իր Փրկիչ և Սուրբ Հոգին նրա ողջ կյանքը փոխեց:

Ստեփանը հիմնեց մի մարզական կազմակերպություն, որը քաղաքի ներքին շրջանների մանուկներին կարգապահություն ու բարոյականություն էր սովորեցնում: Նա աղոթում էր ու մարզում փոքրիկներին և իր արձանագրած հաջողության համար Աստծուն էր պարտական: Ասում էր, որ այս գործը «վերաշինություն է մոլորեցնող երազներից»: Հետամուտ լինելով Աստծուն և մեր անցյալից հեռանալով՝ մենք էլ Ստեփանի նման հետևում ենք Պողոսի՝ եփեսացիներին տված նոր կյանքին հետևելու հորդորին: Թեև մեր անցյալի մարդը «ապականված է խաբուսիկ ցանկություններով», մենք կարող ենք «հազնել նոր մարդուն, որ Աստծո պատկերի պես է ստեղծված՝ ճշմարտության արդարությանը և սրբությանը» (Եփ.4. 22,24): Ստեփանն ասաց. «Իմ կյանքը փոխելու ճանապարհին հիմնականն ինձ համար հավատքն էր»: Որքանո՞վ է սա ճիշտ քեզ համար: Արժե՛ մտածել:

### Կարդա՛ Եփեսացիներ 4.20-24

Ու նոր մարդուն հազնեք, որ Աստծու պատկերի պես է ստեղծված՝ ճշմարտության արդարությամբ և սրբությամբ:  
Եփես. 4.24

**Աղոթք** - Տե՛ր, Դու ողջ ես ու գործում ես աշխարհի ու իմ կյանքի մեջ: Օգնի՛ր, որ օրեցօր ավելի նմանվեմ Քեզ՝ հետ զգելով իմ հին անձը: Ամեն:

**Նայի՛ր կյանքիդ ու տե՛ս, թե որտեղ կա փոփոխության կարիք:**

## Իմաստուն լուծումից շատ ավելին

**Վ**երջերս թոռնիկս իր խաղալիք նապաստակը փորձում էր տաքացնել կրակարանի ապակու վրա և բավական լուրջ խնդրի առաջացավ: Ձևախեղված նապաստակի կեղծ մուշտակը գեղեցիկ չէր, բայց այն փչացրեց ապակին: Մասնագետը, սակայն կարողացավ գտնել խնդրի լուծումը և ապակին նորացնել:

Բարդ հարցերի լուծման այս օրինակն եմ նշում, որովհետև երբեմն կարող ենք Աստծո խոսքին նայել որպես բարդ հարցերի լուծումների հավաքածուի: Ծիշտ է, Աստվածաշունչը շատ բան կարող է ասել այն մասին, թե ինչպես կարելի է Քրիստոսին պատիվ բերող նոր կյանք ապրել, բայց Սբ. Գրքի միակ նպատակը դա չէ: Աստվածաշունչը տալիս է մարդու մեծագույն կարիքի՝ մեղքից ու հավիտենական կորստից ազատվելու լուծումը:

Ծննդոց 3.15-ում եղած փրկության խոստումից սկսած մինչև նոր երկնքի ու նոր երկրի ճշմարիտ հույսը (Հայտն.21.1-2) Աստվածաշունչը բացատրում է, թե Աստված մի հավիտենական ծրագիր ունի մեր մեղքերից մեզ ազատելու և արտոնելու, որ իր հետ հաղորդակցվելու ուրախությունն ունենանք: Աստվածաշունչը մեզ ցույց է տալիս Տեր Հիսուսին՝ Միակին, որը կարող է լուծել մեր մեծագույն հարցերը: Աստծո Գիրքը բանալիս հիշենք, որ Հիսուսին ու իր առաջարկած ազատությունն ենք փնտրում և իբրև իր զավակները՝ ինչպե՞ս ենք ապրելու: Նա տալիս է մեծագույն լուծումն ու դեղամիջոցը:

**Աղոթք** - Շնորհքի Տե՛ր, շնորհակալ եմ Հիսուսի միջոցով տված փրկության համար, որ հստակ ու անբողջությամբ բացատրված է խոսքիդ մեջ: Օգնի՛ր, որ Քեզ պատվենք՝ կենտրոնանալով մեր Փրկչի ու իր հիանալի սիրո վրա: Ամեն:

**Հավատքիդ առնչությամբ բարդ հարցե՞ր ունես:**  
Նայի՛ր Աստծո խոսքին, այնտեղ է լուծումը:

**Կարդա՛ր**  
**Սաղմոս 110**

Տեղը փրկություն ուղարկեց իր ժողովրդին, հավիտյանս պատգամեց իր ուխտը. սուրբ և ահեղ է նրա անուցը: Սաղմ. 110.9



## Ծառայողի սիրտ

**Խ**ոհարար, միջոցառման կազմակերպիչ, աննդազետ, հիվանդապահուհի. սրանք ժամանակակից մայրերի պարտականությունների ցանկի ընդամենը մի մասն են: 2016-ին կատարված մի ուսումնասիրության համաձայն՝ մայրերը սովորաբար շաբաթական 59-96 ժամ զբաղվում են երեխաների հետ կապ ունեցող գործերով: Ուստի զարմանալի չէ, թե ինչու են նրանք սպասվում: Մայր լինել նշանակում է շատ ժամանակ ու ջանք տրամադրել զավակներին, որոնք օգնության կարիք ունեն:

Մարկոսի ավետարանում աշակերտները վիճում էին, թե ով է մեծը: Հիսուսը լուռ նստեց և նրանց հիշեցրեց. «Եթե մեկն ուզում է առաջինը լինել, թող ամենքից վերջինն ու ամենքի ծառա լինի» (9.35):

Հետո մի երեխայի գրկեց՝ ցույց տալու համար ուրիշներին, հատկապես անօգնականներին, ծառայելու կարևորությունը (Հմ.36):

Քրիստոսի խոսքը վերահաստատում է մեծության չափանիշը Աստծո թագավորության մեջ: Այդ չափանիշը ուրիշներին օգնելու ցանկությունն ու կամեցող սիրտն է: Եվ նա խոստացել է, թե Աստծո զորացնող ներկայությունը կլինի նրանց հետ, ովքեր կընտրեն ծառայելը (Հմ.37):

Քանի դեռ առիթ ունես ընտանիքումդ ծառայելու, քաջալերվիր, որ Հիսուսը մեծապես զնահատում է այն ուժն ու ժամանակը, որ զնում ես ուրիշներին ծառայելու համար:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ, որ հիշեցնում ես մանուկների և բոլոր խոցյալների հանդեպ Քո սիրո հոգատարության մասին: Օգնի՛ր, որ կամավոր սրտով ծառայության Քո օրինակին հետևեմք: Ամեն:

**Շնորհակալ եղի՛ր քեզ ծառայողներին ու պատրաստ եղի՛ր ծառայելու ուրիշներին:**

**Կարդա՛ր**  
**Մարկոս 9. 33-37**

Եթե մեկն ուզում է առաջինը լինել, թող ամենքից վերջինն ու ամենքի ծառա լինի:  
Մարկ. 9.34

## Պետք է հանգստանա

**Ռ**իսնեյի «Փրկարարներն Ավստրալիայում» կինոնկարում, փորձելով բուժել համառ ու վիրավոր Վիլբերը ձկնկուլին, բժիշկը կտրուկ հայտարարում է. «Պետք է հանգստանա»: «Հանգստանա՞մ, ես հանգիստ եմ, - սպառնազին ասում է Վիլբերը, սակայն այդ պահին երևում է, որ նրա խուճապն ավելանում է: -Սրանից ավելի հանգիստ լինելը կնշանակի մեռած լինել»: Նման վիճակում երբևէ եղե՞լ ես: Նկատի ունենալով բժշկի կասկածելի գործողությունները՝ Վիլբորի շփոթվածությունը կարելի է նաև արդարացի համարել: Բայց տեսարանը հաճելի է, որովհետև պատկերում է, թե մենք ինչ ենք զգում խուճապահար պահերին, երբ մեր կյանքին խանգարող բաներ ենք դիմադրավում:

**Կարդա՛ր**  
**Սաղմոս 114. 1-9**

Դարձի՛ր, հոգի՛դ իմ, դեպի հանգիստը քո, քանզի Տերն օգնեց քեզ: Սաղմ. 114. 7

Երբ կյանքի սպառնալիքներն ու «մահվան երկունքը» (Սաղմոս 114.3) ինձ պատեց ու դժոխքի վշտերն ինձ բռնեցին...յուրաքանչյուր միտքս էր պայքարել և ոչ թե հանգստանալ: Հաճախ վախով մղած պայքարն ավելի էր մեծացնում անհանգստությունս ու վախով լցնում սիրտս, և ես Տիրոջ անունը կանչեցի՝ ասելով. «Ո՛վ Տեր, փրկի՛ր ինձ» (Հմ.4): «Գթառատ և արդար է մեր Տեր Աստվածը: Տերը ողորմում և պահպանում է մանուկներին, և խոնարհ եղա, և Տերն ինձ փրկեց: Նա ինձ փրկեց մահվանից, աչքերս արտասուքից և ոտքերս՝ սայթաքումից» (Հմ.5.6.8): Եվ իմ հոգին լցվեց անբացատրելի խաղաղությամբ, որը չեմ հասկանում:

Լավագույն ձևով կպայքարենք, եթե Աստծո հզոր ձեռքերին հանձնվենք:

**Աղոթք** - Հայր, հաճախ երբ մեր ցավերը շատանում են, դժվար է լինում Քեզ վստահելը: Օգնի՛ր, որ Քեզ հանձնվենք ու մեր բոլոր բեռները զցենք ոտքերիդ առջև՝ հանգստանալու համար Քո շնորհքի ու բարության մեջ: Ամեն:

**Երբ մահվան վտանգ զգաս, վստահի՛ր Աստծո սիրուն, որը հոգում է քո բոլոր կարիքները:**

## Իմաստնությունը զարմացած

«**Ինձ այնպես է թվում, թե որքան ես ծերանամ, դու այնքան իմաստուն ես դառնալու: Երբեմն երբ խոսում եմ որդուս հետ, կարծես քո խոսքերն են բերանիցս դուրս գալիս», - աղջկաս ասած այս ջերմ խոսքերը ուրախացրին ինձ: Նույն զգացումը իմ ծնողների հանդեպ ես էի ունեցել, երբ զավակներիս էի մեծացնում: Առաջին անգամ ծնողներիս իմաստնության հանդեպ վերաբերմունքս փոխվեց, երբ հայր դարձա: Ինչ որ ժամանակին անատություն էի համարել, իմ կարծածից ավելի իմաստուն երևաց, պարզապես առաջ դա չէի նկատել:**

**Կարդա՛ր  
Ա Կորնթ. 1.18-25**

Ո՛վ Աստծու մեծության, իմաստության և գիտության խորություն... Դռոմ. 11.33

Աստվածաշունչը մեզ սովորեցնում է, որ «Աստծո հիմարն ավելի իմաստուն է, քան մարդիկ» (Ա.Կորնթ. 1.25): Տառապող Փրկչի պատգամն այս է. «Քանի որ Աստծո իմաստության մեջ աշխարհն իմաստությունը չճանաչեց Աստծուն, Աստված հաճեց հավատացյալներին քարոզության հիմարությունը փրկել» (Հմ.21): Աստված միշտ ունի մեզ զարմացնող ձևեր: Աշխարհի սպասած հաղթական արքայի փոխարեն Աստծո Որդին եկավ՝ որպես տառապող ծառա և դաժան մահով մեռավ խաչի վրա՝ նախքան ամեն մտքից վեր եղող փառքով բարձրանալը:

Աստծո իմաստության մեջ խոնարհությունն ավելի արժեք ունի, քան հպարտությունը; Եվ սերը իր արժեքը ցույց է տալիս մեզ ոչ արժանի շնորհքով ու բարությունը: ողբոթայի խաչի միջոցով Մեսիան գերազույն զոհն եղավ, որպեսզի «լիովին փրկի» (Եբր.7.25) մեզ:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, փառավորում եմ քեզ՝ իմաստուն շնորհներիդ համար: Օգնի՛ր, որ վստահեմ քեզ ու խոնարհաբար քեզ հետ քայլեմ այսօր: Ամեն:

**Աստծո ճամփաները զարմանալի՞ են թվում: Հիշի՛ր, որ ամեն ինչ Նրա հսկողության ներքո է:**

## Եվս մեկ առիթ

«Երկրորդ կյանք հեծանիվներին» խանութը կամավոր կերպով նորոգում է հին հեծանիվները և դրանք նվիրում կարիքավոր մանուկներին: Իսկ խանութի հիմնադիր Էրնի Քլարկը հեծանիվներ էր նվիրում նաև չափահաս կարիքավորներին, ինչպես նաև պատերազմի վետերան անտուն ու տկար մարդկանց, որոնք նյութական ծանր պայմաններում են: Այդպիսով ոչ միայն հեծանիվներն էին երկրորդ կյանք ստանում, այլև երբեմն այն ստացողներն էին նոր սկիզբ ունենում: Այնպես, ինչպես մի վետերան օգտագործեց այն՝ հեծանիվով գնալով Հարցազրույցի: Երկրորդ առիթները կարող են փոխել մարդու ամբողջ կյանքը, հատկապես, երբ դա Աստծուց է գալիս: Միքիա մարգարեն այդ շնորհքն էր գովերգում, երբ Իսրայելի ժողովուրդը տանջվում էր կաշառակերություն, խարդախություն ու մեղքի մեջ: Միքիան ողբաց՝ ասելով. «Մարդկանց մեջ չկա մեկը, որ ուղիղ լինի, բոլորը արյամբ են դատում» (Միք. 7:2): Միքիան շատ լավ գիտեր, որ Աստված կարող է չարին պատժել, բայց որովհետև Նա սիրո Աստված է, երկրորդ հնարավորություն է տալիս զղջացողներին ու ապաշխարողներին: Նման ներող սիրով հնազանդված՝ Միքիան հարցնում է. «Ո՞վ է, Աստված, քեզ նման, որ վերացնում է անօրինությունը, զանց է առնում իր ժառանգության երկրի մնացորդների անիրավությունը» (Հմ.18): Ուրախ լինենք, որ Աստված մեզ չի լքի, եթե մեր գործած մեղքերի ու հանցանքների համար ներողություն խնդրենք: Ինչպես Միքիան հայտարարեց. «Նա պիտի դառնա ու գթա մեզ, պիտի թաղի մեր մեղքերը և ծովի խորքը պիտի նետի մեր բոլոր անօրինությունները» (Հմ.19):

### Կարդա՛ր Միքիա 7. 1-3, 18-20

Նա պիտի դառնա ու գթա մեզ, պիտի թաղի մեր մեղքերը և ծովի խորքը պիտի նետի մեր բոլոր անօրինությունները: Միք.7.19

**Աղոթք** - Երկնավոր Հայր, շնորհակալ եմք, որ մեզ տալիս ես երկրորդ առիթի հնարավորությունը: Ամեն:

**Աստված սիրում է մեզ, դրա համար էլ երկրորդ առիթ է նվիրում:**

## Երգելու պատճառ

**Ա**ղետալի է, եթե մարդն իր կյանքն ապրում է կանոնադրքի համաձայն: Բերեմ իմ օրինակը: Մեր զավակները լավն են, հարգում են այն պարտավորությունը, որ երբ տնից դուրս են գալիս, անպայման մինչև լույսերի մարելը տուն վերադառնան: Այնուամենայնիվ, ես սպասում եմ մինչև նրանց վերադարձը: Ուզում եմ վստահ լինել, որ նրանք ապահով տուն են եկել: Գուցե սխալ է սա, բայց ես անում եմ: Մի գիշեր, սակայն, արթնացա աղջկաս ձայնից: Աչքերս բացեցի ու տեսա ժպտացող դստերս, որն ասաց. «Հայրի՛կ, ես ապահով եմ, գնա՛ անկողինդ»: Այո՛, հակառակ իրենց լավագույն մտադրություններին, երբեմն հայրերը քնում են իրենց պատնեշի վրա: Դա շատ մարդկային է ու հուզիչ:

Սակայն Աստծո հետ այդպիսի բան բնավ չի պատահում: 120-րդ սաղմոսը հուսադրող մի երգ է Աստծո՝ իր զավակների պահպանն ու պաշտպանը լինելու մասին: Սաղմոսերգուն հայտարարում է, թե Աստված, որ հսկում է մեզ «թող չննջի» (հմ.3): Այս հանգամանքը շեշտելու համար 4-րդ համարում ասում է. «Ինչպես չի ննջում և քուն չի մտնում Պահապանն Իսրայելի» (հմ.4):

Աստված բոլորովին չի քնում, երբ կանգնած է իր պատնեշի վրա: Նա անդադար հսկում է բոլորիս: Հսկում է, որովհետև սիրում է ամբողջ սրտով: Իր այս խոստումի համար արժե երգել:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ Քո մնայուն հոգատարության համար: Հակառակ մեր կյանքի դժվարություններին՝ Դու միշտ Քո սիրով ներկա ես մեզ մոտ: Օգնի՛ր վստահ լինելու, որ Դու մեր պահապանն ես: Ամեն:

**Աստված միշտ արթուն է ու հսկում է մեզ:**

Կարդա՛  
Սաղմոս 120

Չի ննջում և քուն չի մտնում Պահապանն Իսրայելի: Սաղմ. 120. 4

## Ապրի՛ր, աղոթի՛ր, սիրի՛ր

**Մ**եծապես ազդված լինելով Հիսուսի զորությանը հավատացող ծնողներից՝ անվանի վազորդ Զեսսի Օուենզը ապրեց որպես խիզախ հավատքի տեր մարդ: 1936-ին Բեռլինում կայացած օլիմպիական մրցումներում նա Միացյալ Նահանգների խմբի աֆրիկացի մասնակիցներից էր և նացիստների ու նրանց առաջնորդ Հիտլերի քարոզած ատելության ու չարի միջնորդրտում կարողացավ 4 ոսկե մեդալ նվաճել: Նաև բարեկամացավ իր մրցակիցներից գերմանացի մարզիկ Լազ Լոնգի հետ: Հակառակ նացիստական քարոզչությամբ շրջապատված լինելու հանգամանքին՝ Օուենզի պարզ վարմունքը մեծ ազդեցություն գործեց Լազի կյանքի վրա:

**Կարդա՛ր  
Յոռմ. 12. 9-21**

Չարից մի՛ հաղթվիր, այլ բարիով հաղթիր չարին:  
Յոռմ. 12.21

Հետագայում նա Օուենզին գրեց.«Այն պահին, երբ Բեռլինում քեզ առաջին անգամ տեսա, դու ծնրադիր աղոթում էիր... ու մտածեցի, որ կարող եմ ես էլ Աստծուն հավատալ»: Օուենզը ցույց է տալիս, թե հավատացյալները ինչպես կարող են պատասխանել Պողոսի հորդորին, որն ասում է.«Սերը առանց կեղծավորության լինի, չարն ատեցե՛ք, բարուն հետևեցե՛ք» և «իրար նկատմամբ գլխասիրտ եղե՛ք»(Հռոմ.12.9-10):

Թեև կարող էր իր շուրջ եղած չարությանը ատելությամբ պատասխանել, սակայն Օուենզը ընտրեց հավատքով ապրելն ու սեր ցուցաբերելը մի մարդու հանդեպ, որը հետագայում իր բարեկամն էր դառնալու և Աստծուն էր հավատալու:

Որպես Աստծու ժողովուրդ՝ եթե նվիրվենք ու «մշտապես աղոթենք»(Հմ.12), նա մեզ կզորացնի, որ «իրար նկատմամբ նույն խորհուրդն ունենանք» (Հմ.16):

**Աղոթք** - Երկնավոր Հայր, խնդրում եմք՝ զորացրու՛ մեզ, որ աղոթքով միաբանվենք, ամբողջովին նվիրվենք այլոց սիրելուն և ապրենք խաղաղությամբ: Ամեն:

**Տերն ուզում է, որ խզված հարաբերությունները վերահաստատելու համար կամուրջներ կառուցենք:**

## Ձայնդ օգտագործիր

**Հ**րավիրված էի հոչակավոր մի դաշնակահարի հետ հանդիպման: Մեծացել էի երաժշտության ուղեկցությունամբ, դաշնամուր ու ջութակ էի նվագել, ինչպես նաև եկեղեցական և այլ միջոցառումների ժամանակ երգել էի: Ուստի և ներկայացած առիթի համար շատ ուրախ էի:

Երբ հասա ժամադրավայր, տեսա, որ դաշնակահարը մի քիչ անգլերեն է խոսում և զարմացա, երբ նա ինձ տվեց մի թավջութակ, որը նախկինում երբեք չէի բռնել, և խնդրելու նման պնդեց, որ նվագեմ, իսկ ինքն ընկերակցի ինձ: Մի քանի նոտա նվագելուց հետո, ընդունելով, որ չեմ կարող շարունակել, հրաժեշտ տվեցի նրան:

Արթնանալով հասկացա, որ երազ էի տեսել: Բայց երազումս ներկայացած երաժշտական շարժառիթը իրական էր, ու ես մտքումս կրկնեցի. «Ինչու՞ իրեն չասացիր, որ կարող ես երգել»:

Աստված տալիս է պետք եղածը մեր բնական ու հոգևոր շնորհները զարգացնելու համար (Ա.Կորնթ. 12.7): Աղոթքով Իր խոսքը կարգալով և ուրիշների տված իմաստուն խրատներով մենք կարող ենք ավելի լավ հասկանալ մեզ տրված շնորհը կամ շնորհները: Պողոս առաքյալը մեզ հիշեցնում է, որ ինչ էլ լինեն մեր հոգևոր շնորհները, ժամանակ ենք տրամադրելու դրանք գտնելու ու զարգացնելու, իմանալով, որ «Հոգին է ներգործում՝ ամեն մեկին բաժանելով, ինչպես կամենում է» (Հմ. 11):

**Աղոթք** - Հայր, ցույց տուր, թե ինչպես ես ինձ շնորհներով օժտել և թե ինչպես եմ դրանք գործածելու ուրիշների համար: Ամեն:

**Քննիր** ու տես, թե Տերը ինչ շնորհ է տվել քեզ ու այն գործածիր Իր փառքի համար:

**Կարդա՛ր**  
Ա Կորնթ. 12. 1-14

Պարզևները գանազան են, բայց  
Հոգին նույնն է:  
Ա Կորնթ. 12.4

## Մեծ բաներ

**1**989 թվականի նոյեմբերի 9-ին աշխարհը հիացավ՝ տեսնելով Բեռլինի պատի անկումը: Պատ, որը բաժանում էր Բեռլինը, քանդվեց և քսանութ տարի բաժանված քաղաքը կրկին միացավ: Այդ օրը թեև ցնծության կենտրոնում Գերմանիան էր, սակայն ամբողջ աշխարհն էր հուզմունքով հետևում այդ դարակազմիկ դեպքին: 538-ին, երբ Իսրայելի ժողովուրդը յոթանասնամյա աքսորից հետո վերադարձավ իր երկիրը, այդ օրն էլ հատուկ էր: 125-րդ սաղմոսն սկսվում է Իսրայելի պատմության այդ ամենաուրախ օրերից մեկի մասին խոսելով: Այդ իրադարձությունը նշվեց հրճվանքով, ուրախության երգերով ու միջազգային ճանաչումով, որ Աստված մեծ բաներ էր արել իր ժողովրդի համար (Հմ.2): Եվ ո՞րն եղավ իր ողորմությունն ստացած ժողովրդի պատասխանը: Աստծո կատարած մեծ գործերը մեծ ցնծություն առաջացրին մարդկանց մեջ (Հմ.3): Նաև անցյալում Նրա կատարած գործերը հիմք դարձան նոր ազդեցիկ և ներկայի ու ապագայի փայլուն հույսի (Հմ.5-6):

Դու և ես կարիք չունենք մեր փորձառությունների մեջ Աստծո կատարած մեծ գործերի օրինակներ գտնելու համար հեռուն նայելու, հատկապես եթե հավատում ենք Աստծուն իր Որդու՝ Հիսուսի միջոցով: 19-րդ դարի ամերիկացի բանաստեղծուհի, հոգևոր երգերի հեղինակ Ֆանի Քրոսբին այս զգացումն էր նկարագրում, երբ գրում էր. «Նա մեզ մեծ բաներ սովորեցրեց, Նա մեծ բաներ արեց, ու մեր ցնծությունը մեծ է իր Որդու՝ Հիսուսի միջոցով»: Այո՛, թող փառավորվի Աստված իր մեծ գործերով:

### Կարդա՛ր Սաղմոս 125

Հապա այս բաների մասին ի՞նչ ասե՞նք. եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ: Հռոմ. 8.31

**Աղոթք** - Տեր, երախտապարտ եմ, որ մեծ բաներ ես անում մեզ համար: Օգնի՛ր մեզ, որ կարողանանք փառավորել Քեզ՝ ամեն պահի, ամեն բանի համար: Ամեն:

**Անցյալում պատահած մեծ գործերը կարող են մեզ տալ մեծ ուրախություն, մեծ աղոթք և մեծ հույս:**



## Սեղմ շրջանակներ

**Դ**ասընկերներիցս մեկը մեր ընտանիքին նվիրեց մի հով-  
փաշուն, որը շատ ծեր էր և այլևս ձագուկներ էլ կարող  
ուներնալ: Շատ չանցած իմացանք, որ այս գեղեցիկ շունը, դժ-  
բախտաբար, իր ժամանակի մեծ մասն անցկացրել է փակ տա-  
րածքում: Նա ընդամենը կարողանում էր քայլել սեղմ շրջանա-  
կում: Նույնիսկ բախում էր կարողա-  
նում վազել, որովհետև կարծում էր, թե  
ցանկապատի մեջ է:

Առաջին դարի քրիստոնյաները, որոն-  
ցից շատերը հրեաներ էին, դրված էին  
Մովսիսական օրենքի շրջանակների մեջ:  
Թեև օրենքը լավն էր ու Աստծուց տր-  
ված, որը դատապարտում էր իրենց գոր-  
ծած մեղքերի համար և առաջնորդում էր իրենց դեպի Հիսուս  
Քրիստոսը(Գաղ. 3.19-25), բայց ժամանակն էր, որ նրանք ապ-  
րեին նոր հավատով, որը հիմնված էր Աստծո շնորհի ու Քրիս-  
տոսի ազատության վրա: Նրանք վարանում էին՝ մտածելով, թե  
այդ ժամանակից հետո իրենք իրո՞ք ազատ կլինեն: Մենք էլ կա-  
րող ենք նույն խնդիրն ունենալ: Գուցե մենք հասակ ենք առել  
մի եկեղեցու մեջ, որի օրենքները մեզ կապանքների մեջ են  
դրել: Կամ էլ զարգացել ենք ամեն բան արտոնող ընտանիքնե-  
րում և այժմ կանոնները պահպանելու կարիք ունենք : Ինչ էլ  
լինի, ժամանակն է ընդունելու Քրիստոսով եղած մեր ազատու-  
թյունը (Գաղ.5.1): Հիսուսը մեզ տվել է սիրով իրեն հնազանդ-  
վելու (Հովհ. 14.21) և «սիրով իրար ծառայելու» (Գաղ. 5.13)  
ազատություն: Ուրախության ու սիրո համընդհանուր դաշտ է  
բացվում բոլոր նրանց առջև, ովքեր ընդունում են, որ «եթե Որ-  
դին ձեզ ազատի, հիրավի ազատ կլինեք» (Հովհ. 8.36):

Կարդա՛  
Գաղ. 5.11, 4-14

...այն ազատու-  
թյամբ, որ Քրիստո-  
սը մեզ ազատեց,  
հաս-տա՛տ կացեք:  
Գաղ. 5.1

**Աղոթք** - Տե՛ր, աղաչում եմ, օգնի՛ր ինձ հավատալ, որ ես  
ազատ եմ Քո ասածի պես: Ամեն:

**Ազատությունը նրանց է տրվում, ովքեր օգնության  
համար դիմում են Հիսուսին:**

## Աստված անփոփոխ է

**Տ**իկիրնս՝ Քերին ու ես մեր քոլեջի վերամիացման հանդիպմանը մասնակցելու համար գնացինք Սանտա Բարբարա, որտեղ երեսունհինգ տարի առաջ հանդիպել ու սիրահարվել էինք: Ծրագրել էինք այցելել մեր երիտասարդության լավագույն տարիներին միասին անցկացրած վայրերը: Բայց երբ հասանք մեր սիրած Մեքսիկական ճաշարանի տեղը, դրա փոխարեն տեսանք շինանյութի մի մեծ խանութ: Պատին փակցված էր երկաթյա մի հուշատախտակ, որի վրա նշված էր ճաշարանի անունն ու նրա քառասնամյա գործունեությունը գաղտնիվում:

Կարդա՛ր  
Սաղմոս 102. 13-22

Հիսուս Քրիստոսը  
նույնն է երեկ և այսօր  
և հավիտյան:  
Եբր. 13.8

Նայեցի ամայի, բայց ինձ ծանոթ մայթին, որտեղ ժամանակին գունավոր հովանոցներ ու սեղաններ կային: Շատ բան էր փոխվել մեր շուրջը: Բայց այդ բոլոր փոփոխությունների մեջ Աստծո հավատարմությունն անփոփոխ էր: Դավիթը վախով նայեց ու գրեց. «Մարդու օրերը խոտի պես են, նա ծաղկում է ինչպես վայրի ծաղիկ: Երբ փչի քամին, նա կանհետանա, և նրա տեղն իսկ չի երևա: Բայց Տիրոջ ողորմությունը հավիտյանս հավիտենից իրենից երկյուղ կրողների վրա է և նրա արգարությունը՝ որդոց որդի նրանց հանդեպ» (Սաղմ. 102. 15-17): Դավիթն իր սաղմոսն ավարտում է հետևյալ բաներով. «Հոգի՛դ իմ, օրհնի՛ր Տիրոջը» (Հմ. 22):

Կյանքը միշտ փոխվում է մեր շուրջը, սակայն Աստված նույնն է մնում և պետք է վստահել, որ Նա Իր խոստումները պիտի կատարի: Նրա հավատարմությանն ու սիրուն կարելի է ապավինել սերնդեսերունդ:

**Աղոթք** - Հզոր ու հավիտենական Աստված, շնորհակալ եմ, որ Դու երբեք չես փոխվում: Օգնի՛ր, որ միշտ կարողանամ վստահել Քո սիրուն ու հավատարմությանը: Ամեն:

**Վստահ եղի՛ր, որ Աստված անփոփոխ է:**

## Մնայուն ժառանգություն

**Թ**ոմաս էդիսոնը հնարեց առաջին էլեկտրական պրոպագանդայի միջոցը՝ Ջոնսոնի ֆարմայքը գրել է մեր պաշտամունքի երգերի մեծ մասը: Իսկ ի՞նչ ես արել դու, ինչու՞ ես եկել աշխարհ: Ինչպե՞ս ես գործածելու քո կյանքը:

Ծննդոց գրքի 4-րդ գլխում ասվում է, որ «Եվան հղիացավ, ծնեց Կայենին»: Առաջին անգամ գրկելով Կայենին՝ Եվան ասաց, «Մարդ ծնեցի Աստծո զորությամբ»: Եվան այս խոսքն ասաց իր ծննդաբերության առաջին փորձառությունը բացատրելու մղումով, որը հաստատում է Աստծո գերիշխան օժանդակությունը: Վերջապես Եվայի սերմով Աստված իր ժողովրդին ազատում էր տալու մի ուրիշ Որդու միջոցով (Հովհ. 3:16): Ի՞նչ հիանալի ժառանգություն:

Ծնող լինելը մարդկանց տրված բազմաթիվ մնայուն օգնություններից մեկն է: Հնարավոր է, որ քո օգնությունը դուրս գա մի սենյակից, որտեղ գրում ես, նկարում կամ գործում: Դու կարող ես օրինակ լինել այլոց համար, ովքեր զրկված են աստվածային ազդեցությունից: Կամ էլ քո ներդրումը գա մահից հետո, մի այնպիսի ձևով, որ չես էլ կարող երևակայել: Դա կարող է լինել քեզանից հետո թողած գործը կամ քո արհեստի վարկը: Ինչ էլ որ լինի այդ պարագան, արդյո՞ք քո ասած խոսքերը պիտի արձագանքեն Եվայի՝ Աստծուց կախված լինելու գիտակցությանը: Տիրոջ օգնությամբ դու ի՞նչ ես անելու Նրան պատվելու համար:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, թող որ իմ բոլոր գործերի մեջ Քեզ վստահեմ: Որովհետև միայն Աստծո օգնությամբ է, որ ես կարող եմ մնայուն ժառանգություն թողնել: Ամեն:

**Կարևոր է, որ մեզանից հետո օգտակար հետք ու ժառանգություն թողնենք:**

Կարդա՛  
ծննդոց 4.1-2

Մարդ ծնեցի Աստծո  
զորությամբ:  
ԾՆՆ. 4.1

## Այստեղ սահուն է

**Տ**արիներ առաջ, երբ չմուշկ քշել էի սովորում, հեշտ թվացող մի գառիվայրի վրա գնում էի որդուս՝ Զոչի հետևից: Հայացքս նրա վրա սևեռած՝ չնկատեցի, թե ինչպես հասա բլուրի ամենավտանգավոր մասն ու սուրացի ցած՝ խորտակումի սարսափով համակված:

140-րդ սաղմոսը ցույց է տալիս, թե մենք ինչպես կարող ենք հայտնվել մեղքի բլրի վրա ու շատ հեշտ ցած սուրալ: Աղոթքը ձևերից մեկն է, որով մենք կկարողանանք զգուշանալ նման անկումներից: «Որ սիրտս չհակվի չարության խոսքին» (Հմ.4) բառերը աղերս են, որ գրեթե նմանվում են Տերունական աղոթքին. «Եվ մեզ փորձության մի՛ տանիր, այլ ազատի՛ր մեզ չարից» (Մատթ. 6.13): Աստված Իր բարությամբ լսում է մեր այս աղոթքն ու պատասխանում:

Ապա, որպես շնորհի այլ գործակալ ու հավատարիմ բարեկամ՝ այս սաղմոսն եմ գտնում.«Թող արդարը խրատի ինձ ողորմությամբ ու հանդիմանի, բայց մեղավորի յուղը թող գլուխս չօծի, աղոթքս պիտի հակադրեմ նրա կամքին» (Սաղմ. 140.5): Փորձությունները խորամանկ են: Ընդհանրապես չենք իմանում, որ սխալ ընթացքի մեջ ենք: Այդ դեպքում իսկական բարեկամը կարող է մեզ օգնել: Ինչպես 27-րդ առակում է ասվում. «Լավ է բարեկամի ապտակը, քան թշնամու նենգ համբուլը» (Առ. 27.6) Դժվար է ծաղրանքն ընդունել, բայց երբ վիրավորանքը նկատի առնենք որպես «բարություն», կարող է օրհնություն դառնալ, որը մեզ կդնի հնազանդության ճանապարհի վրա:

Թող որ բաց լինենք ճշմարտությունը լսելու վստահելի բարեկամից ու մեր աղոթքներով դառնանք դեպի Աստված:

**Աղոթք** - Հայր, վստահում եմ Քեզ ու պատրաստ եմ վստահելի բարեկամից լսելու ճշմարտությունը: Ամեն:

**Կարող ես հայտնվել վտանգավոր գառիվայրերի առջև:**  
**Սակայն վստահի՛ր Աստծուն:**

**Կարդա՛**  
**Սաղմնու 140**

Որ սիրտս չհակվի  
չարության խոսքին:  
Սաղմնու 141. 4

## Ուղղորդող լույս

**Ճ**աշարանը գեղեցիկ էր, բայց մուլթ: Յուրաքանչյուր սեղա-  
նի վրա մի փոքր մոմ էր վառվում: ճաշացանկը կարդալու,  
սեղանակիցներին ու նույնիսկ իրենց կերածը տեսնելու համար  
մարդիկ բջջային հեռախոսների լույսերն էին միացրել: Վերջա-  
պես մի հաճախորդ, մոտենալով սպասարկողներից մեկին,  
հարցրեց.«Կարելի՞ է լույսերը միաց-  
նել»: Շուտով սրահը լուսավորվեց ու  
ներկաները ծափահարեցին և շնորհա-  
կալուծվեցին հայտնեցին: Ընկերուհուս  
ամուսինը, անջատելով հեռախոսի լույ-  
սը, վերցրեց դանակն ու պատառաքաղը  
և ասաց .«Թո՛ղ լույս լինի: Հիմա ու-  
տենք»:

Կարդա՛  
ծննդոց 1. 1-5

Աստված ասաց.  
«Թող լույս լինի»:  
Եվ լույս եղավ:  
ԾՆՆ. 1.3

Կոճակի մի սեղմումով մեր մուսյլ երեկոն ուրախ տոնակա-  
տարուծյան վերածվեց: Սակայն որքա՛ն ավելի կարևոր է ճշմա-  
րիտ լույսի աղբյուրը ճանաչել: Աստված Իր սքանչելի «Թող  
լույս լինի» խոսքն ասաց առաջին օրը, երբ տիեզերքն ստեղ-  
ծեց: «Եվ լույս եղավ» (Ծննդ.1.3): Հետո «Աստված տեսավ, որ  
լույսը լավ է» (Հմ.4):

Լույսը մեր հանդեպ Աստծո ունեցած սիրո արտահայտու-  
թյունն է: Նրա լույսը մեզ ցույց է տալիս Հիսուսին, որն «Աչ-  
խարհի լույսն է» (Հովհ. 8.12): Այն մեզ մեղքի խավարից դուրս  
է հանում:

Լույսի մեջ քայլելով՝ մենք գտնում ենք կյանքի պայծառ ու-  
ղին, որը Որդին է փառավորում: Նա աշխարհի պայծառա-  
գույն պարգևն է: Մինչ այն շողում է, թո՛ղ որ մենք էլ Իր ճա-  
նապարհով քայլենք:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմք Տե՛ր Դիսուսի՝ աշխարհի լույ-  
սի ու դեպի Իր մեծ սերն առաջնորդող լույսի համար: Ամեն:

**Դիսուսի շողշողացող լույսը լուսավորում է մեր  
խավար ճամփան:**

## Վերջին խոսքը

**Ա**նունը Սարալին էր, և ես դպրոցական տարիներին համակրում էի իրեն: Ամենագեղեցիկ ծիծաղն ունեւր: Կասկածում եմ, թե նա գիտեր իմ համակրանքի մասին: Դպրոցն ավարտելուց հետո նրան այլևս չտեսա, ու մեր կյանքերը տարբեր ուղղութիւններով ընթացան:

Դասընկերներին հետ կապը պահպանում եմ համացանցում: Շատ տխրեցի, երբ իմացա, որ Սարալինը մահացել էր: Սկսեցի մտածել նրա կյանքի ընթացքի մասին: Տարիքն առնելուն զուգընթաց ավելի շատ բարեկամ կամ ընտանիքի անդամ ենք կորցնում: Բայց մեզանից շատերը այդ մասին չեն ուզում խոսել:

Մինչ մենք ցավում ենք, Պողոս առաքյալը խոսում է այն հուշի մասին, որ վերջին խոսքը մահինը չէ (Ա. Կորնթ. 15.54-55): Մահվանը հաջորդում է հարութիւնը: Պողոսը այս հուշը խարսխում է Քրիստոսի հարութիւնի ճշմարտութիւնի վրա (Հմ.12) և ասում է. «Եւ եթե Քրիստոսը հարութիւն չի առել, ուրեմն մեր քարոզչութիւնն ունայն է, ունայն է և ձեր հավատը» (Հմ.14): Որպես հավատացյալներ՝ «եթե միայն այս կյանքում Քրիստոսի վրա հուշս ունենք, բոլոր մարդկանցից ավելի ողորմելի ենք» (Հմ.19):

Մի օր մենք դարձյալ պիտի տեսնենք նրանց, ովքեր Քրիստոսով ննջել են (Հմ.18)՝ նախնիներ, ծնողներ, բարեկամներ ու թերևս նաև դպրոցում մեր համակրած անձինք: Մահը վերջին խոսք չունի՝ Հարութիւնը ունի:

**Աղոթք** - Տե՛ր Հիսուս, թող Քո հարութիւնի գործիւնը ավելի ու ավելի ակնհայտ լինի իմ կյանքում: Գտնակ լինի իմ խոսքերում ու արարքներում, հատկապէս երբ հաղորդակցվում եմ նրանց հետ, ովքեր Քեզ չեն ճանաչում: Ամեն:

**Եթե հավատում ես, որ Քրիստոսը հարութիւն է առել, պատմի՛ր ուրիշներին:**

Կարդա՛ր  
Ա. Կորնթ. 15.12-19

Եթե միայն այս կյանքում Քրիստոսի վրա հուշս ունենք, բոլոր մարդկանցից ավելի ողորմելի ենք:

Ա Կորնթ. 15.19

## Ես պիտի սիրեմ

**Օ**րվա վերջում Շիրլին տեղավորվեց հարմարավետ աթոռի վրա, որ հանգստանա: Նայելով պատուհանից՝ տեսավ, որ տարեց մի զույգ ջանում է հին ցանկապատի մի մասը, որը ճրի էին ստացել, սայլակի վրա դնել: Շիրլին ու ամուսինը դուրս եկան նրանց օգնելու: Չորսով հազիվ կարողացան ցանկապատի մասը դնել սայլակն ու հրելով փողոցն ի վեր՝ այն հասցրին անկյունագարձի վրա գտնվող նրանց տուն: Ամբողջ ճանապարհին նրանք ծիծաղում էին: Երբ վերադառնում էին ցանկապատի երկրորդ մասը տանելու, կինը հարցրեց Շիրլինին. «Կուզե՞ս ընկերանանք»: «Այո՛» պատասխանեց Շիրլին:

Կարդա՛  
Ղևտական 19.9-18

Պիտի սիրես քո  
ընկերոջը՝ ինչպես  
ինքդ քեզ:  
Ղևտ. 19.18

Հետո Շիրլին իմացավ, որ իր վիետնամացի ընկերը շատ քիչ անգլերեն գիտե, մենակ են ապրում, որովհետև զավակները տեղափոխվել են մի քանի ժամվա հեռավորությամբ չրջաններ: Ղևտական գրքում Աստված խորայելացիներին հիշեցրեց, որ իրենք գիտեն՝ ինչ է նշանակում օտարական լինել (19.34) և ինչպես վարվել ուրիշների հետ (Հմ.9-18): Աստված նրանց ընտրել էր որպես Իր սեփական ժողովուրդ և իր փոխարեն նրանք պետք է օրհնեին իրենց «դրացիներին»՝ նրանց սիրելով իրենց անձերի պես: Հիսուսը վերահաստատեց Աստծո տված մեծագույն օրհնությունը բոլոր ազգերին՝ ասելով Իր Հոր խոսքը. «Սիրի՛ր Քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ էությունամբ, քո ամբողջ մտքով... Քո ընկերոջը քո անձի պես սիրի՛ր (Մատթ. 22.37-39): Մեր մեջ բնավող Քրիստոսի Հոգու միջոցով կարող ենք Աստծուն և ուրիշներին սիրել, որովհետև նախ Նա մեզ սիրեց (Ա. Հովհ. 4.19):

**Աղոթք** - Տեր, շնորհակալ եմ իմ հանդեպ քո ցուցաբերած սիրո համար: Սուրբ Յոզի, խնդրում եմ իմ միջոցով սիրի՛ր ուրիշներին, որ Դու փառավորվես: Ամեն:

**Մեր շուրջը միշտ էլ կլինեն տկարներ ու կարոտյալներ:**  
**Աստծո սիրով պիտի սիրենք նրանց:**

## Քայլել դեպի ետ

**Պատահամար ձեռքս ընկավ գովազդ պատրաստող անգլիական մի ընկերությունից, որում Ֆլանների Օ'Քոնորն էր պատկերված վեց տարեկանում՝ 1932 թվականին իր ագարակում: Փոքրիկ Ֆլաններին, որ հետագայում պիտի դառնար ամերիկացի հայտնի գրող, գրավել էր անձնակազմի ուշադրությունը, որովհետև հավի՛ն սովորեցրել էր դեպի ետ քայլել: Բացի այն, որ նորություն էր, կարծում էի, որ պատմության այս հետքը նաև փոխաբերական օրինակ է: Խորհելով ու գրելով հակամշակութային ձևով՝ Ֆլաններին թե գրական զգացականության և թե հոգևոր համոզմունքների երեսունինը տարիներն անցկացրել է «դեպի ետ քայլելով»: Հրատարակիչներին ու ընթերցողներին շփոթեցնում էր այն, որ նրա սուրբգրային նյութերը ակնհայտ հակադրվում էին իրենց ակնկալած կրոնական տեսակետներին: Մի կյանք, որը ընդունված սովորություններին հակառակ է ընթանում, նրանց համար է, ովքեր իրապես ուզում են Հիսուսին նմանվել: Փիլիպեցիներին ուղղված նամակում Պողոս առաքյալն ասում է. «Հիսուսը թեև Աստծո բնությունն» ուներ, բայց չընթացավ այնպես, ինչպես մենք էինք ակնկալում (2.6): Նա իր ունեցած զորությունը չգործածեց ի նպաստ իր անձնական շահի, այլ ընդհակառակը՝ «Իր անձն ունայնացրեց և ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով՝ իրեն խոնարհեցրեց » (Հմ.6-8): Բրիստոսը՝ ստեղծագործության Տերը, մահվանը հանձնվեց սիրո համար: Նա հեղինակություն չբանեցրեց, այլ խոնարհությունն ընտրեց: Իրականում Հիսուսը դեպի ետ էր քայլում, աշխարհի՝ ուժի վրա հիմնված ձևին հակառակ ուղղությունը: Տեր Հիսուսի նման մենք էլ ենք ծառայում իշխելու փոխարեն: Հիսուսի զորությունը մենք դեպի ետ ենք քայլում:**

**Կարդա՛**  
**Փիլիպ. 2.1-11**  
(Հիսուս) իր անձն ունայնացրեց:  
**Փիլիպ. 2.7**

**Աղոթք**- Տեր, խնդրում եմ, խոնարհության հոգի պարգևիր, որպեսզի կարողանամ ծառայի կերպարանք առնել ու Քեզ նմանվել: Ամեն:

**Առաջ գնալու միակ ձևը դեպի ետ քայլելով Հիսուսին միանալն է:**



## Կապույտ գծեր

**Ռ**ահուկային սպորտում ընդունված է, որ վազքողիները ճյան վրա նշվում են կապույտ գծերով: Թեև դրանք տեսողական առումով որոշակիորեն խանգարում են դիտորդներին, սակայն ապացուցված է, որ մրցակիցների ապահովության ու հաջողության համար ունեն կենսական կարևորություն: Կապույտ գույնը ծառայում է որպես ուղեցույց, որպեսզի դահուկորդները տեսնեն բլուրի ստորոտը հասնելու ամենակարճ ուղին, որովհետև կապույտը սպիտակի վրա ավելի տեսանելի է դարձնում մրցասպարեզի պատկերը, երբ մարզիկները արագորեն սահում են:

**Կարդա՛**  
**Առակներ 4.10-27**

Ես քեզ սովորեցնում եմ ընթանալ ուղիղ շավիղներով: Առ. 4.11

Սողոմոնն աղերսում է իր որդիներին իմաստություն խնդրել, որպեսզի կյանքի արշավում ապահով ընթանալու հույս ունենան: Իմաստությունը կապույտ գծերի նման, -ասում է նա, -նրանց պիտի առաջնորդի: «Ես քեզ սովորեցնում եմ ընթանալ ուղիղ շավիղներով, որպեսզի եթե գնաս, ընթացքդ չխափանվի, եթե վազես, երբեք չհոգնես» (Առ. 4.11-12): Որպես հայր՝ նրա հույսն է, որ իր որդիները վայելեն ճոխ կյանք, որն ազատ է Աստծուց անկախ ապրելու կործանարար ազդեցությունից: Աստված, որպես մեզ սիրող Հայր, Իր խոսքում մեզ առաջարկում է «կապույտ գծերի» ուղղությունը, այն դեպքում, երբ մեզ տվել է դահուկով մեր ուզած տեղում չմշկելու ազատությունը: Իր խոսքում առաջարկած իմաստությունը մրցասպարեզի նշանների նման «կյանք է գտնողների համար և բժշկություն՝ ամբողջ մարմնի համար» (Հմ.22): Երբ չարից ետ դառնանք ու քայլենք Իր հետ, մեր ճամփան կլուսավորվի Իր արդարությունը:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, շնորհակալ եմ քո խոսքի համար: Օգնի՛ր, որ ամուր բռնեմ քո տված իմաստությունը: Ամեն:

**Սայթաքելու վտանգի մե՞ջ ես:**  
**Վստահի՛ր Աստծո տված պաշտպանությանը:**

## Երբ իմանանք, թե ո՞վ է շահելու

**Ի**մ վերակացուն քոլեջի բասկետբոլի խմբի երկրպագուն է: Այս տարի թիմը շահեց առաջնությունը, և մեր գործընկերներից մեկը շնորհավորական գրություն ուղարկեց վերակացուիս: Բայց հարցն այն է, որ նա չէր կարողացել վճռորոշ խաղը նայել: Եվ խոստովանեց, որ արդյունքն իմանալով՝ հուսախաբ է եղել: Սակայն, խաղը գիտելուց հետո նա ընդունեց, որ նախապես իմանալով արդյունքը, չէր նյարդայնացել, քանի որ գիտեր թե ով պետք է լիներ հաղթողը:

Մենք չգիտենք, թե վաղն ինչ է պատահելու: Օրերի մի մասը սովորական կլինեն, մի մասը՝ հոգնեցուցիչ, որոշ օրեր էլ՝ ուրախություններով: Հնարավոր է՝ որոշ ժամանակ կյանքը նույնիսկ գորշ ու տառապալից թվա: Բայց հակառակ կյանքի այդ վայրկյաններին՝ մենք կարող ենք Աստծո խաղաղություն մեջ հաստատ մնալ, որովհետև վերակացուիս նման պատմության վերջը գիտենք: Գիտենք, թե ով է շահելու:

Հայտնության գիրքը բացում է այս սքանչելի ավարտը քողարկող վարագույրը: Մահվան ու չարի վերջնական պարտություններից հետո (20. 10,14) Հովհաննեսը նկարագրում է գեղեցիկ, հաղթական մի տեսարան (21.1-3), որտեղ Աստված Իր տունն է հաստատում Իր ժողովրդի հետ (Հմ.3): Այնտեղ «Աստված նրանց աչքերից ամբողջ արտասուքը կարբի, այլևս մահ չի լինի, ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցավ այլևս չի լինի» (Հմ.4):

Դժվար ու տագնապալի օրերին մենք կարող ենք ապավինել այս խոստմանը:

**Աղոթք** - Երկնավոր Զայր, շնորհակալ եմ, որ խոստանում ես հանգիստ ու հավիտենական ուրախություն: Որ մեր ցավերը պիտի վերացնես ու մեր արցունքները սրբես: Ամեն:

**Հակառակ մեր ամենօրյա ցավերին՝ Տերը մեզ ուրախ հավիտենություն է խոստանում:**

**Կարդա՛ր  
Չայտնություն 21.1-5**

Աստված նրանց աչքերից ամբողջ արտասուքը կարբի: Զայտն. 21.4

## Որևէ չարիքից չպետք է վախենամ

**1** 1957-ին Մելբա Պատիլո Բիլսը դարձավ սևամորթ աշակերտ-ները «Լիթլ Ռոքի իննյակ» խմբի անդամ: Այդ ժամանակ սպիտակամորթները փորձում էին խանգարել նրանց համատեղ սովորելուն:

2018 թվականին հրատարակված իր հուշերում, որ վերնագրել է «Չպիտի վախենամ. կրակի մեջ հավատի կյանք կերտելու մի պատմություն», Բիլսը նկարագրում է այն անարդարություններն ու ոտնձգությունները, որ եղել են տասնհինգ տարեկան աշակերտի հանդեպ, և որոնց դեմ ինքը պայքարել է արիաբար: Նա գրում է նաև Աստծո նկատմամբ իր ունեցած զորավոր հավատի մասին: Խոր հուսահատությունն ու վախի պահերին նա հաճախ էր կրկնում մանուկ հասակում իր տատիկից սովորած աղոթքը և զգալով, որ Աստված ներկա է, քաջալերվում էր:

Բիլսը հաճախ էր կրկնում 22-րդ սաղմոսը. «Եթե նույնիսկ անցնեմ մահվան ստվերների միջով, չեմ վախենա չարից» (Հմ.5): Իր տատի քաջալերող խոսքն էր հնչում ականջին՝ վատահեցնելով, թե Աստված իր մոտ է, և կարելի է օգնություն խնդրել Նրանից:

Երբ մեզ վախեցնող դժվարություններ ու նեղություններ ենք դիմազրավում, թող մեր սիրտը քաջալերվի այն ճամարտություններ, որ Աստծո հզոր ներկայությունը միշտ մեզ հետ է:

**Աղոթք** - Հայր, երբ հանգամանքներն ինձ վախ ներշնչեն, օգնիր հիշել, որ Դու մոտ ես, և ես արիանամ Քո ներկայության զորությամբ:

Կարդա՛ր  
Սաղմոս 22

Եթե նույնիսկ անցնեմ մահվան ստվերների միջով, չեմ վախենա չարից:  
Սաղմ. 22.4

**Երբ ցավեր, նեղություններ ու դժվարություններ ունենաս, հիշի՛ր, որ Տերը քեզ մոտ է:**

## Բոլոր ժամանակներից ավելի լավ

**Փ**արիզի Աստվածամոր տաճարը սքանչելի մի կառույց է: Բացի ճարտարապետական հզոր մտահղացումից, հիասքանչ են նաև տաճարի ներսի գունավոր ապակիներն ու չքեղ զարդարանքը: Սակայն դարավոր կառույցը, կրելով ժամանակի և օդի աղտոտվածության վնասակար հետևանքները, լուրջ հիմնանորոգման կարիք ունի: Ութհարյուրամյա կոթողը սիրողներն ու գնահատողները պատրաստ են այն փրկել: Վերջերս Ֆրանսիայի կառավարությունը ավելի քան վեց միլիոն դոլար է հատկացրել այն նորոգելու համար: Անհրաժեշտ է ամրացնել կառույցի հենասյուները, ամբողջովին նորոգել տանիքը և փոխել արտաքին քարերը: Տրամադրված գումարն օգտագործվելու է, որովհետև շատերի համար այս տաճարը հույսի խորհրդանիշ է: Ինչ որ ճշմարիտ է

**Կարդա՛ր**  
**Բ Կորնթ. 4. 16-5.9**

Դրա համար չենք վիստվում, այլ թեև մեր արտաքին մարդը փչանում է, բայց մեր ներքին մարդն օրեցօր նորոգվում է:  
**Բ Կորնթ. 4.16**

չենքերի համար, կարելի է ասել նաև մեզ համար: Մեր մարմինը նույնպես այս հինավուրց եկեղեցու նման հնանում է ու մաշվում: Սակայն ինչպես Պողոս առաքյալն է ասում՝ բարի լուր կա: Թեև մեր երիտասարդության Ֆիզիկական կենսունակությունը կորցնում ենք, բայց մեր հոգևոր էությունը «մեր ներքին մարդն օրեցօր նորոգվում է» (Բ.Կորնթ. 4.16): Եվ որովհետև «Չանք ենք անում, որ թե մնանք և թե դուրս գանք՝ հաճելի լինենք Նրան» (5.9), հարկ է Սուրբ Հոգուն վստահել, որ նա մեզ հոգով լցնի ու փոխակերպի (3.18, Եփ.5.18): Մեր հոգևոր աճը ամենևին չպետք է դադարի, անկախ նրանից, թե մեր «կառույցը» ինչ տեսք կունենա: :

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ Հոգուդ համար, որ նորոգում ու փոխակերպում է մեզ: Խնդրում եմք՝ մեզ զորություն ու քաջություն տու՛ր Քեզանով հանգստանալու և Քեզ հետ ունեցած մեր հարաբերության մեջ աճելու: Ամեն:

**Թեև մեր մարմինները տկարանում են, մեր հոգին օրեցօր նորոգվում է:**

## Լեզու սանձողները

**Բ**երիկ Մարխամն իր «Արևմուտքը գիշերվա հետ» գրքում մանրամասն նկարագրում է Կամսիկանի՝ համառ ձիուն սանձելու ջանքերը: Նա տարբեր հնարքներ է բանեցնում, բայց չի կարողանում սանձել հպարտ ձիուն:

Մեզանից քանի՞սն են այսպիսի զգացողություն ունենում՝ փորձելով սանձել իրենց լեզուն: Հակոբոսը, մեր լեզուն նմանեցնելով ձիու բերանին կամ նավի ղեկին (Հակ. 3.3-5), ասում է. «Միևնույն բերանից դուրս են գալիս օրհնություն և անեծք: Պետք է, եղբայրներ՛ր, որ սա այդպես լինի» (Հմ.10):

Իսկ ինչպե՞ս կարելի է այս գործում հասնել հաջողության: Պողոս առաքյալը լեզուն սանձելու մի խրատ է առաջարկում: Նախ պետք է ճշմարտությունը խոսել (Եփ. 4.25): Բայց սա ցավազին անփութության արտոնագիր է: Պողոսը շարունակում է՝ ասելով. «Ձեր բերանից ոչ մի վատ խոսք դուրս չգա, միայն այն, որ բարի է, հավատի շինության համար պիտանի, որ շնորհ տա լսողներին» (Հմ.29):

Մենք նաև կարող ենք մեր միջի աղտեղությունը դուրս հանել. «Ամեն դառնություն, բարկություն, սրտմտություն, աղաղակ և հոյհոյություն թող վերցվի ձեզանից ամեն հարության հետ» (Հմ.31): Դյուրի՞ն է այս մեկը անել: Ո՛չ, եթե փորձենք մեզ վրա: Բարեբախտաբար ունենք Սուրբ Հոգի, որը կօգնի մեզ, եթե վստահենք Իրեն:

**Աղոթք** - Տե՛ր Յիսուս, քո կարիքն ունենմ, օգնի՛ր, որ զգույշ լինեն իմ օգտագործած բառերի մեջ: Ամեն:

**Եթե հակված ես դառնությամբ ու աղտեղությամբ խոսելու, սանձի՛ր լեզուդ:**

Կարդա՛  
Յակոբոս 3. 1-6, 21

Ձեր բերանից ոչ մի վատ խոսք դուրս չգա, միայն այն, որ բարի է, հավատի շինության համար պիտանի, որ շնորհ տա լսողներին: Եփ. 4.29

## Ինչ որ անենք

«Հաճելիորեն զարմացած» գրքում Կ.Ս.Լուիսը խոստովանում է, որ հավատի է դարձել երեսուներեք տարեկանում «հարվածելով, պայքարելով, դժգոհ ու անընդհատ փախուստի ճանապարհներ որոնելով»: Հակառակ Լուիսի այդ անձնական դիմադրություններին ու հակառակվելու ձգտումներին՝ Տերը փոխակերպեց նրան ու դարձրեց հավատի խիզախ ջատագով: Աստծո սերն ու ճշմարտությունը Լուիսը արտահայտեց իր գրվածքների միջոցով, որոնք նրա մահից հիսունհինգ տարի անց էլ դեռ կարդացվում և ուսումնասիրվում են: Նրա ապրած կյանքն արտացոլում է այն հավատամբը, թե մարդը « երբեք ձեր չէ մեկ այլ նպատակ ճշտելու կամ մի բանի մասին երազելու համար»:

### Կարդա՛

Քո գործերը հանձնիր Տիրոջ ձեռքը, և քո մտադրությունները պիտի կատարվեն: Առ. 16.3

Մինչ մենք ծրագրեր ենք մշակում և ինչ-որ բանի մասին երազում, Աստված կարող է մեր մտադրությունները կատարել և մեզ զորացնել, որ ամեն բան իր համար անենք (Առ. 16-1-3): Ամենասովորական պարտականությունից մինչև մեր մեծագույն մարտահրավերը մենք կարող ենք ապրել մեր հզոր Արարչի փառքի համար, որ «Ամեն ինչ արել է մի նպատակի համար» (Հմ.4):

Աստված չի սահմանափակվում մեր սահմանափակումներով: Մենք ընտրում ենք իր համար ապրելը՝ իրեն հանձնվելով ու իրեն վստահելով, որ կհայտնի մեզ համար ունեցած իր ծրագրերը: Ինչ էլ որ անենք, կարելի է անել իր հետ, իր համար և միմիայն իր պատճառով:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ ենք մեզ հիշեցնելու համար, որ Քո թագավորության մեջ որևէ պարտականություն փոքր չէ և ոչ էլ որևէ երազանք է մեծ: Ամեն:

**Որպես Աստծո որդիներ՝ մենք անելիքներ ունենք, որ կատարելու ենք իր հետ:**

## Ինչ գնով էլ լինի

«Քրիստոսի առաքյալ Պողոսը» ֆիլմը ներկայացնում է առաջին դարում եկեղեցու կրած հալածանքները: Ֆիլմի նույնիսկ երկրորդական հերոսներն են ասում, թե որքան վտանգավոր էր Հիսուսին հետևելը: Այր ու կին ծեծվեցին ու նահատակվեցին հանուն իրենց հավատի: Քրիստոսի հետ նույնանալը միշտ էլ թանկ է նստել հավատացյալների վրա: Այսօր էլ մի շարք երկրներում նույն վիճակն է, հավատացյալները հալածվում են: Մեզանից ոմանք էլ հալածված են զգում, երբ իրենց հավատը դառնում է ծաղրի առարկա:

Բնականաբար, մեծ տարբերություն կա հանրային հարցերը և մեր կյանքը զոհելու մեջ: Իրականում անձնական շահը, նյութական կայունությունն ու հասարակական ընդունելությունը միշտ էլ մղիչ ուժ են եղել: Այս բանը տեսնում ենք նաև Հիսուսի մի շարք հետևորդների մեջ: Հովհաննես առաքյալը տեղեկացնում է, թե Հիսուսի խաչելությունից առաջ թեև իսրայելցիների մեծ մասը մերժում էր նրան (Հովհ.12.37), «բայց և այնպես իշխաններից շատերը նրան հավատացին» (Հմ.42): «Սակայն չէին դավանում..., որովհետև մարդկանց փառքն ավելի սիրեցին, քան Աստծո փառքը» (Հմ.42-43):

Այսօր մենք դեռևս հասարակական ճնշումներ ենք դիմադրավում՝ Քրիստոսի հանդեպ մեր ունեցած հավատը քողարկելու համար: Ինչ գնով էլ լինի, միասին լինենք որպես ժողովուրդ, որը խնդրում է Աստծո հավանությունը մարդկանց հավանությունից ավելի:

### Կարդա՛

...իշխաններից շատերը նրան հավատացին, սակայն չէին դավանում: Զովհ. 12.42

**Աղոթք** - Տե՛ր, ուզում եմ քո մտերիմ բարեկամը լինել: Ամեն:

**Փորձում ենք մեր հավատն ու ինքնությունը քողարկե՞լ:**  
Արիաբար՝ Տիրոջը վստահենք:

## Միաբանություն

1722-ին մորավիացի քրիստոնյաների մի խումբ, որոնք բնակվում էին այժմյան Չեխիայի Հանրապետության տարածքում, հալածանքից հեռու ապաստան գտան մի ազնիվ գերմանացու մոտ: Չորս տարում 300-ից ավելի մարդ եկավ: Սակայն հալածյալ գաղթականների համար իդեալական գաղութ լինելու փոխարեն այն դարձել էր անհամաձայնության օջախ: Քրիստոնեության մասին եղած տարբեր մոտեցումները պառակտություն էին առաջացրել: Եվ այդ կացության մեջ նրանց կատարած ընտրությունը պատճառ դարձավ վերածնունդի: Իրենց անհամաձայնությունների վրա կենտրոնանալու փոխարեն նրանք կենտրոնացան համաձայնությունների վրա, և արդյունքը միաբանությունը եղավ:

Պողոս առաքյալը Եփեսոսի եկեղեցու հավատացյալներին քաջալերեց, որ միաբանությամբ ապրեն: Մեղքը միշտ էլ խնդիրներ է առաջացրել և առաջացնում: Բայց ինչպես ոմանք «կենդանի են Քրիստոսով», եփեսացիներն էլ հրավիրվեցին գործնականորեն ապրելու իրենց ինքնությունը (Եփ.5.2): Նրանք հիմնականում հրավիրված էին «Չանալով Հոգու միաբանությունը խաղաղության կապով պահելու»(4.3):

Այս միաբանությունը մարդկային զորությամբ իրագործված ընկերակցություն չէ: Մենք լինելու ենք «Ամենայն խոնարհությամբ, հեզությունբ և համբերատարությամբ, սիրով իրար համբերելով» (Հմ.2):

**Աղոթք** - Հայր, Դու, որ ամեն բանի վրա, ամեն բանով ու ամեն բանի մեջ ես, մեր մեջ ապրի՛ր այնպես, որ միաբանություն լինի: Ամեն:

Բաժանումներ և պայքարներ միշտ էլ կլինեն, բայց էականն այն է, որ Սուրբ Հոգու զորությամբ կարողանանք միաբանությունը պահել:

Կարդա՛  
Եփես. 4. 1-6

Ձանալով Հոգու միաբանությունը խաղաղության կապով պահելու: Եփ. 4.3



## Գիշատիչներին մի՛ տրվիր

**Ե**րբեք լսած կլինես «Գիշատիչներին մի՛ տրվիր» արտահայտությունը: «Մի՛ տրվիր»-ը նոր՝ համացանցային ժամանակներում կարող է նորովի ընկալվել: Այսօր համացանցում մարդիկ կան, որոնք հաճախ վնասակար ու հրահրող ակնարկներ են տեղադրում: Իհարկե, քիչ չեն նաև կառուցողական խոսակցություն հակվածները:

«Գիշատիչներին մի՛ տրվիր» արտահայտությունը կարող է համարժեք լինել Առակաց 26-ի 4-ին, որը զգուշացնում է, որ անմիտի կամ անզգամի հետ վիճելը կարող է մարդուն իջեցնել նրանց մակարդակին:

Եվ քանի որ այդ անարժան մարդիկ նույնպես Աստծո պատկերն են կրում, եթե մենք զուր տեղը բարկանանք ու վիրավորենք նրանց, մենք էլ կարող ենք ընկնել նրանց նմանվելու վտանգի մեջ (Մատթ. 5.22): Ուստի հարկավոր է աղոթքով ու խոնարհությամբ ապավինել Աստծուն, որպեսզի իմանանք, թե ինչպես սեր ցուցաբերենք ուրիշներին (Կող. 4.5-6): Երբեմն պետք է խոսել, իսկ երբեմն էլ լռել:

Բայց բոլոր պարագաներում մենք խաղաղություն ենք գտնում՝ իմանալով, որ նույն Աստվածը «մեր նկատմամբ իր սերը հայտնեց, երբ մենք դեռ մեղավոր էինք» (Հռոմ. 5.8) և իր զորությունը գործադրում է յուրաքանչյուր անձի սրտում: Թող որ իր իմաստությունը հանգստանանք և Քրիստոսի սերը բաժանենք ուրիշներին:

**Աղոթք** - Սիրո Տե՛ր, շնորհակալ եմ, որ նույնիսկ երբ անմիտ ու անզգամ եմ, Դու սիրում ես ինձ ու Քեզ մոտ ես ձգում: Օգնիր, որ Քո սերը հասցնեմ ուրիշներին: Ամեն:

**Եթե Աստծո սերը բնակվում է մեր մեջ, զգուշանանք վնասակար արտահայտություններ անելուց:**

### Կարդա՛ր Առակներ 26. 4-12

Դրսիմների հետ իմաստությամբ վարվեցեք ու ժամանակը օգտագործեցեք: Ձեր խոսքն ամեն ժամանակ թող շնորհով... լինի: Կող. 4. 5-6

## Ձրից ավելի

**Ե**կեղեցու մասին իմ մանկական հիշողություններից մեկը մեր հովվի՝ բեմից ներքև իջնելն ու եկեղեցու խորշերում քայլելով մեզ տված մարտահրավերն է՝ հետևյալ բառերով: «Հիշի՛ր մկրտությունդ ջրերը»: Ապա նա յուրաքանչյուրիս վրա ջուր էր ցողում: Դա ինձ և՛ ուրախացնում էր, և՛ շփոթեցնում:

Ինձ հետաքրքիր էր՝ ինչպե՞ս կարելի է հիշել ջուրը և ինչո՞ւ մտածել մկրտության մասին: Երբ մեկը մկրտվում է, բացի ջրից այլ բան չկա այնտեղ:

Իրականում մկրտությունը խորհրդանշում է, որ «Քրիստոսով մկրտվելով՝ մենք Քրիստոսին ենք հազնում» (Գաղ.

3.27): Այլ խոսքով՝ հռչակում ենք, որ մենք Իրեն ենք պատկանում, իսկ Ինքը մեր մեջ ու մեր միջոցով է ապրում:

Պողոսը նաև ավելացնում է, որ եթե մենք հազել ենք Քրիստոսին, ուրեմն մեր ինքնությունն իր մեջ է, ու մենք Աստծո որդիներն ենք (Հմ.26): Այսպես հավատով մենք հաշտվում ենք Աստծո հետ՝ ոչ միայն Հին Կտակարանի օրենքներին հետևելով (Հմ. 23-25): Մենք միմյանցից բաժանված չենք ազգային, սեռային, մշակութային և կարգավիճակի տարբերություններով: Մենք ազատ ենք եղել, ապա Քրիստոսով միացել և հիմա Իրեն ենք պատկանում (Հմ.29):

Հետևաբար շատ լավ պատճառներ կան մեր մկրտությունը և դրա խորհուրդը հիշելու համար: Մենք պարզապես այդ գործողության վրա չէ, որ կենտրոնանում ենք, այլ այն իրողության, որ մենք Հիսուսին ենք պատկանում ու Աստծո զավակներն ենք: Մեր ինքնությունը, ապագան և հոգևոր ազատությունը իր մեջ է:

**Աղոթք** - Հայր, օգնի՛ր բնավ չմոռանալ, որ ես Քրիստոսի միջոցով Աստծո զավակ եմ: Ամեն:

**Դու Քրիստոսին ես հազել, և հենց այդ խորհրդով էլ հիշի՛ր քո մկրտությունը:**

**Կարդա՛ր**  
**Գաղ. 3. 23-29**

Քանի որ ամենքդ, որ Քրիստոսով մկրտվեցիք, Քրիստոսին եք հազել: Գաղ. 3.27

## Շրջվի՛ր ու փախի՛ր

**Ա**լին մի շատ անուշիկ, խելացի ու տաղանդավոր աղջիկ էր՝ իր ծնողների սիրելի դուստրը: Սակայն միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա անզգուշություն ունեցավ հերոին թմբանյութը փորձելու: Ծնողները նկատեցին իրենց աղջկա մեջ կատարված փոփոխությունը և նրան ուղարկեցին վերականգնողական կենտրոն: Բուժումից հետո, երբ ծնողները հարցրին, թե ինչ ունի ասելու իր այդ մոլության մասին, նա պատասխանեց. «Շրջվի՛ր ու փախի՛ր, -և շեշտեց. -պարզապես ոչ ասելը բավարար չէ»:

Դժբախտաբար, Ալիի հիվանդությունը կրկնվեց, և նա քսաներկու տարեկանում թմբանյութի գերդոզավորման պատճառով մահացավ: Նրա վշտահար ծնողները, փորձելով ուրիշներին ետ պահել այդ վտանգավոր մոլությունից, հեռուստատեսությամբ կոչ արեցին չհետևել իրենց աղջկա օրինակին, հեռու մնալ այն վիճակներից, որոնք կարող են իրենց մղել թմբամոլության: Պողոս առաքյալը Տիմոթեոսին հորդորեց, որ փախչի չարից (Բ.Տիմ. 2.22): Պետրոս առաքյալն էլ ազդարարեց. «Ձեր ոստիս թշնամին՝ սատանան, մոնչացող առյուծի պես ման է դալիս և փնտրում է, թե ու՛մ կուլ տա: Նրան հակառակ կացե՛ք՝ հավատով հաստատված» (Ա.Պետ. 5.8-9):

Մեզանից ոչ մեկը պատրաստ չէ փորձություններին դիմադրավելու: Ամենաճիշտը հեռու մնալն է այն վիճակներից, որոնցում փորձությունների ենթարկվելու վտանգ կա: Թեև ոչ միշտ է հնարավոր խուսափել դրանցից: Ուստի ավելի լավ կարող ենք պաշտպանվել Աստծո նկատմամբ ունեցած զորավոր հավատով:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, մեր առջև զանազան փորձություններ կան: Օգնի՛ր՝ զգուշ լինենք ու աղոթենք, որ չընկնենք: Շնորհակալ ենք, որ մեզ ընդունում ես, երբ դեպի Քեզ եմք դառնում: Ամեն:

**Փորձությունները միշտ կլինեն:**  
**Կարևորը դրանց դիմադրավելն է:**

**Կարդա՛ր**  
**Ա Պետրոս 5. 8-10**

Նրան հակառակ կացեք՝ հավատով հաստատված:  
**Ա Պետ. 5.9**

## Փոքր ու անարժեք զգալ

**Կ**ինոքննադատները հաճախ են անդրադառնում անգլիացի Լեեթիսոթ Դեյվիդ Լինի «Լոուրենս Արաբացի» օսկարակիր ֆիլմին: Արաբական անապատների անվերջ տեսարաններով այս ֆիլմը մեծապես ազդել է ֆիլմարտադրողների մի ամբողջ սերնդի վրա: Մասնավորապես հայտնի բեմադրիչ Սթիվեն Սփիլբերգն ասել է. «Ես շատ ներշնչվեցի, երբ առաջին անգամ տեսա այս ֆիլմը: Այն ինձ ստիպեց փոքր զգալ, և մինչև այսօր էլ ինքս ինձ աննշան եմ զգում: Այդ հատկությունը ֆիլմի մեծությունը չափանիշներից է»:

Ի՞նչն է, որ ինձ է ստիպում փոքր զգալ. երբ օվկիանոսին եմ նայում, երբ սավառնում եմ բևեռային սառույցների վրայով կամ էլ քննում եմ աստղազարդ երկինքը: Եթե տիեզերքն այդքա՛ն վիթխարի ու կարևոր է, ուրեմն որքա՛ն ավելի մեծ է դրա Արարիչը, որ խոսքով ստեղծեց ամեն բան:

Դավիթը Աստծո մեծությունն ու մեր ճղճիմությունն է հաստատում, երբ հայտարարում է. «Մարդն ի՞նչ է, որ հիշում ես նրան, կամ մարդու որդին, որ այցի գաս նրան» (Մաղմ. 8.5): Սակայն Հիսուսը մեզ վստահեցնում է՝ ասելով. «Նայեցե՛ք երկնքի թռչուններին, որ ո՛չ սերմանում են, ո՛չ հնձում և ո՛չ էլ ամբարների մեջ հավաքում, և ձեր երկնավոր Հայրը նրանց կերակրում է: Չէ՞ որ դուք նրանցից ավելի լավ եք» (Մատթ. 6.26):

Մենք կարող ենք մեզ զգալ փոքր, ճղճիմ ու աննշան, սակայն մեր Հոր աչքում մեծ արժեք ունենք:

**Աղոթք** - Հայր, օգնիր հիշել, որ մեզ սիրում ես: Առաջնորդիր, որ գտնենք մեր ճշմարիտ նշանակությունը Քո մեջ: Ամեն:

**Թեև մենք փոքր ու անարժեք կարող ենք թվալ, սակայն Աստված մեզ բարձրացնում է:**

Կարդա՛ր  
 Մատթ. 6.25-32

Մարդն ի՞նչ է, որ հիշում ես նրան, կամ մարդու որդին, որ այցի գաս նրան:  
 Մաղմոս 8.5

## Որթատունկի մեջ

**Ց**րտաշունչ ճմռանը էմման իր ընտանիքի՝ ծանր հիվանդու-  
 թյամբ տառապող անդամներից մեկին օգնելուց հետո շատ  
 ոգևորվեց, երբ հաջորդ գարնանը Անգլիայի Քեմբրիջ քաղաքի  
 իր տան մոտ գտնվող կեռասենին տեսավ. ծաղկած ծառի վար-  
 դագույն ծաղիկների վերին մասում մի սպիտակ ծաղիկ էր  
 երևում: Հմուտ պարտիզպանը կեռասե-  
 նին պատվաստել էր ճերմակ ծաղկի մի  
 ճյուղով: Անցնելով այդ տարօրինակ  
 ծառի մոտով՝ էմման խորհեց Հիսուսի՝  
 «Ես որթատունկն եմ, դուք՝ ճյուղերը»  
 խոսքերի մասին (Հովհ. 15.1-8):

Իրեն որթատունկ կոչելով՝ Հիսուսը  
 խոսում էր Հին Կտակարանից խրայել-  
 ցիներին ծանոթ մի պատկերի մասին, որ-  
 տեղ որթատունկը խորհրդանշում էր  
 Աստծո ժողովրդին (Սաղմ. 79. 9-12, Օսե-  
 ե. 10.1): Հիսուսը, ընդարձակելով այս խորհրդանիշը, ասում է.  
 «Ես որթատունկն եմ, դուք՝ ճյուղերը. նա, ով իմ մեջ է մնում,  
 ես էլ՝ իր մեջ,-նա շատ պտուղ է բերում» (Հովհ. 15.5):

Էմման, որ օգնեց իր ընտանիքի անդամներից մեկին, ևս  
 պետք է հիշեր, որ ինքն էլ է կապված Հիսուսին: Մենք, որ հա-  
 վատում ենք Հիսուսին, ընդունենք այն գաղափարը, թե որքան  
 մոտ լինենք Իրեն, ինչպես որ ճյուղն է մոտ որթատունկին, այն-  
 քան մեր հավատը կգործանա ու կհարստանա:

**Կարդա՛**  
**Յովհաննես 15. 1-8**  
 ...ինչպես որ ճյուղն  
 ինքն իրենից չի  
 կարող պտուղ բե-  
 րել, եթե որթա-  
 տունկի վրա չմնա,  
 այնպես էլ դուք,  
 եթե իմ մեջ չմնաք:  
 Յովհ. 15.4

**Աղոթք** - Տե՛ր Յիսուս, շնորհակալ եմ, որ օգնում ես ինձ  
 Քո հանդեպ հաստատական մնալ: Թող որ ինձ անհրա-  
 ժեշտ խաղաղությունը, հույսն ու զորությունը գտնեմ:  
 Ամեն:

**Յիսուսը որթատունկն է:**  
**Արդյո՞ք ես Նրա վրա հաստատված ճյուղերից մեկն եմ:**

## ԱՆՈՒՆՆԵՐԻ անուՆը

**Լ**արային գործիքների իտալացի վարպետ Անտոնիո Ստրադիվարիուսը (1644-1737) երաժշտական աշխարհում չափազանց մեծ համբավ ունի: Նրա պատրաստած ջութակները, թավջութակներն ու վիոլաները մի-մի գանձ են՝ որպես արվեստի բացառիկ գործեր ու ձայնի արտակարգ հատակութուն ունեցող գործիքներ: Դրանցից շատերը նույնիսկ հատուկ անուններ են ունեցել, ինչպես օրինակ Մեսիա Սալբուո Ստրադիվարուս : Զուլթակահար Զոզեֆ Զոակիմը (1831-1907) զբանով նվագելուց հետո գրել է.«Զուլթակի յուրահատուկ ձայնը անընդհատ հնչում է հիշողությանս մեջ՝ միախառնված քաղցրությամբ ու մեծությամբ»:

Կարդա՛ր  
Ելք 6. 1-8

Աստված շատ բարձրացրեց նրան և մի անուն շնորհեց նրան, որ ամեն անունից ավելի բարձր է: Փիլիպ. 2.9

Նույնիսկ Ստրադիվարիուսի անունն ու ձայնը անհամեմատելի է ավելի մեծ ու անգերազանցելի կյանքի աղբյուրի հետ: Մովսեսից սկսած մինչև Հիսուս՝ Աստվածների Աստվածը Իրեն ներկայացնում է բոլոր անուններից բարձր մի անունով: Մեր օգտի համար ուզում է, որ Իր իմաստությունն ու ձեռքի գործը ճանաչվի, արժևորվի ու հռչակվի երաժշտության ձայնով (Ելք 6.1,15.1-2):

Ո՞վ կարող էր նախատեսել, որ մի օր Հիսուսը իր խաչված ձեռքերի տկարությամբ՝ հավիտենական և անսահման մի ժառանգ էր թողնելու: Նա մեր մեղքերի համար խաչ բարձրացավ՝ ցույց տալու, թե որքա՛ն է սիրում մեզ: Որևէ մեկը կարո՞ղ էր կանխատեսել հանուն Մեռնողի երգված փառաբանության երաժշտության հրաշալի ու մեծ արդյունքը:

**Աղոթք** - Երկնքում բնակվող Հայր,խնդրում ենք՝ գործիր մեր մեջ ու մեր միջոցով, որպեսզի ուրիշները տեսնեն, որ մենք ամեն բանի համար Քեզ ենք պարտական: Ամեն:

**Տերը Իր սքանչելի ձեռքերով կերտեց մեզ, հիշենք,  
որ մենք Իր զավակներն ենք:**

## Աձել՝ իմանալու համար

**Տ**ասնյոթ տարեկան էի, երբ իմացա, որ Գերմանիայում ուսանելու մասին դիմումս ընդունվել էր: Ուրախացա, բայց ընդամենը երեք ամիս ունեի պատրաստվելու, իսկ ես գերմաներենի որևէ դասընթացի չէի հետևել: Հետևաբար հաջորդող օրերը դժվար ու լարված եղան: Ժամերով դասեր էի անում, նույնիսկ բառերը սովորելու համար դրանք ձեռքերիս էի գրում: Ամիսներ անց ես արդեն ուսանող էի Գերմանիայում: Բայց դարձյալ հուսահատ էի, որովհետև լեզվին կատարելապես չէի տիրապետում: Այդ ժամանակ ուսուցիչներից մեկը մի իմաստուն խրատ տվեց ինձ. «Լեզու սովորելը ավագակույտ մագլցելու նման է, երբ մտածում ես, թե տեղ չես հասնի: Բայց դու շարունակիր և կհասնես»: Ես այս խորհուրդն եմ հիշում, երբ խորհում եմ, թե ինչ է նշանակում աճել որպես Տեր Հիսուսի աշակերտ: Պողոս առաքյալն ասաց. «Ես սովորել եմ ինչի մեջ որ կամ, նրանով բավարարվել» (Փիլիպ. 4.11): Նույնիսկ Պողոսի համար անձնական խաղաղությունը մեկ օրում չպատահեց, այլ դրա մեջ ինքն աճեց: Եվ աճի այդ գաղտնիքով նա բաժնեկցում է մեզ հետ. «Գիտեմ պակասություն քաշելը և առատության մեջ լինելն էլ... Ամեն բան կարող եմ ինձ գորացնող Քրիստոսով» (Փիլիպ. 4.12-13):

Կյանքն ունի իր մարտահրավերները: Բայց երբ դառնում ենք դեպի «աշխարհին հաղթողը» (Հովհ. 16.33), տեսնում ենք, որ Նա ոչ միայն հավատարիմ է մեր առաջադիմելուն օգնելիս, այլև հաստատում է, որ ավելի կարևոր բան չկա, քան Իր մոտ լինելը: Երբ Իր հետ ենք քայլում, Նա մեզ խաղաղություն է պարգևում, օգնում է, որ վստահենք ու գորացնում է առաջ գնալիս:

**Աղոթք** - Տեր Հիսուս, շնորհակալ եմ տվածդ խաղաղության համար: Օգնիր, որ միշտ մոտդ մնամ: Ամեն:

**Կենտրոնացի՛ր Հիսուսի վրա և քաջալերի՛ր ուրիշներին, որ նույնը ամեն:**

Կարդա՛

Փիլիպ. 4. 10-13

Ամեն բան կարող եմ ինձ գորացնող Քրիստոսով:  
Փիլիպ. 4.13

## Մեզ պաշտպանող վահանը

**Մ**եր եկեղեցին ցավալի կորուստ ունեցավ: Մեր երեսուներեկ տարեկան տաղանդավոր հոգևոր հովիվ Փոլը նավաբեկության զոհ դարձավ: Փոլն ու իր տիկին Դրրոնդան անձանոթ չէին ցավին, հողին էին հանձնել մի քանի չծնված մահացած երեխաների: Եվ հիմա այդ փոքրիկների շիրիմների կողքին մի նոր շիրմաթումբ էր ավելանալու: Այս ընտանիքի ցավալի պատմությունը ծանր հարված էր բոլոր նրանց ճանաչողների ու սիրողների համար:

Դավթին անձանոթ չէին անձնական ու ընտանեկան դժվարությունները: 3-րդ սաղմոսում նա ճնշված է իր որդի Աբեսաղոմի ապստամբությունից: Սակայն փոխանակ մնալու և պայքարելու՝ նա նախընտրեց թողնել իր գահն ու հեռանալ (Բ. Թագ. 15.14): Թեև շատերը մտածում էին, որ Աստված մոռացել է նրան (Սաղմ. 3.3), սակայն Դավիթը գիտեր, որ Տերն իր օգնականն է, իր փառքը և գլուխը բարձր պահողը (Հմ. 4) և օգնություն համար նրան դիմեց: Նույնը արեց նաև Դրրոնդան: Իր վշտի մեջ, երբ մարդիկ եկել էին իրեն ցավակցելու, նա Աստծուն դիմեց մեղմաձայն մի աղերսով, որը ցույց էր տալիս նրա մեծ վստահությունը Տիրոջ նկատմամբ: Երբ բժիշկների ախտորոշումը հուսադրող չէ, երբ նյութական ճնշումները չեն թեթևանում, երբ խզված հարաբերությունները վերահաստատելու մեր ջանքերը ձախողվում են, երբ մահը մեզ վշտացնում է, թող որ մենք ուժ ունենանք ասելու. «Բայց դու, Տե՛ր, իմ օգնականն ես, իմ փառքը և գլուխս բարձր պահողը» (Սաղմ. 3.4):

**Աղոթք** - Երկնավոր Հայր, թեև կյանքս կարող է դժվարություններով ու նեղություններով լի լինել, օգնի՛ր տեսնել, որ Դու ինձ մխիթարում ես: Ամեն:

**Կյանքի ճնշումներից կարող ենք ընկրկել,  
սակայն վստահենք մեզ պաշտպանող Աստծուն:**

### Կարդա՛ր Սաղմոս 3

Բայց դու, Տե՛ր, իմ  
օգնականն ես, իմ  
փառքը և գլուխս  
բարձր պահողը:  
Սաղմ. 3.4



## Աստծո աչքով՝ որակյալ

**Ք**ուրե՛ջն ավարտելուց հետո տեխնոլոգիական խորհրդատվական ընկերություններից մեկն ինձ աշխատանքի ընդունեց, չնայած ես համակարգչային օրենքներով նույնիսկ մի տող չէի կարողանում գրել և շատ քիչ բան գիտեի գործի մասին: Սկսնակ աշխատողի հաստիքի համար հարցազրույցի ժամանակ հասկացա, որ ընկերությունը փորձառությունից ավելի կարևորում է անձնական հատկանիշները՝ խնդիրները լուծելու հատուկները, լավ դատողությունը և մարդկանց հետ աշխատելու կարողությունը: Ընկերությունը վստահ էր, որ ընտրված թեկնածուներին հետագայում կարելի է

Կարդա՛  
Ծննդոց 6. 9-18

Նոյը սիրելի եղավ  
Աստծուն: ԾՆՆ. 6.9

արդեն անհրաժեշտ հատուկությունները սովորեցնել: Նոյը տապանը շինելու մեծ գործի համար չունեի անհրաժեշտ տվյալները. նա ոչ նավաշինարար էր, ոչ ատաղձագործ: Երբ Աստված որոշեց՝ ինչպես վարվել այդ օրերին աշխարհում եղած չարի հետ, Նոյին ընտրեց, որովհետև նա «կատարյալ և արդար մարդ էր իր ազգի մեջ»: Նոյը սիրելի եղավ Աստծուն» (Ծննդ. 6.9): Աստված արժևորեց սովորելու նրա կամքն ու հնարավորությունը, իր շուրջն եղած ապակա-նություն դեմ պայքարելու և ճիշտ քայլեր անելու ունակությունը:

Երբ մեր կյանքում Աստծուն ծառայելու առիթներ լինեն, հնարավոր է, որ մենք մեզ հարմար չհամարենք: Բարեբախտաբար, Աստծուն անպայման մեր ձիրքերը չեն հետաքրքրում: Նա նայում է մեր նկարագրին, Իր հանդեպ մեր ունեցած սիրոն և Իր կամքին վստահելու մեր պատրաստակամությունը: Երբ Սուրբ Հոգու միջոցով այս հատկանիշները զարգանում են մեր մեջ, Նա կարողանում է մեզ օգտագործել մեծ կամ փոքր ձևերով Իր ծրագիրը աշխարհի վրա իրականացնելու համար:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, տու՛ր ինձ Քեզ ծառայել կամեցող սիրտ: Զինի՛ր ինձ այն ուղորտներում, որտեղ փորձառություն չունեմ և ինձ լցրու՛ Քո Հոգով: Ամեն:

**Աստված պատրաստ է մեր մեջ եղած տկար մասերը  
գորացնել: Իսկ մենք պատրա՞ստ ենք:**

## Կեղծ ապահովության տեղեր

**Ե**րբ մեր շունը դեռ փոքր էր, շատ վախկոտ էր, դժվարությամբ էի դուրս հանում տնից : Մի օր, երբ նրան տարել էի զբոսանքի, անզգուշով թյուն ունեցա կապը արձակել: Շունը վազելով ետ գնաց ու մտավ իր ապահով անկյունը:

Մի մարդու հիշեցի, որին հանդիպել էի օդանավում: Երբ ինքնաթիռը դեռ թռիչքուղու վրա էր, նա ներողություն խնդրեց ու ասաց, որ թռիչքի ժամանակ ինքը պետք է անպայման հարբի: «Ինձ թվում է, որ այնքան էլ չեք ուզում գինովնալ», - ասացի: «Ձեռ ուզում, - ասաց նա, - բայց միշտ էլ վերադառնում եմ խմիչքին»: Նա խմեց, և ցավալի էր տեսնել, թե ինչպես էր կինը փորձում հարբած ամուսնուն դուրս բերել ինքնաթիռից: Խմիչքը նրա համար ապահովություն էր, բայց իրականում այն ապահովությունից շատ էր հեռու: Հիսուսն իր առաքելությունն սկսեց այս խոսքով. «Հասել է ժամանակը, և մոտեցել է Աստծո թագավորությունը. ապաշխարեցե՛ք ու Ավետարանին հավատացե՛ք» (Մարկ. 1.15): «Ապաշխարել» նշանակում է ետ դառնալ: Իսկ «Աստծո թագավորությունը» իր սիրո օրենքն է: Փոխանակ վազելով զնալու այնտեղ, որտեղ բանտվում ենք, կամ ընկնում վախերի ու մոլությունների ազդեցության տակ, Հիսուսն ասում է, որ մենք կարող ենք լինել Աստծո իշխանության ներքո, որը մեզ սիրով առաջնորդում է դեպի նոր կյանք ու ազատություն:

**Կարդա՛ր  
Մարկոս 1. 9-15**

...մոտեցել է Աստծո թագավորությունը. ապաշխարեցե՛ք ու Ավետարանին հավատացե՛ք: Մարկ. 1.15

Հիմա շունս ուրախությամբ է գնում զբոսայգի: Ազդեցում եմ, որ օդանավի մարդն էլ գտնի այդ նույն ուրախությունը՝ թողնելով իր կեղծ ապահովության տեղը:

**Աղոթք** - Տեր Զիսուս, ների՛ր ինձ, երբ կյանք և ուրախություն փնտրելով քեզանից հեռու փախչեմ: Զիմա՛՛ ետ եմ դառնում ու կյանքս Քեզ եմ հանձնում: Առաջնորդի՛ր ինձ դեպի իսկական ազատություն: Ամեն:

**Կարող ես կեղծ ապահով տեղում լինել, հավատքով դարձի՛ր Աստծուն:**

## Հավատի կեցվածք

**Դ**եմոնոզ Դոսը Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ ամերիկյան բանակին միացավ որպես ոչ մարտիկ: Քանի որ նրա կրոնական հավատամքը արգելում էր զենք կրել, նա բանակում ծառայեց որպես բժիշկ: Մի ճակատամարտի ժամանակ, երբ թշնամին անընդհատ կրակահերթի տակ էր պահում իրենց, նա կարողացավ իր ստորաբաժանումից յոթնասուներեք վիրավոր զինվորի փրկել: Նրա պատմությունը հիմք է դարձել «Բարեխիղճ առարկողը» վավերագրական և Հեքսո Ռիչի նկարահանած գեղարվեստական կինոնկարի համար:

Քրիստոնեական հավատի հերոսների ցանկն ունի Աբրահամի, Մովսեսի, Դավթի, Եղիայի, Պետրոսի և Պողոսի նման քաջեր: Բայց կան նաև Հովսեփ Արիմաթիացու և Նիկոմեդոսի նման չփառաբանված հերոսներ, որոնք հրեա առաջնորդների մեջ իրենց դիրքը վտանգելով՝ վերցրին Քրիստոսի անշնչացած մարմինը և պատշաճ թաղում արեցին (Հովհ. 19. 40-42): Սա քաջարի արարք էր: Ավելի տպավորիչ է, որ նրանք հավատի այս կեցվածքը ցուցաբերեցին Հիսուսի Հարուժյունից առաջ: Ինչու<sup>՞</sup>: Հնարավոր է, Հիսուսի մահվան հանգամանքներն ու դրան հաջորդող դեպքերը (Մատթ. 27. 50-54) բյուրեղացրին այս վախեցած աշակերտների նոր ծնված հավատը: Թող որ մենք էլ հետևենք նրանց օրինակին ու քաջուժյուն ցույց տանք, որպեսզի կարողանանք ուրիշների համար մեզ վրա վերցնել Աստծո հանդեպ հավատի վտանգը:

**Աղոթք** - Հայր, ներիր ինձ, երբ հաճախ վախենում եմ հավատս արտահայտել: Օգնիր, որ կարողանամ արիաբար ցույց տալ հավատս: Ամեն:

**«Քաջությունը վախի բացակայությունը չէ, այլ նրա նկատմամբ տարած հաղթանակն է»** Նելսոն Մանդելա

### Կարդա՛ր Հովհաննես 19.38-42

Եվ Հիսուսի մարմինը վերցրին, այն խուկների հետ կտավներով պատեցին:

Հովհ. 19.40

## Ապրիր այնպես, ասես Հիսուսը գալիս է

**Ն**երշնչված եմ երգիչ Թիմ Մաքգրոուի «Ապրի՛ր, ասես մեռնում ես» երգով: Դրանում Թիմը նկարագրում է մի շարք գայթակղիչ բաներ, որոնք ներառել է «ցանկությունների ցուցակում», երբ բժիշկներից ստացել է իր առողջության մասին վատ լուրը: Նա նաև որոշել է սիրել ու ներել մարդկանց, քնքշությունամբ խոսել նրանց հետ: Երգը հանձնարարում է լավ ապրել, այնպես, ասես մեր կյանքը շուտով ավարտվելու է:

Այս երգը մեզ հիշեցնում է, որ մեր ժամանակը սահմանափակ է, և շատ կարևոր է վաղվան չթողնել այն, ինչը կարելի է այսօր անել: Սա հրատապ է հատկապես Հիսուսին հավատացողների պարագայում, որոնք համոզված են, որ Հիսուսը երբեք կարող է վերադառնալ (հնարավոր է՝ հենց այս նախադասությունը կարդալու պահին): Հիսուսը մեզ կոչ է անում պատրաստ լինել և ոչ թե ապրել հինգ «հիմար» կույսերի նման, որոնք պատրաստ չէին, երբ փեսան վերադարձավ (Մատթ. 25.6-10):

Սակայն Մաքգրոուի երգը ամբողջ պատմությունը չի պատմում: Մենք, որ հավատում ենք Հիսուսին, վաղվա օրերը մեզ համար բնավ չպիտի պակասեն: Հիսուսն ասում է. «Ես եմ հարությունն ու կյանքը. ինձ հավատացողը թեկուզ մեռնի էլ, կապրի: Եվ ամեն ոք, ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի» (Հովհ. 11.25-26): Մեր կյանքը, որ իր մեջ է, բնավ չի վերջանալու: Հետևաբար, մի՛ ապրիր որպես մահկանացու: Որովհետև դու չես մեռնելու: Ընդհակառակը՝ ապրի՛ր այնպես, ասես Հիսուսը գալիս է: Եվ նա կգա:

**Աղոթք** - Տե՛ր, առաջ եմ նայում այն օրվան, երբ Դու պիտի վերադառնաս: Թող որ ինձ տրված ժամանակն օգտագործեմ Քեզ պատվելու և ուրիշներին ծառայելու համար: Ամեն:

**Ապրի՛ր այնպես, ասես Տերը ամեն պահի կարող է գալ:**

Կարդա՛ր  
Մատթեոս 25. 1-3

Արդ արթո՛ւն  
կացեք, որովհետև  
չգիտեք ո՛չ օրը, ո՛չ  
ժամը:  
Մատթ. 25.13

## Պարզապես գրասենյակը

**Դ**իտուում էի Հյուսիսային Անգլիայի Լենքշիր շրջանի կանաչ բլուրներին շարքը, որոնց շուրջը փռված էին ոչխարները, իսկ նրանց կողքին քարե պարիսպներ էին: Պայծառ երկնքում լողում էին բամբակի քուլայի նման ամպերը: Հիացած այս պատկերով մտաբերեցի ճամբարում աշխատող մի տիկնոջ, որն այս տեսարանի մասին ասում էր. «Գիտե՞ս, առաջ ես բոլորովին չէի նկատել: Տարիներով այստեղ ենք ապրել, իսկ երբ մենք ագարակապաններ էինք, այստեղ ուղղակի գրասենյակն էր»:

Մենք հաճախ չենք նկատում մեր շուրջը եղած պարզեցումները, մեր առօրյայի մաս դարձած գեղեցկությունը: Այդպես հաճախ էլ կարող ենք չնկատել Աստծո գործածած գեղեցիկ միջոցները, որոնցով Նա գործում է մեր մեջ ու մեր շուրջը: Սակայն Հիսուսին հավատացողները կարող են Աստծո Հոգուց խնդրել, որ իրենց աչքերը բանա, որպեսզի կարողանան հասկանալ, թե Նա ինչպես է գործում մարդկանց կյանքում: Պողոսը Եփեսոսի եկեղեցու հավատացյալների համար Աստծուն խնդրեց, որ «իրեն ճանաչելու համար նրանց տա իմաստություն և հայտնություն հոգի» (Եփ. 1.17): Նա աղոթեց, որ նրանց սրտերը լուսավորվեն ճանաչելու համար Աստծո տված հույսը, խոստացած ապագան ու զորությունը (Հմ. 18-19):

Աստծո տված Քրիստոսի հոգու պարզեցում կարող է զգաստացնել մեզ, որպեսզի տեսնենք Նրա կատարած գործը մեր մեջ ու մեր միջոցով:

**Աղոթք** - Տե՛ր, ցուցաբերո՛ւ լույսդ ինձ վրա և բա՛ց աչքերս, որպեսզի ավելի լավ հասկանամ Քո բարությունն ու շնորհքը: Ամեն:

**Աստված միշտ գործում է մեր շուրջը:**

**Այդ բանը տեսնելու համար հավատի աչքեր են պետք:**

### Կարդա՛ր Եփեսացիներ 1.15-23

Աղոթում եմ..., որ ձեր սրտերի աչքերը լուսավորի, և ճանաչեք, թե ի՞նչ է նրա կոչման հույսը: Եփես. 1.18

## Ո՞վ եմ ես

**Ռ**ավը սիրում էր իր գործը, բայց վաղուց ի վեր մղում էր զգում **Ռ**մեկ այլ բանի հանդեպ: Նա ուզում էր իրականացնել իր երազանքն ու միսիոներությունը զբաղվել: Սակայն ինչ-որ կասկածներ ուներ և բարեկամներից մեկին ասաց. «Ես դրան արժանի չեմ: Միսիոներության հոգաբարձու մարմինը ինձ լավ չի ճանաչում: Ես բավարար չափով լավը չեմ»:

Մովսեսի անունը հիշելիս մտաբերում ենք առաջնորդություն, զորություն և Տասը պատվիրանները՝ հաճախ մոռանալով, որ նա փախավ անապատ, երբ մի եգիպտացու էր սպանել: Անտեսում ենք որպես փախստական անապատում նրա անցկացրած քառասուն տարիները, բարկանալու թուլությունը և Աստծոն այո ասելու համար դժգոհությունը: Երբ Աստված երևաց նրան իր ժողովրդին Եգիպտոսից հանելու հրամանով (Ել. 3.1-10), Մովսեսը դիմադրում էր՝ մտածելով, թե ինքը չէ այն մարդը, որ կարող է այդ բանն անել և ասաց. «Ես ո՞վ եմ, որ իսրայելացիներին հանեմ Եգիպտացիների երկրից» (Հմ.11): Հետո Աստված Մովսեսին ասաց, թե ով է ինքը. «Ես այն Աստվածն եմ, որ է» (Հմ.14): Մեզ համար անհնար է բացատրել Աստծո այդ խորհրդավոր անունը, որովհետև Աստվածն ինքն է Մովսեսին նկարագրում իր հավիտենական ներկայությունը:

Մեր թուլությունները զիտակցելը օգտակար է: Բայց դրանք իբրև պատճառաբանություն գործածելը իրեն վիրավորել կնշանակի: Հետևաբար մեր հարցը պետք է լինի ոչ թե «Ո՞վ եմ ես», այլ «Ո՞վ է ես եմ-ը»:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, հաճախ կասկածում եմք, թե Դու չես կարողանա մեզ նման մարդկանց օգտագործել: Սակայն Որդուդ ուղարկեցիր մեզ նման մարդկանց համար մեռնելու: Օգնի՛ր, որ պատրաստ լինենք ընդունելու Քո տված մարտահրավերները: Ամեն:

**Եթե դու քեզ անկարող ես զգում, նայի՛ր Աստվածաշնչի հերոսներին, որոնք մեզ նման թույլ մարդիկ էին:**

Կարդա՛ր  
Ելք 3.10-17

Ես այն Աստվածն եմ,  
որ է: Ելք. 3.14

## Պատրաստի դեղ

**Ե**ս սկսեցի նոթագրումներ անել, երբ զբոսավարը բացատրու-  
թյուններ էր տալիս Բահամյան հինավուրց անտառի մասին:  
Նա ասաց, որ զգուշանանք թունավոր ծառերից, որովհետև  
դրանք սև բուսահյութ են արտազատում, որը ցավոտ ու քոր  
առաջացնող բորբոքում է առաջացնում: -Բայց շատ պետք է  
մտահոգվել, որովհետև դրա հակաթունը  
կարելի է գտնել անմիջապես նույն թու-  
նավոր ծառի կողքին, -հանգստացրեց նա  
ու ասաց.«Կտրում ես էլեմի ծառի կարմիր  
կեղևը, դրա հյութը քսում բորբոքված  
տեղը, և վերքը արագ ապաքինվում է»:  
Զարմացած էի, չէի պատկերացնում, որ  
անտառում կարելի է գտնել փրկության  
այդպիսի միջոց: Միաժամանակ էլեմի  
արևադարձային ծառի մեջ ես Հիսուսին տեսա: Նա պատրաստի  
միջոցն ու դեղն է մեղքի թույնի դեմ: Հիսուսի արյունը ևս այդ  
ծառի կարմիր կեղևի պես բուժիչ է: Եսայի մարգարեն հասկացավ,  
որ մարդը բուժման կարիք ունի: Նա խոստացավ, որ այդ բուժու-  
մը գալու է մի «տառապող մարդու» միջոցով, որը մեր բոլոր հի-  
վանդություններն ու անօրինություններն իր վրա է վերցնելու  
(Ես. 53:4): Այդ մարդը Հիսուսն է: Հիվանդ էինք, բայց Հիսուսը  
պատրաստ էր մեր փոխարեն վիրավորվելու: Երբ Իրեն հավա-  
տանք, կբուժվենք մեղքի հիվանդությունից (հմ.5): Կարող է պա-  
տահել, որ ամբողջ կյանքն անցկացնենք սովորելու համար, թե  
ինչպես ապրենք նրանց նման, ովքեր բուժվել են: Տեսնելու մեր  
մեղքերը և մերժելու դրանք՝ ստանալով մեր նոր ինքնությունը:  
Եվ այս բանը հնարավոր է միայն Հիսուսի շնորհիվ:

### Կարդա՛ Եսայի 53. 1-6

Բայց նա խոցվեց  
մեր մեղքերի հա-  
մար... մեր խաղա-  
ղության համար  
նա՛ պատիժ կրեց:  
Եսայի 53. 5:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ, որ մեր փոխարեն մեռար ու  
մեր բոլոր մեղքերը Քեզ վրա վերցրիր: Օգնի՛ր, որ այս հավա-  
տով Քեզ մոտ գանք՝ մեր մեղքերի թողության համար: Ամեն:

**Որտեղ որ մեղքը կա, Հիսուսն այնտեղ է՝  
պատրաստ մեզ փրկելու:**

## Նյութերի ցանկ

Աղոթք .....	0 գ. 28, սեպ. 3
Ամուսնություն.....	0 գ. 6
Անարդարություն.....	Հուլ. 26, օգ. 20
Անձկություն.....	Հուլ. 2
Ապաշխարություն.....	Հուլ. 3, սեպ. 25
Առանձնություն.....	0 գ. 17
Առաջնորդություն.....	Հուլ. 26, օգ. 8, սեպ. 2
Ատվածաշունչ.....	Հուլ. 4, օգ. 22, սեպ. 8
Աստծո հավատարմությունը.....	Սեպ. 1
Աստծո սերը.....	Հուլ. 9,13, օգ. 1,6,9
Աստծուն սպասել.....	Հուլ. 21
Աստծու վարդապետությունը.....	Հուլ. 10
Աստծուն վստահել.....	Հուլ. 7,8,16,21,22, օգ. 11,14,18,24,25,30, սեպ. 13,23,26
Ավետարանչություն.....	Հուլ. 19, օգ. 4, սեպ. 23
Գոհունակություն.....	Հուլ. 19, օգ. 4, սեպ. 23
Դրախտ.....	Հուլ. 14,25, օգ. 19, սեպ. 9
Եկեղեցական կյանք.....	0 գ. 17
Զբաղմունք.....	Հուլ. 29
Թշնամիներ.....	0 գ. 20
Ինքնանկար.....	Հուլ. 13
Խոստովանություն.....	0 գ. 7
Ծառայություն.....	Հուլ. 1,6,28, օգ. 12,13,23,29, սեպ. 6,13,24,27,29
Կեղծում.....	0 գ. 16
Կյանքի պայքարներ.....	0 գ. 9,18, սեպ. 23
Հավածանք.....	Հուլ. 22, սեպ. 14, 26
Հավատացյալների հարություն.....	Հուլ. 25, սեպ. 5
Հավատք.....	Սեպ. 26
Հարաբերություններ.....	Հուլ. 26



Հավիտենական կյանք.....	Սեպ. 9
Հեզուլթյուն.....	Հուլ. 24, սեպ. 7
Հնազանդություն.....	Հուլ. 9, սեպ. 8
Հոգեկան պարզևներ.....	Օգ. 12,29
Հոգևոր աճում.....	Հուլ. 12,27,31, սեպ. 22
Հոգեկան բարեփոխություն.....	Հուլ. 30,31, օգ. 21, սեպ. 11
Հրեշտակներ.....	Հուլ. 10
Հույս.....	Օգ. 30, սեպ. 1
Հուսահատություն.....	Հուլ. 9
Մահ.....	Սեպ. 5
Մատակարարություն.....	Հուլ. 18
Մեղք.....	Հուլ. 3,27,29,30, օգ. 6,7,16,26. սեպ. 3,30
Միաբանություն.....	Սեպ. 15
Մկրտություն.....	Սեպ. 17
Նյութապաշտություն.....	Հուլ. 15, օգ. 3
Պաշտամունք.....	Հուլ. 14,19, օգ.30
Սեր ուրիշների հանդեպ.....	Հուլ. 18, օգ. 5,28, սեպ.6,16
Ստեղծագործություն.....	Սեպ. 19
Սուրբ Հոգի.....	Օգ. 2, սեպ. 28
Վախ.....	Օգ. 29, սեպ. 10,25
Վիշտ.....	Հուլ. 6, սեպ. 5
Տանջանք.....	Հուլ. 7,25,28 օգ. 11
Ցեղապաշտություն.....	Սեպ. 10
Փորձություն.....	Հուլ. 15,29, սեպ. 3.18
Փրկություն.....	Հուլ. 11,24, օգ. 22,31, սեպ. 17,30
Քաջակերություն.....	Օգ. 10,15
Քրիստոս Փրկիչ.....	Հուլ. 4,17,19, սեպ. 4,21
Քրիստոսի հետ հաղորդակցություն.....	Սեպ. 30
Քրիստոսի նման ապրել.....	Հուլ. 5, օգ. 13, սեպ. 7,12,16
Քրիստոսի վերադարձը.....	Սեպ. 27

**Կարևոր ազդ**

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով՝

**Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության  
Հայաստանի մասնաճյուղ**

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռախոս՝ (010) 54-35-76, (010) 54-35-78  
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am  
Կայքէջ՝ www.amaa.am

**Արցախ**

**ք. Ստեփանակերտ**

**Ալեք Մանուկյան 7<sup>ա</sup>**

**Հեռ. (374) 94 52 75; 95 02 95**

---

Անուն, ազգանուն .....

Հասցե.....

.....

Հեռախոս.....

---



Գրքույկը ստանալու համար դիմել Ամերիկայի Հայ  
Ավետարանչական ընկերակցության Հայաստանի  
մասնաճյուղ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլփոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)

Էլկայք՝ [www.amaa.am](http://www.amaa.am)